



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

183x1

55μm int-p.-Qpfgruppe
Эпифизиотип юн

л - 1886.

391.99
S-38



2000' C.R. 20.
SPRING
2000' C.R. 20.
SPRING

891.99

ԱԴ-38

ար

ԶՐԿԱՆՔԻ ԶՈՀ

6963

ԴՐԱՄԱ

ԶՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՈՎ

ԵՒ

ԱՅՅ ՊԱՏԿԵՐՈՎ



100/
4089

ՀԵՂԱԿԱԿՈՒԹԻՒՆ

ԷՄԻՆԻ ՏԵՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ



1886

Է. ՏԵՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՅԻ ՊՊԱՐՄԱՆ-Տ:

ԵՐԵՒԱՆ



4208

ԻՒԹ ՍԻՐԵԼԻ

ԱՐԴՅՈՒՆՆԱԳ ՆԻԿՈՂԱՑՈՒԱՆ

ՄԵԼԻՔ-ՓԱՐՍԱԴԱՆԵԱՆՑԻՆ

ՆՈՒԽՐՈՒՄ Է

ՔԵՂԻՆԱԿԸ

Дозволено Цензурою. Тифлисъ 30 Апрѣля
1886 года

2003

ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ Է ԵՐԵՒԱՆՈՒՄ 2 ՀՈԿԹԵՐԵՐԻ 1883 ԹՈՒՅ.

ՏԵՍԱՐԱՆ

1

Գուշտակին հրապարակ
Խարդախութիւն:

2

Յունիվուլի Դաբակ
Նոր լուր և նոր միտք:

3

Սրեւանիւ Ռեւեւս
Անելանելի զրութիւն և չար նախազգացմունք:

4

Տղարանի Հանդուր
Դէմ առ դէմ:

5

Մաս գերանիւր սէնեան
Այ քեզ բան:

6

Յունիվուլի Դաբակ
Արժանի վարձ և ԶՐԿԱՆՔ ԶԱՀ:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՆԻԿԻԾ ԵԱԼԿՈՒԼԻՉ ՅՈՎԱԿԻՄՈՎ,
Հարուստ վաճառական, խանութների, թու-
թոնի ֆարբիկայի և տպարանի տէր: Հա-
գուստը մաքուր ալիսալուղի վերայ հազնում
է, սէլթուկ: 55 տարիներից անց. . . ո. Յ. Խաչունիւն

ՍՏԵՓԱՆԻԿ ՊՈՂՈՍԵ ԱՆՏ,
Առաջ տպարանական ընկերը. նեղոթեան
չղիմացող և շոտ վհատող: Հագուստը
ներպական: 28 տարեկան. . . ո. Ա. Փարագունեան

ՎԵ ԲԳԻՆԻ,
Առրաջ ամուռինը 13 տարեկան. . . ո. Ա. Արտաված առաջին:

ԳԻՐԱՍԻՄ ԳՐԻԳՈՐԻՉ ԿԱՐԱՊԵ ՏՈՎ,
Ստեփանիկի աները: Հարուստ վաճառա-
կան, ծանր իսօտող: Հագուստը վաճառակա-
նական: Յովակիմովին հասակակից . . . ո. Դարեն

ԱՂԱՋՈՑՈՎ,
Յովակիմովի ֆարբիկայի ընկերը: Կարճա-
հասակ, լղար, աչքերը կիսաբաց: Հագուս-
տը ճին և կեղոսու և շատ տեղ ճնշուած
և կարկատած. — ալիսալուղ և սերթուկ:
35 տարեկան

ԺՈՒԺՈՎ,
Յովակիմովի հեռաւոր բարեկամ: Հարուստ
և թեթեամիտ: Հագուստը ներպական —

պանթէ և ցիլինդր. ձեռնոցներ և ձեռա-	
փայտ: 27 տ.	դ. Ն-Հ-Ե-Ր-Ե-Ւ-Ն
Ա.Պ.Բ.Գ.	դ. Վ. Մ-Ր-Դ-Ե-Ւ-Ն
Գ.Ի.Ա.Շ.Ա.Ր	
ՏՊԻԶ	դ. Բ-Գ-Լ-Ե-Ւ-Ն
ՏՊԻԶԱՐԿ	դ. Վ. Մ-Ր-Դ-Ե-Ւ-Ն
ՄՊԻԶԱՐԿ	դ. Ո. Խ-Ա-Ր-Բ-Լ-Ե-Ւ-Ն
ՊՐԻՍՏԱՒԻ	№ №
1	դ. Ա-Ր-Ջ-Ա-Ն-Ի
2	դ. Յ-Ա-Վ-Բ-Ե-Ւ-Ն
3	դ. Տ-Ա-Կ-Ի
4	դ. Բ-Գ-Լ-Ե-Ւ-Ն
ՖԱԲՐԻԿԱՑԻ ԱՇԱԿԵՐԸ	դ. Մ-Ե-Լ-Ի+Ո-Ա-Գ-Ե-Ւ-Ն
ԳԻՆԵՑԱՆ ԱՇԱԿԵՐԸ	դ. Խ-Ա-Ր-Բ-Լ-Ե-Ւ-Ն
ՊՈԼԵՑԻԱԿԱՆ ՆԵՐ	№ №

Անյօշ պատռհում է կողմանուն նահանգուհուն քաղաք-
ներից մէջում:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

ԱՅՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՄԵԶ ԽԱՂԱՑՈՂՆԵՐ

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

ՄՏԵՓԱՆԻԿ

ԱՂԱԶԱՏՈՎ.

ԿԱՐԱՊԵՏՈՎ.

ԱՂԱԲԵԳ

ՏՊԻԶ

ՄՐԱԶԱՐԿ

1
2 } սրիկաներ
3
4 }

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ 1

ՏԵՍԱՐԱՆ 1

ԽԱՐԴԱԽՈՒԹԻՒՆ.



Եսարանը ներկայացնում է
քաղաքային հրապարակ: Աջ
կողմում խանութներ, ձախ
—գեղեցկաշէն տներ: Խորքը
բաժանվում է երկու մասն: Չախակող-
մեան մասում երևում է քաղաքային
այգին (բուլվար), իսկ աջակողմեան — քա-
ղաքի մի մասը և նորանից յետոյ հին
բերդի փլատակներ: Հորիզոնում — բար-
ձրը և ձիւնապատ լեռաներ:

ՏԵՍԻԼ Ա.

ՅՈՎԱԿԻՄՈՎ, և ՍՏԵՓԱՆԻԿ, զալիս են խոսելով:

ԱՏԵՓԱՆԻԿԻ:

Ուրեմն, Նիկիտ Եակուլիչը դուք արդէն վճռել էք ծախել տպարանը:

ՅՈՎԱԿԻՄՈՎ:

Անպատճառ: Դու ինքդ ասեցիր, որ տպարանական գործը օր օրի վրայ պահառում է:

ԱՏԵՓԱՆԻԿԻ:

Այո, պակասում է, որովհետեւ Վարդանը նոր տըպարան է բերել և նա զանազան խաբերայութիւններով գրաւում է դէպ' ինքը գործառերին:

ՅՈՎԱԿԻՄՈՎ:

Տեսա՞ր. սրանից յետոյ էլ ինչ տպարան. առանց էն էլ ես զզուել եմ դրանից:

ԱՏԵՓԱՆԻԿԻ:

Դուք որ կամենում էք ծախել, ապա ե՞ս ինչ անեմ: Ե՞ս ինչով ապրեմ: Ես գոնէ այսքան կ'խոստանամ, որ չեմ թողնիլ իմ գործս նա վերցնի. Ես կը տշխատեմ, ես կ'ապացուցանեմ, որ նա մեր դէմ ոչ ինչ է կարող անել և առաջուայ պէս մենք մեր գործը կ'շարունակենք:

ՅՈՎԱԿԻՄՈՎ:

Չէ, անկարելի բան է. ես պէտք է ծախեմ: Հազեր լաւ ուզող էլ կայ:

ԱՏԵՓԱՆԻԿ

Դուք զիտէք, որ ես կարող եմ չհամաձայնել:

ՅՈՎԱԿԻՄՈՎ:

Հը... սպասիր. դու ինքդ չես ասում թէ հիմայ գործը պակասել է՞: Ուրեմն էլ ինչո՞ւ ենք տպարանը պահում: մենք մերը կ'ծախենք, յետոյ թող Վարդանի հոգին դուս գայ. տեսնենք նա ինչպէս կը կառավարուի. թէ պարտքը չ'խեղզեց նրան, ես էս քիթս կ'կտրեմ: (Ցոյց պալով ի-ո ժիլլ):

ԱՏԵՓԱՆԻԿ

Մե՞զ ինչ թէ նա կ'խեղզուի պարտքում: իմքաղցած փորի՞ս ինչ բաւականութիւն: Բայց շատ բարի. այդ ձեր ասած մարդը, որ կամենում է գնել մեր տպարանը—ինչ է տալիս:

ՅՈՎԱԿԻՄՈՎ:

Հազար հինգ հարիւր մանէթ:

ԱՏԵՓԱՆԻԿ, զարմացած:

Եւ դուք համաձայն էք:

ՅՈՎԱԿԻՄՈՎ:

'Ի հարկէ: Նազդ փող է, էլե. կզնենք ջերներա:

ԱՏԵՓԱՆԻԿ

Բայց միայն կէս մասն էք տուել ինձ 1500ի. ուրից ձեզ գեռ պարտ եմ երկու տարով 500 մասէթ. իսկ հիմայ դուք ծախում էք ամրող ջ տպարանը 1500ի: Զարմանալի բան: Վերջապէս ինձ ինչ է ֆնալու. —ոչինչ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

ԻՆՉՈՒ. 750Ը ՔՊՆՆ Է, ԷԼԵ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ա.Յ. բայց այդ 750ից պիտի ձեզ տամ 500 մանէթ պարտքս: Ա.Յ. գիշու չէ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ի հարկէ: Դէ որ ստանաս կտաս, ԷԼԵ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ա.Յ., տալը կտամ: իսկ ի՞նձ ինչ է մնում - 250 մանէթ. չէ՞ որ այդ 250 էլ պիտի տամ ինչպէս և դուք թղթեղէնի պարտքներս: որովհետեւ, ինչպէս ձեզ յայտնի է, 500 մանէթ ենք տալու թղթատէրին:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Էդ, ասենք, երկուսով պէտք է տանք:

ՍՏԵՓԱՆԻԿ

Բայց 1500ից պիտի հանենք, թէ ոչ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, առանձին:

Ա.Յ. թէ տեղն եմ բերել հա:

ՍՏԵՓԱՆԻԿ

Աւելի պարզն ասենք: դուք կամենում եք, որ այս չորս տարուայ հազար ու մի դժուարութիւններով աշխատածս, որով ժամանակին գուցէ կարողանայի ապագաս ապահովացնել, զուր ի զուր տեղը, ձեր կամայականութեան շնորհիւ, կորցնեմ և ինքս մնամ ձեռքերս ծալած, դառն աղքատութեան մէջ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, առանձին:

ՈՇՐ է թէ այդ օրը կարողանայի գցել:

ՍՏԵՓԱՆԻԿ, արտով:

Ես երբէք չեմ համաձայնիլ և իրաւունք ունեմ չհամաձայնելու:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Դէ որ էդպէս է իմ մասս էլ դու առ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Կ'զնեմ, եթէ փողը վճարելու համար միջոց տաքինձ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Զէ՞ չեմ կարող ինձ փող է հարկաւոր: Հա... (մասնաւմ է) եթէ կուզես՝ ես մի լաւութիւն կարող եմ անել. ես իմ մասս քեզ կ'տամ 1200ի:

ՍՏԵՓԱՆԻԿ, զարմացած:

Ինչպէս թէ... դուք կամենում եք տալ ամբողջ տպարանը 1500ի:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Հա'. եթէ բոլորը միանգամից ծախեմ, էն ժամանակ միայն 1500 մանէթ... իսկ...

ՍՏԵՓԱՆԻԿ

Իսկ դուք իրաւունք չունէք բոլորը մի անդամից ծախել: Դուք միայն ձե՛ր մասը կարող եք ծախել և այն իմ համաձայնութիւնով միայն:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Մեր պայմանում էդ չի նշանակած:

ՍՏԵՓԱՆԻԿ

Թիցուք թէ չէ նշանակում։ մի՞թէ չենք խոսացել։
ՅՈՒԱԿԻՄՈՎ.

Կարծեմ դրս համար ոչինչ չենք խոսացել։
ՍՏԵՓԱՆԻԿ

Իսկ ես շատ լաւ յիշում եմ որ խոսացել ենք։
ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Չէ, էդպէս խօսք չեղել։

ՍՏԵՓԱՆԻԿ

Ուրեմն դուք չեք կամենում յիշել։ ուրեմն դուք
կամենում էք զրկել ինձ։

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Ասուած մի արասցէ, Ասուած մի արասցէ։

ՍՏԵՓԱՆԻԿ

Զեր խօսքերից այդպէս է երեսում։ Ուրեմն ինչ-
պէս ձեր մասին տամ 1200։ երբ, նոյն իսկ ձեր
խօսքով, 750 պիտի հասնի ձեզ։

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Ինչո՞ւ 750։

ՍՏԵՓԱՆԻԿ

Զեր խօսքը 1500 չէ։

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

1500... չէ։—2400 է։

ՍՏԵՓԱՆԻԿ

Դուք նո՞ր ասացեք, որ 1500 է տալիս այն մարդը։
ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Ես էդպէս բան չպէտք է ասած լինեմ։

ՍՏԵՓԱՆԻԿ, առանձին։

Սորա միաքը ուրիշ է. սա խարդախութիւն է ա-
նում... թէ ինչ նպատակով—չգիտեմ. ուրեմն յա-
կամայից պիտի համաձայնել։ (Յովելիմուկն)։ Նիկիտ
Եակուլիչ, զոնէ մի փոքր խղճացէք ինձ... Ինչո՞ւ էք
այդպէս նեղացնում։

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Ինչո՞ւ եմ նեղացնում քեզ, այ տղայ։ Դու գիտես
որ տպարանը ինձ վրայ 3000ից աւելի է նստել։
Տիմայ ես քեզ իմ մասս 1200ով եմ տալիս — բա-
ւական չե՞ս... Գո մասին 1500 չ'տուեցիր... ԱՌ,
էդպէս էք հա՛—էլ ես ձեզ հետ ինչ խոսեմ։

ՍՏԵՓԱՆԻԿ

Նիկիտ Եակուլիչ, կրկնում եմ ձեզ որ ես փող չը
ունեմ, իսկ ուրիշներից ինդրել՝ դժուարանում եմ.
ապա ինչպէս անեմ դուք ինքներդ մոածեցէք հը...
Եդ էլ դու գիտես Հա՛. ինչո՞ւ անօրիցդ չես ու-
զում։

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Եթէ տայ։

ՅՈՎԱԿԻՄՈՎ, առանձին։

'Ի հարկէ չի տալ։ (Նորան)։ Ինչո՞ւ չպէտք է
տայ... (Միջոց)։ Դու մի սպասիր ես նրան կ'տեսնեմ
և կ'համոզիմ։

ՍՏԵՓԱՆԻԿ

Շատ շնորհակալ կինեմ Նիկիտ Եակուլիչ։ Ես գիտեմ որ նա ձեր խօսքից չե անցնիլ. նա ձեզ շատ է պատվում։

ՅՈՎԱԿԻՄՈՎ, ինքնաբաւականութեամբ։

Ո՞վ է կարող խօսքիցս անց կենալ կամ չպատվելու մէկը ցոյց տուր ամբողջ քաղաքում՝ մէկը... գուբերնատը որ գուբերնատ է, նա էլ մինչև անգամ անցկացած օրը բարեեց ինձ, երբ ես նրան բարեեցի։

ՍՏԵՓԱՆԻԿ

Ի հարկէ Նիկիտ Եակուլիչ, բայց...

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Հը. Էլ ինչ կայ։

ՍՏԵՓԱՆԻԿ

Բայց մի փոքր զիջում արեք։ Դուք գիտեք որ ես ոտիցս մինչև դլուխս պարտքի մէջ թաղվում եմ։

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Զէ, չե. Դրա համար ոչնչ չեմ ուզում լսել. Ինչ լաւութիւն ասես՝ կանեմ անօրդ համոզելն ասես՝ կը համոզեմ, բայց 1200ից պակաս չեմ կարող համաձայնիլ և ոչ մի կերպով։

ՍՏԵՓՈՆԻԿ, առանձին։

Այ հրէշ... (Նորան)։ Դուք գիտեք, Նիկիտ Եակուլիչ։ Ուրեմն ես գնամ, տեսնեմ տղերքը ինչ բանի են։ (Գնում է)։

ՅՈՎԱԿԻՄՈՎ, նորա ետկից։

Դու գնա ու բոլորովին միամիտ կաց...

ՏԵՍԻԼ Բ

ՅՈՎԱԿԻՄՈՎ, միայն։

Այ ձեզ յիսմոր մարդ։ Ես ուզում եմ որ տպարանը ծախեմ. 1500, 2000 մանեթ վնասի տակ ընկնեմ, միայն նրա համար որ ինքը քաղցած մնայ... հիմա եկել ու ինձնից է օգնութիւն խնդրում։ Հըմ... (Մաս է գուլիս)։ Տօ, դրանք չեն որ մեզպէս պատուաւոր մարդին կամ հարուստին, քաղաքի իշխանին լրագրներում ձեռք են առնում ու ամբողջ աշխարքում խայտառակում... հիմայ տեղը չի որ մենք էլ փողի, ապրուստի խնդրի մէջ խեղդենք զըրանց... Այո՞՛, դրանց հետ միշտ էդպէս պէտք է վարուել, որ մեզպէսներին ձանաչեն, որ մեզ հետ ոտ չ'մեկնեն. թէ չէ մի փոքր թոյլ թողեցիր՝ էլ քեզ չեն ձանաչել, պատահած աեղը գտակները գոռնէ չեն բարձրացնիլ, մինչև անգամ մարդատեղ չեն դնիլ. քեզնից էլ շատ լաւ կ'ապրեն, կ'հագնուեն... (ապահները չըճպայնեն)։ Ու քեզ էլ գեռ սողացի՛ տեղ ո՞նիկիտ Եակուլիչ կ'ասեն... Դէ առա, դրանից յետոյ մենք մեզ տանենք ու ջուրը գցենք էլի... խեղդուենք էլի... էլ ինչո՞ւ ենք ապրում... (Միջը)։ Բայց ափառս որ ես էս բաները առաջ չ'մտածեցի... չ'մտածեցի էն ժամանակ, երբ ես դրան ինձ ընկե-

բացրեցի... (Նայում է ուեղի աշ): Ըշը... էս գերաս
սիմ Գրիգորիչը չի... նա է, նա, Ստեփանիկին աներն
է: Հիմա էնպէս (աշխա-ժամ) քարը զցեմ փոսը, որ
եօթ ջուխու լծկան եղներ շնկարողանան հանել:
(Առաջընկ): Գերասիմ Գրիգորիչ, Գերասիմ Գրիգորիչ...
համեցէք էստեղ մի: (Առաջընկ): Հիմայ պէտք է
խօսքը բաղ ու բաղմանից սկսի:

ՏԵՇԻԼ Գ

ՅՈՎԱԿԻՄՈՎ, և ԿԱՐԱՊԵՏՈՎ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ, ներս գալով:

Բարեն Նիկիտ Ետակուլիչ: Ինչպէս ես: Խէ՞ր ընիւ

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Խէր է փառք Աստծու: Ա՛յ, ասեմ քեզ թէ ինչ-
չու համար կանչեցի: Քո էդ փեսադ ինչ է—Ասե-
փանիկը:

ԿԱՐԱՊԵՏՈՎ:

Հա: Ինչ կայ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ:

Դա ուզում է որ տպարանս ձեռքիցս առնի ու
մէնակ ինքը բանեցնի. ես էլ քեզ ուղեղն ասեմ, էլ
չեմ ուզում պահել. ծախսը շատ է, բայց միջե-
օգուար աննշան: Հիմա դա ուզում է քեզ գիմի մի
1000, 1200 մանեթ առնի քիզանից, առյ ինձ, որ
ինչէ, տպարանը տամ իրան ու ես բոլորովին ձեռք
վերցնեմ: Հիմա էս էլ քեզ ասեմ: որ դու եթէ էդ
փողը տառ նրան՝ կէս կոպէկ էլ յետ չես ստանաւ-

Հա՛. որովհետեւ եթէ մի քանի շահի մնար ինձ,
դու գիտես, որ նրա պէս քսանը աղաշէին ձեռքից
բայց չէի թողնիլ: Հիմայ հասկացա՞ր: Իսկ եթէ ես
նրան ընկերացրեցի, կարծեցի թէ ամեն բանն էլ
ինքը կանի. գրաշարութիւնն էլ, ապիչութիւնն էլ,
միավարկութիւնն էլ, մինչև անգամ տպարանի յա-
տակն էլ ինքը կարի, կլուանայ... Բայց խարսուեցի.
Էլ իմ առաջուայ ծախսս հա գնում է հա գնում,
ծառայողներն էլ իրանց ամսականները հա առնում
են հա առնում: Հիմա քո կամք էս եթէ ուզում
ես փողդ կորչի՝ տուր:

ԿԱՐԱՊԵՏՈՎ, մոռածելով:

Այսինքն... գիտես ինչ է, Նիկիտ Ետակուլիչ, թէ
իմանամ փողս կորչելու է կէս կոպէկ չեմ տալ, թէ
չէ վերջ ու առաջ կ'ստանամ—կտամչեմ ինայի. շա-
հով մի բան չի՞: Անցեալ տարուայ բաղմանիս էլ
փող տուեցի ու շահը գլխիցն առայ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ:

Սպասիր, Գերասիմ Գրիգորիչ, էլաւ ու չ'առուեցօ-
գործ է թարսը գնաց. էն ժամանակ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ:

Էէ՛. բանը թարս գնաց, տպարանը խօմ տեղն է.
տպարանը կարելի է ծախել ու իմ փողս միջեց հա-
նել: Հիմայ որ ես, Տէրը մի' արացէ, Տէրը մի արա-
ցէ, նեղ տեղն ընկնեմ, բայս չեմ կարող ծախել:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Գերասիմ Գրիգորիչ, ո՞վ կառնի տպարանը. ո՞վ նրա համար փող կ'փշացնի: Վարդանին քանի անգամ ասեցի, արի իմ տպարանտ առ, բայց նա չըառաւ. 500 մանէթ էլ չեմ առալ, ասեց. տպարանից հնացել է ասեց. ես ինձ համար նորը կառնեմ: ու առաւ: Եւ վերջապէս թէ որ տպարանն իրա գինն ունենա հա՛, ես 1200ով կ'ծախե՞մ... Նա ինձ վըրայ նստել է 4000 մանէթ, հասկանում ես,—4000 մանէթ... բայց ո՛վ հիմայ առնող չկայ՝ ես ուրախ եմ 1200ով, գեռ 1000ով, որ տեղն, բնկնի, խօսք քեզ մօտ մնայ, 700ով մինչև անգամ իմ մասս գըշիցս հեռացնեմ.— ինչ ես ասում:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Հա, թէ որ էդպէս—էդ ուրիշ բան: Էլ ինչպէս ես առնեմ... ԶԵ, քեզ պարզն ասեմ: ես իմ դառը քըրտինքով աշխատած կոպէկներս չեմ կարող ջուրն ածել:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ապա՞ ապա՞ ես էլ հենց էդ եմ ասում է՛. ես քեզ իմ մեղքանում, եղբայր, նրա համար եմ ասում, եթէ ոչ ի՞նձ ինչ... Հա, թէ քո փեսադ էր ուզում ես օգնել, իրան ընծայել... արա՛ եղբայր, զու գիտես, բայց ես լինեի չուանն ինչ է, մինչև անգամ չուան էլ չէի առալ, որ խեղգուի: Աղջիկ չելաւ, խօմ դարդ ու բալա չելաւ քո գլխիդ, եղբայր, աղջիադ կամ փեսայիդ հետ խօմ չես աշխատել կոպէկներդ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Աստուած մի արասցէ. բաղմանս աւելի շատ աշխատանք ունի քան թէ նա:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Տիսա՞ր: Ո՞ւմն ես պարտական: Ով ինչ ուզում է թող ասի: Դու քու բանդ իմացիր: Ինչ ես ասում, եղբայր. քեզ խօմ յայտնի է, որ պատիկ ժամանակս ուրիշների մօտ ծառայում էի, նոքարութիւն էի անում: Գլխիս քար էին աղում ու ես համբերութեամբ տանում էի. տարուայ մէջ մի ձեռք հին շոր էին տալիս ու հինգ մանէթ էլ փող: Այ, տեսնում ես, քեզ խօմ յայտնի է. էդպէսութիւնով կամաց կամաց դարձայ մարդ: Էս հինգ վեց տարի է որ ես կարգին սկսում եմ հագնուել... ինչո՞ւ. — որովհետեւ հիմայ գիտեմ որ մէջքս պինդ է:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Ե հարկ է, ի հարկէ նիկիտ եակուլել:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Այ, տեսնում ես. էդպէսով ենք մենք մի կտոր հացի աեր դառել. իսկ հիմակուայ երիտասարդները, այ, հենց մէկը քո փեսան, բոլորովին հակառակն է գնում: ուզում է միանգամից մեզ հետ ոտ մեկնի: Հագնվում է ոտից մինչև գլուխ ամենաթանգագին շորեր, գլխին դնում է շեապա—ցլինդր, որ հիմայ պրակուրօրն է գնում: հագնում է կոշիկներ, որ դժուար թէ գուբերնատը ունենայ: Ասա տեսնեմ

ինչ ունի քո Ստեփանիկը, ինչի՞ վրայ է ախար նըստած... Քանի անգամ եմ իրան ասել, որ էղպէս շըհագնուի, իրա չափը ճանաչի—չի լինում, չի։ (Բարձրացած) ես քեզ ուղղեն ասեմ՝ իմ ու դրա ջուրը մի առույով չի գնում։ Հենց որ գնում եմ տուն ու դըրա շնեապէն միտս է ընկնում— էլ ամբողջ գիշեր քունս չի տանում, էս օրուայ օրը վկայ։ Հենց դըրէիստոր պատճառն էդ է, որ ուզում եմ տաղարանս ծախսմ ու դրա երեսիցը պրծնեմ։

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Եհ՛ ջահել է, նիկիտ Եակուլիչ, զուր ես շատ սրտիդ մօտ ընդունում էդ բաները. գեռ նրանց ջուրը դարի դուս է գնում։ Կ'մեծանան, մեր օրերին կըհանեն ու ամեն բան կ'հասկանան։

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Եհ՛, ինչ և իցէ, բանը շատ երկարացաւ. Ներողութիւն, գերասիմ Գրիգորիչ. քեզ շատ անհանդիստ արեցի. Թնաս բարով։ (Մի ժողով գնում է և յետ է դաշտում):

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Գնաս բարով։

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Զիմ չիմանամ, որ դու նրան փող տաս հա՛ թէ չէ մի կապէկ ետ չես ստանալ։ Մնաս բարով։ (Գընում է):

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Գնաս բարով, Նիկիտ Եակուլիչ։

ՅՈՎԱԿԻՄՈՎ, յետ դանալով։

Հա՛. Էս էլ էի ուզում ասել, բայց մոռացայ, ներողութիւն, որ քեզ գործիցդ ետ եմ ձգում։

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Աշինչ, Նիկիտ Եակուլիչ համեցէք։

ՅՈՎԱԿԻՄՈՎ, պատով։

Եղբայր, գործ բերողների հետ մինչեւ անգամ վարեցողութիւն չունի. մի մարդ որ գործ է բերում; իսկոյն ինքը գնում է բազմում իրա տեղն ու նոր է գործը ընդունում. իսկ եթէ մի սալդաթ բերած լինի գործն է, բոլորովին լայալ չի անիլ, որ վեր կենայ, աթոռք համեցէք անի, նսաացնի նրան ու յետոյ ինքը նստի, գործը վերջացնի։ Եղբայր. չէ ո՞ւ մեր աչքը նրանց ձեռքին է. չի՞ որ նրանք են գործ բերողը, ու մի քանի շահի օգուտ տուողը. ախար, նրան պատուիր է, որ միւս անգամ էլ գայ։ Հը... ինչ կասես սրան։

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Ինչ պէտք է ասեմ. ի հարկէ էղպէս պէտք է մենք մեր մուշտարուն գրաւենք։ Այ, Հենց մէկ օրինակ ասեմ. թէպէտ բաղմանս իմ ձեռքիս տակն էր, բայց էլի ետ եմ նրան պատվում, քուշի քուշի անում. —ինչո՞ւ, որովհետև նա՛ է ինձ օգուտ տուողը։

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Այ, օղորմի քո հօ՛՛ը: Տեսնում ես, իսկ նա լայադ չի անում տեղից մինչև անգամ վեր կենալ. ուշրեմն նա էլպէսով կարո՞ղ է աշխատել ու քու փողը քեզ հացնել... Ե՛՛, ո՞ր մէկն ասեմ, գերասիմ Պրիգորիչ. մնաս բարով: (Գնում է):

ՏԵՍԻԼ Ե

ԿԱՐԱԳԵՑՈՎ, միայն:

Գնաս բարով: (Հանդիսականաց): Այ իմ Աստուածը շատ ուղիղ է ասում: Ես քանի անգամ նախատել եմ. քանի անգամ զգուշացրել եմ, բայց իրա զիտեցածը ձեռքից չի թողնում. ես իմ խեր ու շառը, ասում է, հասկանում եմ: Ես զիտեմ, ասում է, թէ ինչպէս պէտք է ապրել աշխարքումը. Ես զիտեմ թէ ում հետ ինչպէս պէտք է վարուել, ում հետ ինչպէս խոսալ. մի խօսքով, ասում է, հայրիկ, դու իմ կողմից միամիտ կաց: (Միջաց): Թէպէտ շատ արժանաւորութիւններ ել ունի փեսաս, բայց... մի քիչ ջահել է, գեռ կեանքի մէջ փորձուած չի: (Միջաց): Հա՛. իսկ եթէ փողն ուզելու լինի, ինչ անեմ... ինչ ասեմ... հը... տամ վայ է, չտամ վայ է... բայց մի կողմից նիկիտ Եակուլիչն ել էր ուղիղն ասում, յետոյ ես ինչիցն առնեմ... Զէ՞ պէտք է նրան ցանել. թէ չէ փողերս կ'կորչեն ու ես կ'մնամ մատս լազոտելով: Բայց չէ. ամենից առաջ մի Ստեփանիկին

էլ տեսնեմ, իմանամ թէ նա՞ ինչ յոյսեր է տալիս ու յետոյ բան բռնեմ, (Գնում) թէ ոչ բաղմանիս պէս ան հաշեւ բան բռնեմ, իսկոյն ոտքս քարին կառնի:

ՏԵՍԻԼ Ե

ԱԴԱԶՈՏՈՎ, և ԱՂԱԲԵԳ:

ԱՂԱԶԱՏՈՎ, աջ կուլափ ետևից կանչելով ներս է մտնում:

Աղարէգ, Աղարէգ...

ԱՂԱԲԵԳ, ձայնը լավամ է ձախ կուլափ ետևից: Հը...

ԱՂԱԶԱՏՈՎ, գնալով դէսի ձախ կուլալը:

Արի գնանք մի ձեռաց թուղթը զցենք:

ԱՂԱԲԵԳ, գալով քեմ:

Այ տունդ քանիզուի ոչ խեղճ ես, նոր չ'վերկաց անք: ԱՂԱԶԱՏՈՎ,

Բան չկայ. գնանք:

ԱՂԱԲԵԳ

Աղա, գեռ հալա չեմ էլ քնել թող մի երկու սըհաթ դինջանանք է:

ԱՂԱԶԱՏՈՎ,

Թէ եղբայրս ես, գնանք:

ԱՂԱԲԵԳ

Չէ, հաւատա:

ԱՂԱԶԱՏՈՎ,

Թէ գլուխս սիրում ես, գնանք:

ԱՂԱԲԵԳ

Զեմ կարա. Աստծու մի անումը վկայ չեմ կարա:

ԱՂԱԶԱՏՈՎ,

Ինչպէս թէ չեմ կարա:

ԱՊԱԲԵԳ

Չեմուզում էլի, վաս Զորով էլ բան կլի:

ԱՊԱԶԱՏՈՎ

Յօ... գլուխդ մեռնի, ապա վէքսիլ առնել կարող ե՞ն:

ԱՊԱԲԵԳ

Բա ես որ տարու էի նազդ չէիր առնելը ։

ԱՊԱԶԱՏՈՎ

Լաւ Լսիր. մի երկու թուղթ գցենք: Թեթև խաղանք, գի՞սես. մեծերից չբռնենք:

ԱՊԱԲԵԳ, գնալով:

Չեմուզում, չեմ:

ԱՊԱԶԱՏՈՎ

Աղաբէգ, ապասիր:

ԱՊԱԲԵԳ, գնալով.

Բան ունեմ:

ԱՊԱԶԱՏՈՎ, նորա հտեից:

Ադա, ԷՇ. ջուխտ լուլանիս եմ մէջ զնում-գընանք:

ԱՊԱԲԵԳ, կուլիսի ետեից:

Չէ, չէ:

ԱՊԱԶԱՏՈՎ

Բան եմ ասում. մի գնա. մի էս տեղ արի:

ԱՊԱԲԵԳ, խորքի կուլիսի մօտ երևալով:

ՀՇ:

ԱՊԱԶԱՏՈՎ, մօտենալով նորան:

Լսիր:

ԱՊԱԲԵԳ

Ասա:

ԱՊԱԶԱՏՈՎ

Ջուխտ լուլանիս:

ԱՊԱԲԵԳ

Չէ: Գեմ ուզում:

ԱՊԱԶԱՏՈՎ

Էս քամարս...
ԱՊԱԲԵԳ, գնում է:

Գեմ կարա, չեմ:

ԱՊԱԶԱՏՈՎ, առանձին:

Թո՛ւշ... (գնալով նորա ետեկ) մէկ մանէթի վրայ. Աղաբէգ, Աղաբէգ... մէկ մանէթի վրայ... Աղաբէգ... (գնում է. ըմբամ է Աշակառանի չոյն խոլիսի ետեկ) մէկ մանէթ եմ ասում... ձեռաց... մէկ անգամ...

ՏԵՍԻԼ Զ

ՏՊԻԶ, և ՄՐԱԶԱՐԿԻ հետ ներս գալով:

Բա որտեղ գտնենք Սոհիփանիկին:

ՄՐԱԶԱՐԿ

Բստեղաբենք կը լինի:

ՏՊԻԶ, նայելով աջ կողմը:

ԱՇ, աՇ, գալիս ա: (Երկուոր գնում էն ունի ոջ խորհը և պարահում էն Սոհիփանիկին):

ՏԵՍԻԼ Է

ՆՈՅՆԻ, և ԱՏՎՓԱՆԻԿ:

ԱՏՎՓԱՆԻԿ, գալով բեմ:

Տղե՛լք. անօրս չէք տեսել:

ՏՊԻԶ

Ոչ:

ՄՐԱԶԱՐԿ

Չէ. աման...

ԱՏԵՓԱՆԻԿ

Ինչ էք մանգալիս. ինչո՞ւ ձեր բանին չէք:

ՏՊԻԶ

Տպած գործերը տարանք Պօլիցէն. Էնտեղ ձեզ
կանչում են:

ՄՐԱՋԱՐԿ

Թաղայ գործեր են տպի տալու:

ԱՏԵՓԱՆԻԿ

Ինչքան էին տարածներդ:

ՏՊԻԶ

1920 մէկիցն էր, 240 էլ մէկից:

ԱՏԵՓԱՆԻԿ

Լաւ. գնացէք ձեր բանին. Անօրս էլ որ տեսնէք
ասէք ինձ գտնի: (Գնում էն):

ՏԵՍԻԼ Ը

ԱԴԱՋԱՑՈՒ, և ՅՈՎԱԿԱԽՈՎՈՒ, ԽՈԱԵԼՈՎ ներս են մտնում:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Հիմա իմացար բանն ինչումն է՞ ինպէս քարը զը-
ցեցի փոսը, որ էլ հանելու ճար չկայ:

ԱԴԱՋԱՑՈՎ.

Շատ լաւ ես արել... Տեսա՞ր որ ասեցի ինքը ու-
րախութեամբ կառնի:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Է, լաւ. քո կարծիքով դրանից ինչ է դուրս գալիս:

ԱԴԱՋԱՑՈՎ.

Դրանից էն է դուրս գալիս որ՝ նա քո տպարանը
զլիսից մինչեւ վերջը ուտում է ու ուտում և քեզ
ոչինչ չի ցոյց տալիս:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, անհանգատոթեամբ

Յետո՞յ...

ԱԴԱՋԱՑՈՎ

Յետոյ... էլ ինչ յետոյ. տպարանիդ եկամուտը
զլիսից մինչեւ վերջը ուտում է, էլի. էլ սրանից աւե-
լի ինչ ես ուզում:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Ախար ինչիցն ես հասկանում:

ԱԴԱՋԱՑՈՎ.

Վա՛, շատ պարզ բան է, չես իմանո՞ւմ. եթէ ե-
կամուտ չլինէր, նա ինքը պէտք է աշխատէր, որ մի
կերպով վերջացնէք տպարանը, զլիներիցդ հեռա-
ցընէք. իսկ եթէ ինքը ուզում է առնել քո մասը
էդ նշանակում է, որ նա նրա մէջ օգուտ է տեսել
և (երկարացնելով) ուզում է...

ՅՈՎԱԿԻՄՈՎ, անհամբերոթեամբ

Ինչ է ուզում:

ԱԴԱՋԱՑՈՎ.

Եւ նա ուզում է որ քեզ մի կերպով հեռացնի և
ինքը երկու զլուխն էլ իրա ձեռքը հաւաքի:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Հա՛, հա՛, հասկանում եմ... շատ խելքի մօտ
բան է. չէ ես պէտք է զգուշանամ: Բայց զիտե՞ս,
ես միտքս փոխեցի. ինչո՞ւ տպարանս ծախեմ ուրի-
շի, էն լակոտի պատճառով, ինչո՞ւ... ինչո՞ւ նրանից
չլինեմ իրա մասը, երբ, ինչպէս ասում ես՝ ամեն ի-
րաւունքը իմ ձեռքիս մէջն է:

ԱԴԱՋԱՑՈՎ.

Ի հարկէ որ էդպէս պէտք է անես:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Ուր մնամ որ Ատեփանիկը փող չունի...

ԱՊԱԶԱՏՈՎ, նորա խօսքը կտրելով:

Իսկ դու ինչիցն ես իմանում, որ նա փող չունի:
ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Ես իմանում եմ նրանից... այսինքն, եթէ ուղիղն
ասած, ես ոչչից չեմ իմանում:

ԱՊԱԶԱՏՈՎ,

Իսկ ես գիտեմ, որ նա ունի և շատ ունի:

ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Հ՞... ինչիցն ես իմանում:

ԱՊԱԶԱՏՈՎ,

Դու նրա տունը գնացել ես:

ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Հա՞ ինչ է որ:

ԱՊԱԶԱՏՈՎ,

Նրա կոջը մէկ տեղ գնալիս տեսել ես

ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Հա՞ հա՞ ինչ է որ:

ԱՊԱԶԱՏՈՎ,

Իրան խօմ տեսնում ես ու տեսնում

ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Ել ինչ ասել կուզի: Բայց ասա տեսնեմ թէ բանն
ինչում է:

ԱՊԱԶԱՏՈՎ,

Բանը նրանումն է որ՝ նա փող ունի և էդ փողը
քո աչքիդ թող ու մոխիր փշելով է շինել:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, համբերութիւնից գուրս գալով:

Վերջապէս ինչիցն ես հասկանում, որ էդ էդպէս է:

ԱՊԱԶԱՏՈՎ,

Աթէ մի փաքը խելքի տակ զցես, իսկոյն կ'ըե-
մանաս:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Տէր ողորմած Աստուած հա՛... Ես պատռուեցի է՛
մի պարզն ասա:

ԱՊԱԶԱՏՈՎ,

Ել ինչ պարզն ասեմ: Թրանից Էլ պա՞րզ: Փող չու-
նեցողը էնպէս տուն ու տեղ կունենայ ու էնպէս
կեանք կ'վարի՛: ինչպէս նա՞: ինչ ես ասում:

ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Ըմ, ըմ... թէ էդ է, ես վաղուց գիտեմ: Մէկ
տարի կ'լինի որ էդ միտքը ինձ կրծոտում է:

ԱՊԱԶԱՏՈՎ,

Ուրեմն հիմայ ինչ պէտք է անես:

ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Ինչն ինչ պէտք է անեմ: Ես իմ մաս առ երես
կ'ծախեմքեզ, նա քեզ հետ չի կարողանալ վարուելց
սակառուած իրա մասիցն ել յետ կ'քաշուի: Իսկ որ
բոլորովին քո ձեռքն ընկաւ—իմն է ու իմա:

ԱՊԱԶԱՏՈՎ,

Զէ, էդ չեմ ասում: Նա որ էս անգամ էլ գայ,
ինչ պէտք է ասես:

ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Կասեմ... կասեմ... ինչ պէտք է ասեմ: պէտք է
ձանապարհը զնեմ առաջն ու... պրծաւ գնաց: Զէ...
հա՞ հա՞... Տպարանը, կասեմ, Աղազատովին ծա-
խեցի:

ԱՊԱԶԱՏՈՎ,

Զէ... էդպէս չպէտք է անես:

ՅՈՎ ԱԿԻՄՈՎ.

Ապա...

ԱՊԱԶԱՏՈՎ.

Դու նրան հա խօսք տուր, հա էսօր—վաղը գըցիր. ասա, զեռ 1000ով էլ կտամ իմ մասը. փողը բեր, ասա, և ամեն բան վերջացնենք, գնայ: Տեսնենք փողը ո՛ւ տեղից է դուրս գալիս: (Նշանակութիւն դաշտ): Հասկանում ես...

ՅՈՎ ԱԿԻՄՈՎ.

Հա՛, հա՛, հա՛... Ա՛յ թէ սատանան ես դու հա՛. ինչ բան լինի որ քո խելքը չհասնի:

ԱՊԱԶԱՏՈՎ.

Ապա ես քեզ պէս ե՞մ, որ առանց մնածելու, չափ ու ձեւ անելու, ծանր ու թեթև անելու ու տասը չափելու ու մէկ կարելու բան բռնե՞մ:

ՅՈՎ ԱԿԻՄՈՎ.

Պէտք է ասել, որ ես էլ պակաս չեմ, բայց դու ինձնից անցար:

ԱՊԱԶԱՏՈՎ.

Տեսնում ես. դու ուզում էիր նրան վնասել միայն նրան համար, որ դու ատելով առում էիր նրան, ուր մնամ որ կասկած էլ կար արտօւմդ. իսկ հիմայ (Երկու էլ գնոլով) փաստեր ունես, ապացոյցներ ունես և շուտով աւելի հասաաաը կ'ունենաս: (Գլ. հոռմ էն):

ՏԵՍԻԼ Թ

Չ և 4 ՄՐԻԿԱՆԵՐ, ԳԱԼՈՎ:

4

ԱԷԿԵԼ ՔՇԵՐԸ:

2

Հա:

4

ԵՌ ոնց արիք, ագա:

2

Մի բարգու թեթև գերան դրինք քուչի ակուշ կին ու բանցրացանք վերև. էնզեղից էլ չանգալով դուս քաշեցինք նրանց շոր ու մորը:

4

Բա կվարտալնուց, արխօնից չերեւացին:

2

ՄԵՆՔ մեր բանն առաջուց ինք տեսէ:

4

Ախպէր, զուցաղ էք:

ՏԵՍԻԼ Ժ

ՆՈՅՆՔ և 3 ՄՐԻԿԱՅ:

3

Աղա, էյ. ինչ էլաք ակր:

2 և 4

Հը, հը...

3

Որ ձեզ հարցնելու ընեն ասէք էն քշել կարօյենց
տանն ինք. նրա էրեխու կնունքն էր, ասէք:

2

Խի՞ որ. պոչներիցս են բռնել:

3

Չէ, հալա. ամա բայց...

4

Ասէք ընչանք լուս քէֆի ինք:

3

Հա. ըտենց ասէք:

2

Ադա բաս ոնց պտի ընի:

3

Ոչինչ բան չի դուս գալ. ամա իմացած կացէք:

2

Նրանց տեսաք:

3

Տեսանք: Սարով քոլով կ'քցեն:

ՏԵՍԻԼ ԺԱ

ՆՈՅՆՔ, ԱՂԱԶԱՏՈՎ և 1 ՄՐԻԿԱՑ:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ես ձեզ ասում եմ, որ բան չեն կարող անել. ինչ-
պէս որ ասեցի՝ գուք էնպէս արէք:

3

Սրան էլ ասեցի. մէկելներն էլ որ դիտեն:

ԱՂԱԶԱՏՈՎ

Քէֆներդ քոք պահէք: Էս զլուխս կ'կտրեմ թէ
որ դրանից բան դուրս գայ:

1

Էս խօմ, տռաջի անգամը չի, տօ:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ասում էք ինչքան էր փողը:

1

Մարդի ալխալուզի ջիբում 88 մանէթ էր՝ մի քա-
նի կոպէկ էլ հետը. ինկայ մինթանի ջէրին էլ—իրեք
չորս մանէթ էր:

ԱՂԱԶԱՏՈՎ

Շորերն էլ էրէք, որ նշանը չ'երեայ:

1, 2 և 3

Էրել ենք էրել. արխէին կաց:

ԱՂԱԶԱՏՈՎ

Էլ ինչ էք ձեռ ու ոտ ընկել. ես էլ որ էն տար-
քեցի, կ'վերջանայ կերթայ: Հա՞ էս էի ուզում ա-
սել. ինչ էք ամենքդ էլ հաւաքուել էսպէս մի տե-
ղում, տե՞սնողն ինչ կասի:

3

Դրուստ որ:

2

Տղեք, ծլկուուենք:

1

Արելք, արկմուտք, հիւսիս, հարաւ:

2, 3, 4 Ար հեռանում են աջ և ձախ:

ՏԵՍԻԼ ԺԲ

ԱԴԱԶԱՑՈՎ և 1 ՄՐԻԿԱՅ:

1

Բա դո՞ւ ոնց արիր Աղաբէզի հետ էս քշեր:

ԱՊԱՋԱՑՈՎ

Քսալից անիծածը:

1

Նաղդն էլ տուեցիր, վէքսին էլ:

ԱՊԱՋԱՑՈՎ

Տուեցի, տուեցի... ես նրա... Ո՞րաեղ գանենք
մենք նրան:

1

Էստեղարենք էր, բազարումը կը լի:

ԱՊԱՋԱՑՈՎ

Գնանք մի տեսնենք: (Գնում էն):

ՏԵՍԻԼ ԺԳ

ՍՏԵՓՈՒՆԻԿ և ԿԱՐԱՊԵՏՈՎ:

ՍՏԵՓՈՒՆԻԿ

Իսկ դու, հայրիկ, ասում ես նա քեզ հետ տես-
նուեց և այդպէս խոսից:

ԿՈՐԱՊԵՏՈՎ

Նոր հենց էստեղ էինք: Ես էնտեղ (Հեռու յայ պա-
շտ) բաղմանիս հետ խոսում էի, որ նա ինձ կանչեց:

ՍՏԵՓՈՒՆԻԿ

Բայց դա անկարելի է հայրիկ, նա ի՞նքը խոստա-
ցաւ ինձ ձեզ խնդրել և համոզել որ այս բանում
օգնեք ինձ, մինչև անգամ ինքը առաջորկեց ինձ գլ-
նել իւր մասը:

ԿՈՐԱՊԵՏՈՎ

Զգիտեմ, բայց ես քեզ առեցի էն, ինչ որ նրանից
լսել եմ: այ, հենց էստեղ:

ՍՏԵՓՈՒՆԻԿ

Տէր ի՞ք Աստուած... վերջապէս ես ի՞նքս նորան մի
փոքր առաջ տեսայ, որ Աղազատովի հետ գնում էր.
կանչեց ինձ և խոստացաւ մինչև անգամ՝ 1000ով
տայ ինձ իւր մասը, միայն փողը շուտ տամ իրան,
որ բանը իսկոյն վերջացնի:

ԿՈՐԱՊԵՏՈՎ, առանձին:

Ես ո՛չինչ չեմ հասկանում:

ՍՏԵՓՈՒՆԻԿ

Բայց նա ինչո՞ւ պիտի այդպիսի խորհուրդներ տայ. . .
ես ինչ եմ արել նորան... Զէ, հայրիկ, գժուարա-
նում եմ, ուղիղն տաճ, հաւատ ընծայել ձեր ա-
սածին՝ թէ՛ նա ինձ այսօր շատ կրսկածելի թուաց:

ԿՈՐԱՊԵՏՈՎ

Ես չեմ հասկանում թէ ինչ օգուտ ունեմ քեզ
խարելու. ես իմբաղմանիս մինչև անգամ չեմ խոբած:

ՍՏԵՓԱՆԻԿ

Այստեղ խարդախութիւն կայ... մի յետին և երկիւղալի միտք կայ... պէտք է աշխատել որքան կարելի է շուտ վերջացնել այս գործը, ապա թէ ոչ... դորա տակից շատ բաներ կարող են դուրս գալ... և ես, իմ պարզութիւնովս, յաղթուած կլինեմ: իսկ դուք, հայրիկ, դորա համար՝ էիք կմկնում և ասում թէ կ'մոտածեմ, ձեռքիս փող չ'կայ և այլն: Ուրեմն դուք էլ կամենում ինձ ուրանալ, ինչպէս Յովակիմովը... Ուրեմն դուք էլ էք կամենում սառնութեամբ նայել իմ վայր ընկնելուս, ... Զէ, հայրիկ, ես գիտէի որ դուք փողասէր էք, բայց մինչ այդ աստիճան չը գիտէի ձեզ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Ախար փողասէրը ինչ հողը տայ իրա զլուխը... Զէ. Հիմայ քեզ եմ հարցնում, Ստեփանիկ, որ փողը տամ էլ՝ ո՞րտեղից պէտք է տաս էդ ահագին գումարը իրա ժամանակին, կամ թէ ժամանակին էլ չէ, գոնէ մի քանի ամսից յետ, մի տարուց հետ չ'ը.— Ժամանակից անց մի տարուց էլ յետ: Որտեղից պէտք է աշխատես: Գու գիտես, որդի, որ փող աշխատելը դժուար բան է. շատ դժուար է:

ՍՏԵՓԱՆԻԿ

Հայրիկ եթէ ձեզ էլ չղիմեմ, էլ ո՞ւմ զիմեմ: ասացէք տեսնեմ: ինչպէս կամ ո՞րտեղից ձեռք բերեմ այդ փողը, որ չ'զըկուեմ չորս տարուայ աշխատածիցս

էլ մի կտոր հացից էլ և կարողանամ այդպիսի խարդախներից էլ ազատուել:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Լաւ, իսկ եթէ չկարողացար ժամանակին տալ. ես ինչ անեմ... Քանի որ մի տպարան էլ է բացուել:

ՍՏԵՓԱՆԻԿ

Մի՞թէ իմ ամբողջ տպարանս, որ 3000 մանէթ փող արժէ, չէ կարող լրացնել քո տուած 1000ը:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Տպարանդ էլ կես կոպէկ չաժի, որովհետեւ փը-չացել է, մաշուել է:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ինչ էք ասում, հայրիկ. որ միայն արձիճը ծախենք էլի մի երկու հարիւր մանէթ փող կ'հանի, որ միայն մեծ մամուլը ծախենք՝ էլի մի 500 մանէթ փող կ'հանի... որ միայն կասաս ու ռէալ և միւս մամուլը ծախենք էլի եօթ ութ հարիւր մանէթ փող կ'հանի.— ինչ էք կարծում Այդպիսի բաներով է քեզ վախեցրել:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Ապա նա՞ ինչու է 1000ով ծախում, եթէ էղպէս է:

ՍՏԵՓԱՆԻԿ

Նա ծախում է միայն իւր մասը և չեմ հասկանում թէ ինչ է նորա նպատակը, իսկ իմ մասս՝ արդէն իմն է: Մի՞թէ նորա և իմ մասս ձեր 1000

մանէթը գոնէ չի հանիլ: (Աշումայ ժողով): Նիծաղելի
է հայրիկ, ծիծաղելի է:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Է լաւ: Աստուած ոչ անի, որ բանը էն տեղ հաս-
նիս միայն ասա տեսնեմ յօյս ունեն որ օգուտ կը-
կարողանաս դուրս բերել. բաղմանս էլ է շատ խոս-
տումներ անում, բայց ոչինչ չի դուրս գալիս:

ՍՏԵՓԱՆԻԿ, Նեղացած:

Դուք ինձ ձեր բաղմանին էք հաւասարացնում,
հայրիկ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Աստուած մի արասցէ... օրինակի համար եմ ա-
սում: Յոյս ունե՞ս:

ՍՏԵՓԱՆԻԿ

Այնքան յօյս ունեմ, որ պիտի ես ինքս զիշեր և
ցերեկ աշխատեմ, որքան թոյլ կտայ իմ Փիզեքական
ոյժա: Վերջապէս Վերդինէին կ'սովորացնեմ գրաշա-
րութիւնը - նա կշարի, ես կտպեմ և ծառաս էլ մուր
կ'քար. այսպիսով ամսական ծախքս կ'բռացնեմ և ձեր
փողը ժամանակին կ'լրացնեմ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Հա՞ էդ ուրիշ բան է. եթէ ինքը կաշխատես, յօյս
կայ որ մի հինգ - ասա շահի ետ կ'քցես: Բաղմանս էլ
երր ինքն է աշխատում բաղումը, լուր բան է անում:
Իսկ եթէ բանուարների վեայ է թողնում: ոչինչ զը-

լուխ չի գալիս (Մկրտ): Լաւ, ես քեզ 1000 մա-
նէթը կ'առաջ... բայց...

ՍՏԵՓԱՆԻԿ

Բայց ի՞նչ...

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Շահը...

ՍՏԵՓԱՆԻԿ

Շահը: Ինչքան կամենաք, բայց որքան կարելի է
պիտի քիչ հաշուեք:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Շահ չեմ տաիլ. տասը մանէթ հարիւրին: Անցեալ
առրուաց բաղմանիս քսանով եմ տուել, քո արել վր-
կայ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Շատ լաւ: Միոյն գուք գնացէք նորա մօտ և
վերջացրեցէք. ես այլ ես նորա երեսը չեմ կարող
տեսնել:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Լաւ... ես ամեն բան կ'անեմ: միայն... այսինքն
ես քեզ համար, զիտես որ հոգիս էլ չեմ խնայի,
որդի, բայց որ բանը փողի է լնինում... զժուար է
որդի... զժուար է. ախար փող է, հոգի չի:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ի՞նչ ես առում հայրիկ, զիցուք թէ ամեն բան
թարալ գնաց, տպարանս էլ զնող չ'կառ, ոչ ապա-
քէն միայն վեց, եօթ հարիւրի տան մէջ ու մէրել

ունեմ, պատկերներ, խալիչաներ ու շորեր ունեմ, թէ
իմ անձնական աշխատած և թէ հօրիցս մնացած:

ԿԱՐՈՊԵՏՈՎ, առանձին:

Ուզեղ որ է՛ (նորան) դէ լա՛, լա՛, ևս ուսով ու
գլխով քոնը չե՞մ: իմ ունեցած չունեցածս քոնը չէ՛:
բայց թէ որ էդպէս ասում էի—հաւատա՛ մի հա-
նաք էի անում: թէ չէ ևս քեզանից փող կ'ինայե՞մ:
ուզում ես հէնց 1000 մանէթն էլ քեղ ընծոյեմ—
վերջանայ, գնայ: Կորած տեղ է՛ (Մէջ): Հա... նա
հիմա բազմանիս մի երկու խօսք ունեմ ասելու,
ասեմ թէ չէ՛, արի ինձ մօտ, մի վէքսէլի թուղթ էլ
բեր զրկնք ու ևս իսկոյն գնամ Յովակիմովի մօտ. և
բանը վերջացնեմ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Հա՛, հա՛, հայրիկ, աշխատեցէք, ազատեցէք ինձ
այդպիսի խարդախներից, (Կարողեանով գնում է ասելու
շաբաթ, շաբաթ, շաբաթ):

Վարդակոյ:

ՏԵՍԻԼ Զ

ՍՏԵՓԱՆԻԿ միայն և թոնաւոր

Այ քեզ աշխարք, այ քեզ ժամանակ... աներս
հանաք էր անում... Ուրեմն ներկայումս բարեկամ
չկայ. փող ունես, զործդրաջող է—ամենքն էլ քեզ
բարեկամ են, ազգական են, ամենքն էլ քո բարեկա-

մաթիւնը են վնասում. իսկ եթէ ոողդ սլքուեց,
վայր ընկար—վերջացաւ ամեն բան. ազդ ու ընտա-
նի էլ չունես, ծնօղ ու բարեկամ էլ չունես, մի եր-
կու քաղցր խօսք ասող էլ չունես, ամենքն էլ կ'հե-
ռանան. ոչ մէկը ձեռք չի մեկնիլ քեզ, որ բարձրա-
ցնի քեզ վեր կացնի տեղեցդ, միթարի քեզ մի
քանի քաղցր խօսքերով և այնպէս սիրտ տայ, յոյս,
տայ, որ կարողանաս ուշքի գալ. հասկանալ քո դը-
րութիւնը և ըստ այնմ քո գլխի գալեքը հոգաս...
բայց լա՛ է, որ գեռ ևս չեմ վայր ընկել... Այ ա-
նիծուի այս տեսակ բարեկամութիւնը: (Շոտուս Գլ-
ուռմ է):

ԳՈՐԾՈՂԱՒԹԻՒՆ ԵՄԿԱՐԴ

ԳՈՐԾՈՂԻԹԻՒՆ ॥

ՏԵՍԱՐԱՆ ॥

ՆՈՐ ԼՈՒՐ ԵՒ ՆՈՐ ՄԻԶՔ

Տեսարանը ներկայացնում է Յովակիմովի տան առաջի պարտէզը: Ընկի վերայ աջև ձախ դրուած են ամենահասարակ փայտեայ նստարաններ և խորքում, ձառերին կից — մի չորս ոտնանի սանդուխը: Երեկոյ է:

(Վարագոյրը բարձրանում է. Յովակիմովը սանդուխի բարձրում կանգնած ծառերի տեղորդ ճուղերն է կոտորում: Ներս է մտնում Կարապիեզօվը:

ՏԵՍԻԼ Ա.

ՅՈՎԱԿԻՄՈՎ և ԿԱՐԱՊԵՏՈՎ.

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Ես ինչ սիրուն պարտէզ ունեք. ինչպէս երկում է դուք լնքներդ էք մշակների զլսին կանգնել: Բարի երեկոյ:

ԱՅՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՄԵԶ ԽԱՂԱՑՈՂՆԵՐ

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ՅՈՎԱԿԻՄՈՎ,
ԿԱՐԱՊԵՏՈՎ,
ԱՂԱԶԱՏՈՎ,

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

ՄՏԵՓԱՆԻԿ
ԱՂԱԶԱՏՈՎ,
ՎԵՐԳԻՆԵ
ԿԱՐԱՊԵՏՈՎ.

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Բարով: (իշխան է ստանդարտիկ և հօպենում է կարուտիկ): Մեծ մասը ևս ինքս եմ մշակում
ԿԱՐԱՊԵՏՈՎ

Էղբայր, ես էս բանուորների ձեռքին մալորուած
եմ մնացել. Հա գոռա, Հա ճաքիր, թէ էս էսողէս
պէտք էլինի — չիլինում էլի. էլի իրանց էջն ենքշում:
Էն օրն էլ բազմանիս բաւականին հանդիմանել եմ

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ի՞նչպէս:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Ասու մ' եմ. ոյ մարդ, գու չե՞ս հասկանում, որ ժա-
մանակն է բազի խոռը պէտք է հնձեր խաղաղները
պէտք է գաղձից ազատել, ջուրը իրտ ժամանակին
պէտք է ջրել է՛շ, որ մէկն առեմ էսոեղ (կռւռռը) է
հասել հաւատա: Է՛, էլ ինչ բարին հարցնենք:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Աղջութիւններդ, գերասիմ Գրիգորիչ: Գլուխս իոմ
զտուել է զդում: Հաւատացէք որ, չորս կողմիցս էլ
ցաւ ու հոգոփ մէջ եմ ընկել

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Հա հիմա ես եկել եմ, որ քեզ մէկ ցաւից ազա-
տիմ, Նիկիտ Խակուլիչ: — Մեր Ստեփանիկի համար
եմ առում:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, շոտարա:

Ի՞նչ է որ: Ու զումէ է առնի՞՛ Փողը ո՞րտեղից գտաւ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Նիկիտ Նակուլիչ, եկաւ, ոտներս ընկաւ, աղաչեց,
պաղատակ ու ստիպեց, որ մի 1000 մանէթ գոնէ
վերցնեմ ու գամ էդ տպարանի բանը վերջացնեմ

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ուրեմն էդ փողը դու ես տալի՞՞ս:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Ապա էլ ո՞վ պէտք է տայ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ախար իմ միտքս էն է, որ նա քեզ նեղութիւն
շտայ, որովհետեւ նա չի կարող յետ գարձնել քո
դը և պէտք է ստիպուես նրա պարտքը սառցի վր-
բոց գրել:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Դէ հիմայ ինչ որ է... Մի խօսքով միամիտ կաց,
որ ես իմ փողս, եթէ բանը էն անդը հասնի, կ'հա-
նեմ կոպէկս չեմ թողնիլ որ կորչի. Ես էն պտուղ-
ներից չեմ, որ աչքերս բաց՝ փողս հալի: Հիմայ ինչ
ես առում: Հանեմ փո՞ղը: Մի հարիւր մանէթ պա-
կաս էր, էն էլ մեր բազմանի փողիցն եմ վերցրել ու
բերել:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Զեռքինդ ինչքան է:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

1000 է, էլի. ինչքան որ ասել ես:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Չէ, եղբայր. թէ որ էդպէս է՝ 1100ից պակաս
չեմ տալ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ.

Ախար դու թոք ես Սաեփանիկին 1000 ասել:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Հա՛, ես ասել եմ, եթէ իրա աշխատածը լինի.
իսկ եթէ բանը պարագի է հասնում—1100ից կէս
կոպէկ պակաս չեմ տալ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ.

Ես քո միտքդ չեմ հասկանում Եղբայր, դու քո
փողեղ տէրը եղեր. Քեզ ինչ թէ իրա աշխատածն է
կամ պարտք է վերցրել, կամ գողացել է, չիմայ որ
բաղմանս գայ ու իմ բոլոր դինանիքս առնի, պէտք
է ասեմ թէ քու աշխատած փողն եմ ուզո՞ւմ: Ոռ
է՛, (չեռը պանելով գրանը) բանը վերջացրու 'ի սէրն
Աստուծոյ. Նա էլ խեղճ տղայ է:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Չէ՛, եղբայր, 1100ից պակաս, ինչպէս ասեցի, կէս
կոպէկ էլ որ լինի՝ չեմ տալ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ, առանձին:

Տէր ողորմած Աստուծ հա՛... (Նորոն): Հիմա հաս-
տատ ես ասում, է՞ի:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Հաստա՛տ, հաստա՛տ: Դեռ 500 մանէթ էլ ա-
ռանձին է ինձ պարագ՝ տպարանի մասին. Էն էլ
պէտք է հիմա տայ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ.

Ի՞չ 500 մանէթ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Ինքը գիտի: Եդ փողը ինձ պէտք է տար երկու
տարում, բայց որովհետև ես նրա հետ վերջացնում
եմ ամեն բան, պէտք է 500 էլ էս գլխիցը տայ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ.

Լաւ. Դրա բանը հեշտ է, մի կերպ կ'անենք. արի
էս բանը վերջացնենք: Մի 100 էլ ես եմ աւելացնում:
Համեցէք. էս 100ը, իսկ 100ը վաղը կ'գոք խանու-
թում կ'տամ: (Կամբուճ է ֆոշը առայ):

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Չէ՛, եղբայր, թէ տալիս ես հենց հիմայ, էս ըո-
պէիս բոլորն էլ տուր ու բանը վերջացնենք:

ԿԱՐԱՊԵՏՈՎ, նեղացած:

Եդ ի՞նչ կ'նշանակի: Ուրեմն ինձ էլ չես հաւա-
տո՞ւմ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Չէ՛, ի՞նչի՞ չեմ հաւատում. բայց մեր էս առու-
տուրը, իսկոյն պէտք է վերջացնենք: Ապառիկների
հետ գլուխ չունեմ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ, առելի նեղացած:

Նիկիտ Եակուլիչ, դու ինձ անպատվում ես: Հաւատացիր որ ես իմ բազմանիս հետ էղպէս չեի վարվել: Մենք առուտուրական մարդիք ենք. ինչ կը նշանակեն 100 կամ 1000 մանէթները մեր մէջ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, սրտով:

Ուղեղն ասեմ, եղբայր. որ 5000 մանէթ էլ տալու լինէք և ես իմանամ որ Ստեփանիկի համար է, էս վկայ (իտու և անում էրեսին) որ չեմ տալ: Հասկացա՞ր հիմա: Էս էլ քեզ նոր լուր:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Ա. Քեզ բա՞ն:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Հա՛, եղբայր, հիմա իմացա՞ր:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Ըմմմ... (Ֆլոյ) բայց ախր ինչ է պատճառը:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ինչ է պատճառը: Պատճառն ասեցի էլի:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Ես ո՛չինչ չեմ հասկանում:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Եղբայր, ես էղ տղային չեմ սիրում... վերջացաւ գնաց: Հիմայ հասկացա՞ր:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Դէ, հիմայ, Նիկիտ Եակուլիչ, սիրում ես՝ թէ չես

սիրում. Թող 'ի սէրն Աստուծոյ. վերցրու ինձնից փողը և հենց իմացիր որ ինձ ես ծախում, ոչ թէ Ստեփանիկին:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Գեղ ծախած, նրան ծախած, մէկ չե՞: Դու էլ նրան չպէտք է տա՞ս:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Հիմա թէ կտամ, թէ չեմ տալ, էդ իմ բանս է: Նիկիտ Եակուլիչ, համազուիր ասածիս. նա էլ մեղք է. վերջապէս ինձ ու իմ աղջկանս խնայիր, իսօր, հաւատա որ՝ Ստեփանիկը կարծես խելագարուած է:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ախր, չե՞ս իմանում, է՞:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Հիմա ինչ որ է, վերջացրու: Ախր քո դատարկ չու սիրելովդէ՝ նրան էլ, աղջկանս էլ զրկում ես մի կտու հացից...

ՅՈՎԱԿԻՄՈՎ, առանձին:

Հմմմ...

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Հը. էլ ինչ ես մտածում: (Ձեսու բանելով և խընդունով): Իմ խաթէր վերջացրու: Համեցէք փողը:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Թէ որ էղպէս է, լաւ. էղ դեռ պահիր. ես կը-

54

մտածեմու քեզ մի վերջնական բան կտսեմ փողը էն
ժամանակ կ'տաս:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Էլ ինչ մտածելու բան կայ: Միտքդ չե՞ որ ան-
պատճառ ապարանը ծախե՞ս:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ըլը... Հրամելես:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Ինքդ չասեցիր, որ մինչև 700 էլ տուող լեհի՝ կը-
առաջ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ասելն, ասեցի, բայց...

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Էլ ինչ բայց: Հիմա 700ի տեղ 1000 եմ տալիս
էլի:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

1100:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Լաւ, թող 1100 լինի. Էլ ինչ ես ուզումի

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Լաւ, լաւ. կ'մտածեմ ու վաղը քեզ կ'ասեմ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

'ի հարկէ, յուսով եմ, որ վաղը կ'համաձայնես:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

ՏԵԱՆԵՆՔ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ, փողը գնելով գրպանը:

Իսկ ես, որ էդպէս է, գնամ տունն չամ բանուոր-
ներին պէտք է ձանապարհ գնեմ, համ էլ զիտեմ,
բաղմանս պէտք է գոյ, աեսնենք բաղը ջրել է, թէ
ո՛չ Սնաս բարով:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

ԳԻՆԱՍ ԲԱՐՈՎ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ, գնալով:

Բայց իմ խաթրս չ'պէտք է կոտրես, համ:

ՏԵՍԻԼ Բ

ՅՈՎԱԿԻՄՈՎ, միայն:

„Խաթրս“ ասում է... ինչ խաթր, ինչ բան.
Խաթրս որն է... Տպարանիս տէրը Սաեփանիկը դառ-
նայ: Արեկու ան երեխէ՞ն: Մեռել եմ, ինչ է: (Մէջոյ):
Ես 30, 40 տարի չարչարվեցի, տքնեցի, հազիւ հազ
կարողացայ մի քանի շահի յետ քցիլ, մարդկանց մէջ
մարդ երեւալ, իսկ հիմայ, համեցէք. երեկ մէկ, է-
սօր երկու, ու... ուզում է տպարանի տէր դառնայ.
ինձ հետ հաւասարուի: Ո՛չ ներողութիւն կ'փրթես
Սաեփանիկ, դեռ պէտք է ծառայես. դեռ պէտք է
իմ չափ չարչարուես. տանջուես, սրա նրա ձեռքի
տակ ձնշուես. աղադ ու ընկերդ ձանաշես. կոշիկնե-
րի տեղ՝ տրեխներ հագնես. ցիլինդրի տեղ՝ ձեռքից

Ճեռք ընկած, տասը մարդու մաշած գտակ ծածկես.
Ժամացոյցի և արծաթէ շղթայի տեղ՝ պարան զցես
վեզդ, ջուր կրես... ու էնպէս աշխատես և կամաց
կամաց, շատ տարիների ընթացքում, դառնաս
մարդ... այս, ինչպէս ես: Են ժամանակ կասէիս հա-
լալ է, Ստեփանիկ, տպարան ունենալդ. 1100ի տեղ,
կասէի, տուր 500, և գնա՛, կասէի, բարով վայելես,
կասէի... թէ չէ... (Աւելի արտավ): Ե՛ս... ինչ լինե-
լու բան է: Գեռ հիմնա՛, հիմնա՛ մեզ մարդատեղ չի
դնում, իսկ վազը, որ տպարանի տէր դառնայ — մեզ
կ'ձանաչի... (Վճառական): Չէ՛, քանի դլուխս ուսե-
րիս վրայ է, Ստեփանիկ, դու տպարանի տէր չե՛ս
դառնալ... դու պէտք է սովոր զկրտաս, քանի ես
կենդանի եմ... (Գնում է, բայց Աշողաբավը ներ գուշ
չեղ է դառնառամ):

ՏԵՍԻԼ Գ

ՅՈՎԱԿԻՄՈՎ, և ԱՂԱԶԱՏՈՎ,

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ինչ էլար է՛: Գեռ ես տուն չեկած, ախար, մարդ
ու զարկեցի եակեցդ:

ԱՂԱԶԱՏՈՎ

Հարկաւոր բան ունէի: (Հերոսիքութեամբ): ՀՇը,
ինչ կայ, բան կա՞յ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Բան շատ:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ստեփանիկից ինչ լուր, դու էդ ասա:
ՅՈՎԱԿԻՄՈՎ

Լուրն էն է որ, նոր, էս բոպէիս նրա աները էս-
տեղ էր:

ԱՂԱԶԱՏՈՎ, ՃԵՄԱՔՐՔՐՈԹԵԱՄԲ:

Է՛Շը... Յետո՞յ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

1000 մանէթը բերել էր:

ԱՂԱԶԱՏՈՎ

Բերել էր. ո՞ւ մնից:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ինքն էր բերել: Ստեփանիկը, ինչպէս աներն էր ա-
սում, նրա ստերն է ընկել և աղաչել որ նա նրան օգնի:

ԱՂԱԶԱՏՈՎ

Հա՞:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Եղպէս էր ասում. նա էլ, մեղքանալով Ստեփա-
նիկին վերցրել է յիմարաբար 1000 մանէթն ու ե-
կել ինձ մօտ. (Խորհրդական) բայց էս ապացոյց է որ՝
Ստեփանիկը փող չունի:

ԱՂԱԶԱՏՈՎ

Դա գեռ ապացոյց չե. վերջը տեսնենք:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Բայց դու է՛լի համազուած ես, որ անպատճառ
փող ունի՞:

ԱՂԱԶԱՏՈՎ

Եւ ինչ ես կարծում, որ անօր բերած էր փողը
Ստեփանիկինը չե՞:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, մտածելով:

Ուղիղ որ է՛ բայց չէ՛. նա ասեց, որ մի 100 մա-
նեթ պակասեց ձեռքիս փողը, բաղմանիս փողեցն
եմ վերցրել

ԱՂԱԶԱՏՈՎ

Շատ լաւ: Ինչո՞ւ չես կարծում որ նրան էլքէս
է սովորեցրած:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, մտածելով:

Էր էլ կարող է լինել

ԱՂԱԶԱՏՈՎ

Քեզ աւելի պարզն ասեմ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ասո՞ւ, ասա՞ւ:

ԱՂԱԶԱՏՈՎ

Քեզ խօմյայտնի է, որ նրա աները թոկ չի տալ
որ խեղդուի:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ինչ արած, որ մարդը բերել էր 1000 մանեթն էլ:

ԱՂԱԶԱՏՈՎ

Տեսա՞ր, տեսա՞ր, որ էդ փողը Ստեփանիկինն է.
թէ չէ էս օրվայ խոսակցութիւնիցդ յետոյ՝ նա նրան
փող կտա՞ր... չիմայ քեզ եմ հարցնում:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, մտածելով:

Դժուա՞ր:

ԱՂԱԶԱՏՈՎ

Չէ՛, դու ինքդ լինէիր, նրա անօր տեղը՝ կտայի՞ր:
ԿԱՐԱՊԵՏՈՎ

Մի քոռ կոպէկ:

ԱՂԱԶԱՏՈՎ

Բաս էդ առատաձեռնութիւնը ո՞րտեղից էր. չէ՞
որ Ստեփանիկից:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Հըմմմ... շատ ուղիղ ես ասում: Ուրեմն ինչ ա-
նենք:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ինչ պէտք է անես: Պէտք է զգոյշ կինաս: Դու
նրան ինչպէս ես ճանաչում: եթէ մի երկու արշնի
գետնի երեսին է՝ մի հինգ էնքան էլ գետնի տակին
է, իմ արևն եմ տառմ. եթէ սատանէքանց սպասը
ալանի է լինում, իմացի՞ր, որ աղ անողը դա է:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Էդպէս է, էդպէս: Աս համոզվում եմ: Այ տղայ,
մի մարդ որ եկեղեցին չ'իմանայ, ինչ բան է. տարե-

կան տասներկու ամիս պաս պահելը չեմանայ, ինչ
բան է. նրանում մարդկութեան շնորհք կ'լինի՛ զէ՛.
քե՛զ եմ հարցնում. նրանում խղճի նշան կ'լինի՛:

ԱՊԱԶԱՏՈՎ.

Ինչ խղճմանք, ինչ բան... որ այիր — բէնը չեն
կարդո՞ւմ, էն կարդալու հետ էլ կորցնում են իրանց
խղճմանքը. և պարզ բան է խղճմանքի ետևից
ընկնե՞ն թէ կարդալու... թէ էսպէս և թէ էնպէս,
աղա, թէ և; ասենք, էս շաբաթուայ կէնդապասերը
ես էլ չպահեցի, բայց եկեղեցի գնալը... էլ ինչ ասեմ,
տեսնում ես, էլի:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Հա՛, քո բանն ուրիշ: Բայց ինչպէս է որ... (Մէ ֆո-
քը մասնաւ է): Զգոյշ կա՛ց: Դու էլ ես իմ մէջ կաս-
կածանքներ գցում, հա՛:

ԱՊԱԶԱՏՈՎ.

Չէ՛, միամիտ կացէք. մի փոքր հիւանդ էի, թէ
չէ... (Մէջոյ): Հա՛, ինչ միտս եկաւ, աղա. Ստեփանի-
կը ինչպէս է հաշուի մէջ. միշտ հաշեւ ներկայա-
ցընում է՞ թէ ո՛չ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Տօ, ինչ հաշեւ, ինչ բան:

ԱՊԱԶԱՏՈՎ, որախ:

Ինչ ես ասում:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Ես երեք տարի է, ո՞վ է նրանից հաշեւ ստա-
նում: ամեն անգամ ասում եմ. հաշեւ երբ ենք
աեսնում՞ նա էլ պատասխանում է. ո՞ւրի որ կամե-
նաք՞: —Այ քեզ հաշեւ:

ԱՊԱԶԱՏՈՎ.

ԸՆՇՐ: Էդ ինչ լաւ բան է եղել

ՅՈՎԱԿԻՄՈՎ, շտապով:

Ինչպէս:

ԱՊԱԶԱՏՈՎ.

Այ, հիմայ գնա ու նրանից հաշեւը ստացիր.
(Թջոյ) բայց չէ... դու ինձ թուղթ տուր, ե՛ս գնամ
պահանջեմ: ինչպէս մի հաշեւ պահանջեմ, որ ով
զիտէ, հազարներ տակով արած փողը լոյս զցեմ:
Դու մի ինձ իրաւունք տուր:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, որախ:

Ուղիղ. Էդ ինչ լաւ բան ասեցիր. լաւ պատճառ էլ է հա՛-
զլիսիցս նրան հեռացնելու համար: Այ լաւ միտք...
Հէնց օրն էսօր, հէնց հիմայ գնա՛. բայց չէ, գնանք
տուն, ես քեզ թուղթ տամ դրա համար, որ նա,
եթէ քնած էլ լինի, վերկացնես տեղեց, տանես ար-
պարան և քեզ հաշեւ ներկայացնի... հասկացա՞ր...

Երեք տարուանն էլ: Հիմայ քեզ տեսնենք: Ավասս որ
առաջին տարուանը ստացայ նրանից... հաշիմ ա-
ւելի շփոթուած կ'լինէր... է՛հ, բան չկայ. երեք տա-
րուանն էլ քիչ չե: (Ձեռքերը պլողելով): Այ թէ բան.
կ'լինի, հա՛ թէ կարողացար նրան գլխի վրայ շուռ
տալ ամբողջ քաղաքում խայտառակել...

ԱՊԱԶՈՒՎ

Խայտառակութի՞ւնը որն է... միայն դրանով բան
կ'դառնա՞յ: Ես որ բանը դատարանի չգցեմ ու իր ու-
նեցած չունեցածը ծախիլ-ծախծիլ տամու մի քանի
ամիս էլ բերդը նատացնեմ, հա՛... կ'բաւականանա՞մ...
Կ'թողնեմ որ էղքան արիւն պղտորե՞ն...

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Մի խօսքով՝ քեզ տեսնեմ, հ'ը:

ԱՊԱԶՈՒՎ

Դու թող ինձ վերայ, ես իմ բանս գիտեմ: Գնանք:
(Գնանք էն):

Ա Պ Ա Զ Ա Ր Ա Ր Ա Ր

ՏԵՍԱՐԱՆ III

ԱՆՇԵԱՆԵԼԻ ԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԱՐ ՆԱԽՍՉԳԱՑՄՈՒՆՔ

Տեսարանը ներկայացնում է մի ա-
մենաշքեղ սենեակ — կարինէտ Ատե-
փանիկ Պօղոսեանցի տանը. պատերը
զարդարուած են օլէօգրաֆիական գե-
ղեցիկ պատկերներով, ոսկէգոյն շրջա-
նակներում: Այ կողմում երկու լուսա-
մուտներ, որոնց միջոցում կախած է մեծ
հայելի. գրասեղան լի գրքերով, լրա-
գրներով, խառն ՚ի խուռն թղթերով,
գրութեան պիտոյքներով և մի գեղեցիկ
լամպայով: Գրասեղանի առաջ գրուած
է թեթեւ, բայց գեղեցիկ, բազկաթու:
Խորքում և ձախ, դռներ: Զախ կող-

մում երկաթեայ մաչճակալ, որից բարձը՝ պատից կախած է գեղեցկանկար եւ րոպական գորգ, իսկ նորա առաջ փուած է նոյնպէս գեղեցիկ, բայց ասիական գորգ: Բեմի վերայ դրուած են նորաձեւ աթոռներ և խորքի պատերի երկու անկիւններում, գեղեցիկ պոյտերով սենեկական ծառեր: Առաւօտեան ժամփի 9-ն է:

ՏԵՍԻԼ Ա.

ՍՏԵՓԱՆԻԿ

Մեր գործը, ես կարծում եմ, որ վերջացած պիտի լինի, որովհետև աներս, երեկ երեկոյեան Յովակիմովի հետ տեսնուելուց յետոյ, մինչև հիմա դեռ չեկել մօսս: Դորանից երեւմ է, որ նա փողը տուել է, թուղթն առել է և բանը վերջացրել. մընացել էր միայն հաշիւը՝ այն էլ երեկ երեկոյեան Աղազատովը եկաւ և ստացաւ ամենայն ճշառութեամբ: Բայց ո՞րպիսի հաշիւ... ամեն մի կետադրութեանը, ամեն մի չնչին ջնջուածքին, ամեն մի թափած թառաքին՝ ուշքեր դորձնում: մի խօսքով, որքան ես նը-

կատեցի՝ նորա նպասակն էր գտնել իմ մէջ կեղա, կամ տակով արած գումար և պյտ պարզէր, հասկացնէր Յովակիմովին, ի՞նքը ստանար նորանից շընորհակալութիւն և ինձ գցէր թակարդի մէջ... բայց այդ նորան չ'յաջողեց, ամեն բան գտաւ մաքուր: առանց յետին մտքերի. ծախքն էլ, մուռքն էլ, մընացած փողն էլ... (Նայելով լուսամոռին) Ըհը. այս էլ ինքը Աղազատովը... ինչ կնշանակէ արդեօք սորա այս կրկին այցելութիւնը:

ՏԵՍԻԼ Բ

ՍՏԵՓԱՆԻԿ և ԱՂԱԶԱՏՈՎ:

ԱՂԱԶԱՏՈՎ

Բարեւ. Էդ ինչպէս է, որ մինչև հիմայ դուրս չեւ եկել:

ՍՏԵՓԱՆԻԿ, կեղծատղելով:

Մի փոքր գործ ունեի տանը. խէ՞ր լինի:

ԱՂԱԶԱՏՈՎ

Խէր չ'ելած ինչ պէտք է լինի: Ես եկել եմ խընդիրելու ձեր տպարանական տօմարները: (Հանում է գլուխուց ալենացնել ծիսիւ-ու և առաջընկում է Սահմանին, որը չէ ընդունում, իսկ ինչը ծիսում է):

ՍՏԵՓԱՆԻԿ

Շնորհակալ եմ. նոր ծիսեցի: Ձեր ինչին՞ են հարկաւոր մեր տօմարները:

ԱՂԱԶԱՏՈՎ

Տանեմ Նիկիտ Կակուլին ցոյց տամ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ջա՛րմանալի բան:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ոչի՞չ չ'կայ զարմանալու. չպիտե՞ս միթէ նրա բը-
նուժիւնը. նա կարծում է թէ խօսքներս մէկ ենք
արել և հաշեւը թող ու մոխիր ենք շնել ու փը-
շում նրա աչքերին:

ՍՏԵՓԱՆԻԿ

Չեմ հասկանում ես ձեզ, պարոն Աղազատով:

ԱՂԱԶԱՏՈՎ

Տօ դէ ինչ կայ շհասկանալու. ինքն էլ է ուզում
տեսնել տօմարներն, էլիւ Ես քե՛զ ասեմ որ չես օ-
գուտ քաղել էդպէս դէպքից: Ես քո աեղը լինէի,
նրա հայրը կ'անիծէի. երկու գլուխն էլ կ'ուտէի և
նրան մի լպսուած մատ ցոյց կտայի:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ո՛չ, այդ իմ կանոնիցս հեռու է:

ԱՂԱԶԱՏՈՎ, երկարացնելով:

Ինչ կանօն, ինչ մարդկութիւն, ինչ պատիւ...
դու դեռ, հաւատա որ անփորձ ես. իրաւունքը
ձեռքդ ընկաւ, քաշեր, ձղեր, քանդիր, կեր... ու օ-
րուանդ համոր մի քանի կոպէկ յետ դցիր: Հաւա-
տա որ, եթէ բանը պատուի, մարդկութեան ազ-

նըգութեան զցես՝ (Խիելով կորին) էս անտերը սոված
կ'մնայ, սոված, սոված կ'զրկաւայ մարդ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Եթէ այդպէս է, դուք ինչու օգուտ չեք քաղում
այդպիսի հանգամանքներից. — այս, հենց ձեր գործա-
րանից:

ԱՂԱԶԱՏՈՎ

Եւ ինչ ես կարծում որ օգուտ չեմ քաղում. ինչ
ես կարծում որ երկու զլուխն էլ չեմ ուտում ու
նրա աչքերին թող ու մոխիր վշում, երեսին սիլի
բիլ անում ու քամակից իմ զիտեցածս անում, եօթը
պորաը անիծում ու ամեն տեղ էլ պարծենում: Ինչ
ես կարծում:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ցեաց որ ականջն ընկնի՞:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ընկնում է ընկնի... կարծում ես չի ընկնում. բայց
դու ասա որ հաւատայ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Չէ հաւատո՞ւմ:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ինչպէս կ'հաւատայ. Ես էնպէս գործ կ'բռնեմ, որ
աչքով էլ տեսնի չի հաւատալ, քո արելը վկայ: (Եւ-
ուշով): Կե՛րալը պէտք է իմանալ, կ'բալը... թէ չէ
քեզ պէս որտում (ծաշրեւով) ազնուութիւն, մարդկութիւն,

պատիւ՝ (իսչ է անում) էս վկայ է, որ քաղցած կը-
մնամ, Աստուած վկայ է՝ քաղցած կ'մնամ, գլուխս
մեռնի՝ թէ սուտ եմ ասում: Յս քեզ սրանից երկու
տարի առաջ էլ ասեցիր. որ ինձ լսէիր, ես իմ Աս-
տուածը, որ հիմայ հինգ-վեց հազարին փող չեիր
ասիլ: Բայց ինչ... (ծաղրելով) մարդկութիւն, պա-
տիւ: Տօ՛, մարդկութիւնն էն է՝ որ մարդ աշխարքի մէջ
ապրի, իսկ թէ ինչ ճանապարհով — էն էլ ինքը գի-
տի. պատիւն էն է՝ որ մարդ իրա փորի պատիւն ի-
մանայ: Զէ, քեզ եմ հարցնում: սուտ եմ ասո՞ւմ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Այսինքն... ուղեղ էլ չեք ասում:
ԱՂԱԶԱՏՈՎ, նեղացած:

Տօ դէ գնա է՛: Դու, ես իմ Աստուածը, որ աշ-
խարքի երեսին ապրել չեմ կարող: Մնաս բարով: (Գն-
առն է և յեպ դաստիառ): Հա, ինչ ասեցիր. մի քո-
քոքերը տուր տանեմ է՛:

ՍՏԵՓԱՆԻԿ

Բայց ինչո՞ւ համար:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ասեցի որ Նիկիտ Եակուլիսը ուզում է տեսնել:
Հէնց օրն էսօր իմ ձեռքով կ'բերեմ... ինչ կայ որ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ինչ պիտի լինի, երբ հաշիւս պարզ է. թող թէ-
կուզ նորա պապը վեր կենայ գերեզմանից և քննի:

Ինչ և իցէ... Մի կէս ժամից յետոյ եկէք տպարանը.
ևս այնտեղ կ'լինեմ և կտամ:

ԱՂԱԶԱՏՈՎ

Շատ լաւ, մնաս բարով: (Գնառն է և յեպ դաստիառ) բայց էս էլ ասեմ քեզ դու որ էդ ճանապարհն ես
բռնիւ՝ շատ ու շատ սխալուած ես. մնաս բա-
րով: (Գնառն է):

ՏԵՍԻԼ Գ

ՍՏԵՓԱՆԻԿ և յետոյ ՎԵՐԳԻՆԵ

ՍՏԵՓԱՆԻԿ, միայն:

Օ՛չ... այս ինչ շրջանի եմ հանդիպել, Տէր իմ
Աստուած... այս ինչ մարդիկներ կան աշխարհիս
մէջ... Եւ այսպիսի մի հրէշ, իրեն ինձ բարեկամ է
ձեւացնում, խորհուրդներ է տալիս ինձ... երբ իւր
համար ոչիչ սուրբ բան չ'կայ. նա պարզ ի պարզ
ասում է, յայտնում է իւր կարծիքը, իւր կեանքի
վերայ հայեացքը... բայց Տէր իմ, մի հրէշացած կեր-
պարանք տալով նորան, սրբապղծում է նորան... և
կամենում է ամբողջ մարդկութիւնը հետեւցնել իւր
համոզմունքին... Օ՛չ, թող անդունդն իշնեն այդ-
պիսիները:

ՎԵՐԳԻՆԵ, գալով:

Ստեփանիկ, ինչ պիտի այսօր Ճաշի համար պատ-
րաստել. Ժամի տասն է գնում և գեռ ոչինչ չէ գը-
նած փողոցից:

ԱՏԵՓԱՆԻԿ

Ինչ կամենում ես գնել տուր՝ 'ի սէր Աստուծոյ և
թողինձ իմ ցաւերիս մէջ:

ՎԵՐԳԻՆԵ

Ինչ գնել տամ, կամ ինչո՞վ գնել տամ. ձեռքիս ե-
ղած կոպէին էլ երեկ ուղարկեցի փողոց; իսկ հիմա
ոչինչ չունեմ:

ԱՏԵՓԱՆԻԿ

Եթէ դու չունես, իսկ ես ոչինչ չունեմ այս, հա-
մարեա, ամբողջ շաբաթ է որ ձեռքումն կէս կոպէկ
չկայ. պիտի որ գիտենաս:

ՎԵՐԳԻՆԵ

Ապա հիմա ինչ անենք:

ԱՏԵՓԱՆԻԿ

Ինչ պիտի անենք. ուրեմն այսօր էլ պիտի ծօմ
պահենք երեկուայ պէս:

ՎԵՐԳԻՆԵ

Վերջապէս մինչեւ ե՞րբ:

ԱՏԵՓԱՆԻԿ

Մինչեւ տեսնենք՝ երբ պիտի ձեռքս փող ընկնի:

ՎԵՐԳԻՆԵ

Գոնէ ուսումնարանից չունե՞մ ստանալու:

ԱՏԵՓԱՆԻԿ

Ուսումնարանից: Ուսումնարանից ինչ պիտի ըս-
տանամ, ինչ որ ստանալու էի վաղուց է որ ստա-

ցել եմ. այն էլ տուեցի այն գորգին, որ հիմա միւս
սենեակում զցած է:

ՎԵՐԳԻՆԵ

Տեսնո՞ւմ ես. ստացածդ տալիս ես գորգի, պատկե-
րի, սեղանի, կառաւաթների...

ԱՏԵՓԱՆԻԿ, Կարելով նորա խօսքը:

Ես քեզ քանի անգամ եմ ասել, որ կառավաթին,
մահճակալ պիտի ասել: Մինչեւ ե՞րբ:

ՎԵՐԳԻՆԵ

Դէ լաւ, մահճակալ հր': (Ա. Ա. Յիշին): Այս օրուայ հաց
չունենք ուտելու, մահճակալ' է ուղղում: Մահճա-
կալների ես տալիս, հանդերձեղենի, զգիտեմ սեղան
ու աթոռի, լրագլների ու ամսագրերի՝ իսկ հիմա
ցամաք հացի փող չունենք որ այսօր կառավարու-
ենք: Ասա՛ աեսնեմ՝ ինչի՞ համար են սոքա, (այս է
պալիս մէնելը, զարտելը, պատէները և այլն) ինչի հա-
մար են այս ամենը, երբ հիմա հաց չեն դառնում:
Տունդ և ամեն պարագաներդ լաւ, գեղեցիկ, լի ամեն
բանով, իսկ փորդ ու գրապանդ դատարկ:

ԱՏԵՓԱՆԻԿ

Օհ, Վերգինէ, դու, հաւատա որ, զզուեցրիր ինձ
քո դատարկ խրաներով:

ՎԵՐԳԻՆԵ

Չէ, մի ասա տեսնեմ, իմ խօսքերս են դատարկ,
թէ քո գրապանը:

ԱՏԵՓԱՆԻԿ

ՀԵԿ երկուսն էլ դատարկ են
ԳԵՐԳԻՆԵ

Եմ էլ ասում եմ. որ այդպիսի բաներից, աւելոր-
դութիւններից հեռանաս և այն ժամանակ գրպա-
նը լեռ կ'ունենաս:

ԱՏԵՓԱՆԻԿ

Ինչ ես խոսում Վերգինէ, բաւական է վերջապէս:
Միթէ՞ այսքան տարուայ մէջ չ'իմացար, չ'ընտելացար
իմ բնութեանս: Քանի անգամ ասել եմքեզ որ լաւ
է քաղցած մնալ՝ քան կեղտոտ, որ լաւ է աղքատ
մնալ և իւր մարդկութիւնը, ագնուութիւնը պահ-
պանել՝ քան թէ հարստանալ, բայց կեղտոտ, կեղ-
ծաւոր, քսու, կոշափող և անողորմ լինել Վերջա-
պէս դու լաւ գիտես՝ թէ ինչ մարդկանց հետ եմ
նիստ ու կաց անում: Ո՞վ է իմանում թէ մենք այս
օրուայ ու տելու հաց չ'ունենք. բայց մեր այս տե-
սակ արտաքին կառավարութիւնը աւելացնում է մեր
պատիւը, նշանակութիւնը՝ բարձրացնում է մեզ շատ
և շատ կողմերով: Դու չ'գիտես, որ հասարակական
կարծիքը ընդունում է քեզ հագուստիդ, շարժման-
քիդ, մինչև անգամ և արտաքին կառավարութեանդ
քիդ, իսկ ձանապարհ է դնում—իւրքդ, հաս-
կացողութիւնդ չափելով: Եւ վերջապէս...

ՎԵՐԳԻՆԵ

ՀԵԿ այդ է որ քո թշնամիքդ շատացնում ես է:

Այդ չէ՞ պատճառը, որ Յովակիմովը կամ միւսները
կարծում են թէ ապարանի եկամուտը ամբողջապէս
ուտում ես:

ԱՏԵՓԱՆԻԿ

Այնպիսիները թող կարծեն ինչ որ կամենում են,
որովհետեւ նորանք մարդիկ չեն, այլ ոսկով և թան-
գագին ակունքերով զարդարուած, բայց անզգայ կուռ-
քեր են, մարդկային խրտուիլավներ են:

ՎԵՐԳԻՆԵ

Դու այդպէս ասա, երբ այնպիսիները քեզպէսնե-
րի վերայ նայել անգամ չեն կամենալ:

ԱՏԵՓԱՆԻԿ

Իսկ ես թքել անգամ չեմ կամենալ նոցա վերայ,
հասկանում ես, թքել անգամ չեմ կամենալ նո-
րանք ինչ են, ասա տեսնեմ, երբ չեն մասնակցիլ ոչ
մի բարեգործութեան՝ նորանք ինչ են, երբ անզգայ,
անողորմ են դէպի իրանց տկար եղայրը, մինչև ան-
գամ և այն դէպքում, երբ ողորմելին արդէն վեր-
ցին շնչի վերայ է, գոռում է, աղաչում է, օգնու-
թիւն է խնդրում... բայց դորա փոխարէն՝ նորանք
պատրաստ են զեռ հալսծել նորան, խլել նորանից
վերջին յշալը...

ՎԵՐԳԻՆԵ

Հիմա տեսնենք նորանք հաց ունին թէ դու՝ երբ
նորանք այդպիսի դէպքերում անզգայեն, իսկ դու

ՍՏԵՓԱՆԻԿ

Այս, ես ոչինչ չեմ ուախը ձեռքիս վերջին թիգէն կտամ քաղցածին, հարկաւոր եղած ժամանակ հագիցս շորս կ'հանեմ և կ'տամ մերկին, եթէ այն տեղն ընկնի ես այս բոլորը կ'ծախեմ կ'ծախծիւմ և կ'օգնեմ կարոտելցին, որովհետև ես գո՞նէ մի ծածկ ունեմ և կարող եմ նորա տակ ազատել ինձ, իմ ընտանիքս բնութեան արհաւորքներից, իսկ նա երբէք... մի այսպան տեղ չունի որ գո՞նէ պարկի: Ես մի՞թէ այնպիսից կարող եմ խնայել:

ՎԵՐԳԻՆԵ

Ուրեմն այդ էլ է քո թոյլ կողմը:

ՍՏԵՓԱՆԻԿ, տաքացած:

Այս, թոյլ բայց ամենաազնիւ, ամենավսեմ, ամենաբարձր կողմը:

ՎԵՐԳԻՆԵ, կրքոտ:

Ուրեմն դու մա քո այդ ամենաազնիւ, ամենավսեմ, ամենաբարձր կողմում—բայց միւնոյն ժամանակ ամենաազքատ, ամենագառը, ամենաղժուար և ամենաքաղցած դրութեան մէջ, տեսնենք վերջին էլ լինելու:

ՍՏԵՓԱՆԻԿ, համոզելով:

Ոչ, այսուհետև յուսով եմ, որ մենք շատ մեծ նեղութիւն չենք քաշել. տպարանը հիմա, ինչպէս երեսմէ, մեզ քրոյ է մնացել. մենք միասին կ'աշխատենք, միասին կ'գործենք, միասին հանգիստ կ'ապ-

զգայուն և ամիս, մինչև անգամ շարտթ չի լինի, որ դու փողեր չ'փչացնես, չ'կորցնես այս կամ այն հիմնարկութեան, այս կամ այն բարեգործութեան, այս կամ այն խեղճ կամ որբ ընտանիքի համար:

ՍՏԵՓԱՆԻԿ

Օ՛չ, վերգինէ, զզուեցրիր ինձ. ուրեմն այսպան տարէն իմ քեզ տուած օրինակները, ապացոյցները, փորձերը չ'կարողացան քեզ համզել.

ՎԵՐԳԻՆԵ

Վաւական է վերգինէ, բաւական է. դու ինձ համբերութիւնից հանեցիր. մինչ այդ աստիճան չէի ըստ պասում քեզանից, նամանաւանդ որ հազար անգամ քեզ բացատրել եմ այդ տեսակ հարցեր:

ՎԵՐԳԻՆԵ

Բաւական է վերգինէ, բաւական է. դու ինձ համբերութիւնից հանեցիր. մինչ այդ աստիճան չէի ըստ պասում քեզանից, նամանաւանդ որ հազար անգամ քեզ բացատրել եմ այդ տեսակ հարցեր:

ՎԵՐԳԻՆԵ

Դէ լսւ, ես մեղայ Աստուծոյ. քաղցան մաս հը, տեսնենք ինչ պիտի ուտես այսօր:

բենք, միայն թէ զու մոռացի՞ր, արմատախի՞լ արա,
խնդրում եմ, քո մոքից այդ վաս գաղափարը և հետեւիր ինձ:

ՎԵՐԴԻՆԵ

Այո, ես պատրաստ եմ քեզ հետ հաւասար աշխատելու ամեն, ամեն դէպքում: ինչպէս ասում էիր՝ ես ինքս գրաշարութիւն կանեմ, մրազարկութիւն կանեմ, վերջապէս ամենավերջին գործը կը կատարեմ տպարանում, բայց...

ՍՏԵՓԱՆԻԿ

Բայց ինչ:

ՎԵՐԴԻՆԵ

Բայց չեմ թողնիլ, որ իմ դառը քրտինքով աշխատած վատնես, փչացնես այս կամ այն յիմարթութիւնների վերայ:

ՍՏԵՓԱՆԻԿ, ձեռքը խիստ է ճակատին և ընկնում բազկաթռափ խորքը:

Ախ կրթութիւն... կրթութիւն: (Միջոց):

ՏԵՍԻԼ Դ

Նոյնք և ԿԱՐԱՊԵՏՈՎ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Բարե ձեզ: (Նորանք բարեռում են, բայց չամաց): Հը, ինչո՞ւ էք էղպէս տիսուր... իմացել էք բանի հանգամանքը:

ՍՏԵՓԱՆԻԿ և ՎԵՐԴԻՆԵ, միասին:

Ինչ հանգամանք, ինչ կայ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

ՈՇինչ.—տպարանի համար եմ ասում:

ՍՏԵՓԱՆԻԿ

Զէ, ինչ կայ... ինչպէս եղաւ. ինչու այսքան ուշացաք, հայրիկ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Ուշանալուս պատճառն էն էր, որ երեկ ուշ գընացի տուն Յովակիմովի մօտից: Տանն էլ մեր բաղմանը սպասում էր ինձ. բանուորներն էլ էին կանգնել ու սպասում, որ գնամ նրանց օրավարձը տամ:

ՍՏԵՓԱՆԻԿ, անհամբերութեամբ:

ՅԵՄՈՒՅ

ԿԱՐԱՊԵՏՈՎ, հանգիստ:

Յետոյ բանուորներին, ում ինչ հարկաւորն էր առեցի ու ճանապարհ դրեցի:

ՍՏԵՓԱՆԻԿ

Լաւ. տպարանի՞ բանը ինչպէս վերջացրիք:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Ասեմ, ասեմ, ինչ ես շտապում:

ՎԵՐԴԻՆԵ

Դէ ասում ես, ասա, հայրիկ, մենք մերն առանք:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Է՛, հիմա ինչ անենք. ինչ որ եղել է կասեմ, էլի:

ԱՏԵՓԱՆԻԿԱ, անհամբեր:

Ասացէք, ասացէք ինդւեմ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Բաղմանիս էլ ինչ հարկաւորն էր ասեցի ու նը-
րանից յետոյ գնացի քաղաքային դումեն:

ԱՏԵՓԱՆԻԿԱ, անհամբեր:

Չէ, մի ասացէք, թէ ինչպէս վերջացրիք Յովա-
կիմովի հետ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Ասեմ էլ... դու էլ խօմ բաղմանս չ'դառար գրւ-
խիա՝ նա էլ էդ տեսակ բնութիւն ունի: Երեկ, ես
ասում եմ նրան...

ԱՏԵՓԱՆԻԿԱ, առանձին:

Օ՛՛... (Նորան): Հայրիկ թողէք 'ի սէր Աստուծոյ
ձեր բաղմանը... ասացէք թէ բա՞նն ինչումն է:

ԿԱՐԱՊԵՏՈՎ

Ովկէ... ասեմ, ասեմ... Փողը տարայ. -1000 մա-
նէթն էլ, Յովակիմովը առաջ ասեց թէ 1000ով չեմ
տայ:

ԱՏԵՓԱՆԻԿԱ

Ախար երեկ առաւօտեան ինքն ասաց ինձ թէ
շշուտ բեր փողը, ես քեզ հազարով էլ կ'տամ»:

ԿԱՐԱՊԵՏՈՎ.

Ե, հիմա ինչ արած որ էլ չի տալիս. Հազար հա-
րիւր էլ առւեցին:

ՎԵՐԳԻՆԵ

Հազար հարիւր էլ առւեցի՞ր:

ԿԱՐԱՊԵՏՈՎ,

Տալը առւեցի, բայց...

ԱՏԵՓԱՆԻԿԱ

Բայց ինչ... չհամաձայնեց:

ԿԱՐԱՊԵՏՈՎ,

Չ'համաձայնեց...

ՎԵՐԳԻՆԵ

Ինչո՞ւ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ,

Քո հինգ հարիւր մանեթ պարտքն էլ էս գլուխ
ուզեցի:

ԱՏԵՓԱՆԻԿԱ

Ախար ես նորա հետ պայման ունեմ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ,

Նա ոչինչ չուզեց իմանալ:

ԱՏԵՓԱՆԻԿԱ

Դո՞ւք ինչ ասեցիք:

ԿԱՐԱՊԵՏՈՎ,

Ասեցի դրա բանն էլ հեշտ է, էդ էլ կ'տամ, ա-
սեցի:

ԱՏԵՓԱՆԻԿԱ

Իսկ նա՞:

ԿԱՐԱՊԵՏՈՎ,
ՏԵՍԱՆ որ էն էլ ենք տալիս, էլի չ'համաձայնեց:

ՍՏԵՓԱՆԻԿ

ԻՆՉՈՒ

ՎԵՐԴԻՆԵ

ԻՆՀ ասաց:

ԿԱՐԱՊԵՏՈՎ,

Ասեց՝ որ Ստեփանիկի համար էք ու գում... պարզն
ասեմ, ասեց... որ հինգ հազար էլ տալու լինեք,
չեմ տալ ասեց:

ՍՏԵՓԱՆԻԿ և ՎԵՐԴԻՆԵ, Թառին:

ԻՆՉՈՒ, ԻՆՉՈՒ

ԿԱՐԱՊԵՏՈՎ.

Ես Ստեփանիկին, ասեց, չեմ սիրում իմ և նրա
ջուրը, ասեց, մի առօռով չի գնում:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ախար ինչո՞ւ, ինչո՞ւ... ես նրան ինչ եմ արել:

ԿԱՐԱՊԵՏՈՎ.

Չ'գիտեմ, հաւատու: Ինչքան արեցի - չարեցի, չը-
էլաւ. բայց չէ, առաջ խոստացաւ մտածի. յետոյ
դումայում ինձ վերջնական ասեց թէ՝ յոյսդ կորիր
որ միլիօն էլ տալու լինեք՝ էլի չեմ տալ. ես իմ կես
մաս պէտք է ծախեմ Աղապատովին, ասեց:

ՍՏԵՓԱՆԻԿ, արսափած:

Աղապատովին... այն խորդախի՞ն... (Մասնաւ է):
Ախար ինչո՞ւ համար. ապա մի երկու խօսք գոնէ

Հ'ասա՞ց, որից կարողանանք եզրակացնել պատ-
ճառը:

ԿԱՐԱՊԵՏՈՎ.

Նրա խօսքն էս էր թէ, ինձանից լաւ է հագնվում,
ինձանից լաւ ապրում... ինձանից...

ՍՏԵՓԱՆԻԿ

ԻՆՁԱՆԻՑ ԻՆՀ:

ԿԱՐԱՊԵՏՈՎ.

Ինձանից աւելի լաւ մարդկանց հետ է նատաւմ
վեր կենում: ինձ աղա չի ասում:

ՍՏԵՓԱՆԻԿ, դարմացած:

Աղա... Այքեղ բան... Ուրեմն միայն դոր՝ անց հա-
մար է նա ինձ կամենում ոտի տակ տալ, զրկել մի
կտոր հացից... Աղապատովի հետ ընկերացնել... (Վը-
հոգութած): Հասկանում եմ դորա հետեւանքը...

ՎԵՐԴԻՆԵ, աելի կրտս:

Տեսա՞ր, Ստեփանիկ. խօսքերս ուղղուեցան: Դէ հի-
մա ինչքան պատկերներ կամենում ես՝ գնիր... ում
ինչ ողորմութիւն, օգնութիւն անում ես՝ արա...
Հիմա գիտեմ որ կուշտ ես: (Շոտոյն և բարիայոծ
ուռը և գնում: Ստեփանիլը սուսած և յուստհոգութ նոյն է
նորու երկեց):

ՍՏԵՓԱՆԻԿ

Յովակիմովի արարմունքը, Վերգինէ, այնքան ինձ
չ'արուածեց, որքան քո այդ վարմունքը ու խօս-

Քերդ: (Թաղթինակով աշխելը ծածկում է և շնչում է
բոլիումի մէջ):

ԿԱՐԱՊԻՑՈՎ, զարմացած:

Վա, ինչ է, ինչ... Ստեփանիկ... Են աղջիկը գը-
ժուեց: (Գնում է վերջինեւի եռեկյ):

ՏԵՍԻԼ Ե

ՍՏԵՓԱՆԻԿ

Մայր իմ, մայր իմ, ինչու ծնար ինձ: Ես գար-
նան ծաղկի պէս չեմ կարող դիմանալ ձմռան անտա-
նելի սառնամանիքներին: Բայց գեռ նոր բացուած...
արդէն կեանքիս ձմեռը հասել է: Գնաց, թռառ
գարունս...

„Ինձ համար չէ գարնան գալը,
„Ինձ համար չէ ծառի ծաղկելը,
„Ուրախութեան սրտի գրգիռը՝
„Ոչ մի բերկրանք չեն ինձ համար:

(Առողջին: Մուզիկան ածում է այդ եղանակի մէկ տոնը):

Այո, բերկրանքը ինձնից վերացաւ... գնաց ան-
դառնալի... Տէր իմ, Տէր իմ, ես ինչո՞վ մեղանչեցի
քո դէմ, որ այսպիսի ձախորդութեանց եմ ենթար-
կրվում, որ այսպիսի հրէշների ձեռք ընկած՝ տան-
ջըւում, առջորւում եմ... Միթէ այս էր իմ արժա-
նաւոր վարձը:

(Թաղկինակով աչքերը ծածկում է, բազկաթռոի մէջ ընկած: Մու-
զիկան կրկնում է նոյն եղանակը: Երեսմ է գուան մէջ գերգինէն և

նկատում է Ստեփանիկի դրաթիմը: Վերջնը, լսելով նորա հան-
գերձի խշխոցը, իսկոյն թաղկինակը թագնում է):

ՏԵՍԻԼ Զ

ՍՏԵՓԱՆԻԿ և ՎԵՐԳԻՆԵ

ՎԵՐԳԻՆԵ, առանձին:

Այս ինչ արեցի ես... (Մագիստրով) Ստեփանիկ, նե-
րիր ինձ. խնդրում եմ, ներիր ինձ... ես երեխայու-
թիւն արեցի... Մի քանդիր քո տունը. Հիմնա-
յառակ մի անիր նորան... հասկանո՞ւմ ես. գոնէ
խղճա միակ երեխայիդ... Դու լորում ես:

ՍՏԵՓԱՆԻԿ, յուսահատ:

ՎԵՐԳԻՆԵ, Յովակիմովի արարմունքը այնպէս ինձ
չշանթահարեց, որքան քո վարմունքդ:

ՎԵՐԳԻՆԵ

Ներիր ինձ, չմոածեցի... Հօրս ասածը ինձ մոռա-
ցնել տուեց ամեն բան:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ուրեմն գուշ գոնէ զզջո՞ւմ ես քո արածը, խոս-
անո՞ւմ ես չկրկնել և հետեւ ինձ:

ՎԵՐԳԻՆԵ

Այն մի շփոթութիւն էր: Միշտ և միշտ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ուրեմն ասա՛, ասա՛ գոնէ դու... մի խելք գիր գը-
շուիս... մի ելք գտիր իմ դրութեանս:

ՎԵՐԳԻՆԵ, սիրու տալով:

Ի՞նչ է քո դրութիւնը... ասա մի տեսնեմ... զոր-
կում են... Աստուած էլ իրանց զբկի:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ո՛չ, դա բաւական չէ... դա մսիթարութիւն չէ
իմ խոցոտուած, քերքերուած սրտիս ինձ ապրուստ է
հարկաւոր... ինձ միջոց է հարկաւոր, որով կարո-
ղանամ պահէլ տունս, զլուխս և որ ամենից վեր է
անունս:

ՎԵՐԳԻՆԵ

Ի՞նչ ես վշատուում ինչն է քեզ ստիպում չկա-
րողանալ, ինչը. եթէ այն տեղն ընկնի, որ քեզ բօ-
լորովին կ'զրկին, այն ժամանակ կ'շարունակես դաստ-
ուումնարանում:

ՍՏԵՓԱՆԻԿ

Բայց վարձը չնշին է:

ՎԵՐԳԻՆԵ

Ոչինչ ես էլ կ'օգնեմ քեզ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ի՞նչպէս:

ՎԵՐԳԻՆԵ

Եորեր տաես՝ կ'վերցնեմ կարելու. գործուածք ա-
սիս՝ կ'նդունեմ. ինչ տեսակ ասղնեգործութիւններ
տաես՝ կ'անեմ. այդպիսով կ'պաշտպանենք իրար և մեր
երեխային... Ել ինչ կայ, ասա տեսնեմ. վախենում

ես գիշեր ցերեկ չնստեմ... Մի՛ վախեցիր, սիրու
լայն պահիր և յշադ դիր Աստուծոյ վերայ:

ՍՏԵՓԱՆԻԿ, սիր առած:

Թէ և գորանով ոչինչ չի լինիլ, բայց ես քեզ այս-
քան կասեմ. ինչպէս հիմքից քանդեցիր սիրոս, այն-
պէս և կանգնեցրիր. շնորհակալ եմ:

ՎԵՐԳԻՆԵ

Ոչ ապաքին այս խօսքերս՝ արտայայտութիւններ
են քո իմ մէջ արմատացրած մոքերի... հիմա ինչ-
քըդ ես վհատում:

ՍՏԵՓԱՆԻԿ

Շատ լաւ ես ասում, վերգինէ, բայց ես չեմ կա-
րող տեսնել այն օրը, որ պիտի այդպիսի դրութեան
մէջ լինենք. մեր գործի փոփոխութեան հետ կրփո-
փոխուի նա և մեր վերայ հասարակական կարծիքը.
փոփոխուելով հասարակական կարծիքը—կ'մահացնի
ինձ. այլ ևս ինձ համար կեանք չպէտք է լինի: Քա-
նի անգամ եմ ասել քեզ, որ տարիներով աշխատած,
ձեռք բերած անունդ՝ մի չնշին սուվ կարելի է հա-
լեցնել, եթէ այդ սուտ աարածողները զօրեղ մար-
դիկ են... իսկ... իմ դեմ... զօրեղ են:

ՎԵՐԳԻՆԵ

Բայց ինչո՞ւ ես վշատուում: Երեսը երեսից կը-
ամացի. գու գնա հօրիցս ստացիր 1000 կամ 1100
մանեթը և ինքդ գնա վերջացրու քո բանը: Գնա
հա՛, անպատճառ գնա: Խոկ ես գնամ, երեխան լայ-

է լինում: (Մագիստրում է, հայբուրնում է Առեփոնիլին և
շոտողով գնում է):

ՏԵՍԻԼ Ե

ՍՏԵՓԱՆԻԿ, միայն:

Այս, շատ լաւ ասաց Վերգինէն. այդպէս էլ պէտք
է արած: (Միջոց): Բայց Յովակիմովի կողմից այդ ինչ
վարմունքներ են իմ դեմ: Ինչ կ'նշանակեն դոքա:
Ինչ կ'նշանակի ուրեմն Աղազառովի հաշիւ պահան-
ջելը և ինչ ձեւ էր տուել նա իւր հաշուատեսու-
թեանը և վերջապէս ինչ կ'նշանակի տպարանի մա-
սր նորան ծախելը... (Միջոց): Ախ, հիմա՝ հասկացայ
Աղազառովի տօմարներ խնդրելու նպատակը... Դո-
քա կամենում են ինձ խեղդել, հողի հետ հաւա-
սարացնել որ կարողանան զրկել ինձ իմ իրաւուն-
քից... ծիծաղել վերաս... ծափ զարկել և դիւական
ուրախութիւններով զուարձանալ... Զուարձանալ ում
վերայ. — մի խեղճի, որին համարեա փաթաթել են
իւրեանց թռոփ մէջ... որին, իւր պարզմատութիւնից օ-
գուտքաղելով, համարեա կալել կապել են... Եւ' ի հար-
կէ այդ նպատակաւ էլյանձնուել է Աղազառովին հաշ-
վատեսութիւնը: Յանձնուել է նորան, ծախփում է
նորան... որովհետեւ նա սատանայ է, նա խարդախ է
և դէմ չի կենալ ոչ մի զըպարտանքների, ոչ մի շա-
րագործութեանց: (Միջոց յառաջապատճեա): Խակ այս բոլորը
գործփում է ինչո՞ւ համար, ինչ նպատակու...

(Միջոց): Ահ, ես ցնդվում եմ, ցնորվում եմ և
չեմ կարողանում գտնել այն հետքը, որի վերայ
հաստատուած գոքա գնում են: (Միջոց): Ես տեսնում
եմ, ես զգում եմ իմ դառը վիճակիս վրէժինդիր խա-
ղը... ես տեսնում եմ նորա զգուելի Ճիրանները...
երևակայութեանս չար նախազգացմունքները, որպէս
միրաժ նկարագրուում են առաջիս... Ես տեսնում
եմ... ես տեսնում եմ այս բոլորի հետեանքը՝ հե-
ռաւոր, բայց թափանցիկ վարագուրով ծածկուած
մառախուղի մէջ, որ՝

„Մահառիթ սպանիչ գնտակը

„Անդ պատրաստուած է ինձ համար:

Ինչ որ լինում է թող լինի. գնամ և տեսնեմ:
(Շոտողով գնում է):

Ա սրբագոյն:

ԳԱՐԵՎԱՂԱԽԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ III

ԱՅՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՄԷջ ԽԱՂԱՔՈՂՆԵՐ

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐԱԿ

ՅՈՎԱԿԻՄՈՎ
ՍՏԵՓԱՆԻԿ
ԱՊԱԶԱՏՈՎ
ԳՐԱՇԱՐ
ՏԳԻՉ
ՄՐԱԶԱՐԿ. } տպարանական ծառայողներ:

ՏԵՍԱՐԱՆ IV

ԴԵՍ ԱՌ ԴԵՄ

Տպարանի կանտօրաւ: Խորքում և աջ գուռը: Զախ կողմում սեղան՝ կապոյտ մահուտով ծածկուած, որոյ վերայ դըրված են զանազան թղթեր, տօմարներ, երկու մոմակալներ մոմերով և զանազան գրութեան պիտոյքներ: Աչ մի մեծ սեղան սև կլէօնկայով ծածկուած և տրպած գործերով գասուած: Խորքի դրոնից երեսում է տպարանը. գրաշարը, երբ գործի են, շարում է, իսկ մամուլների չխչխլոցն է լսում. լսում է նա և մուր չարելու ձայնը: Թելերի վերայ

**կախած են տպելուց յետոյ չօրանալու
գործեր:**

(Արագոյրը բարձրանում է և լսում է տպարանից ընդհանուր հրալձը ծիծաղը: Խառայողներից ոչ մէկը գործի չեն: Կրաշարը դարձած դէպի աչ, տպիչի հետ բարձր խօսում է և ծիծաղում. մասնակցում է դոցա և մըրազարկը):

ՏԵՍԻԼ Ա.

ԳՐԱԾԱՐ, ՏՊԻԶ, ՄՐԱԶԱՐԿ

ԳՐԱԾԱՐ, ՄԱՂՅԻՆ:

Ապա.—մարդ մեռնում է ծիծաղից: Դուք երեկ ցիրկը չէիր եկեղի:

ՏՊԻԶ

Չէ, դեռ չեմ գնացել: Ասում ես էպիկս ծիծաղաւի բաներ էլ կան:

ԳՐԱԾԱՐ

Ը' հայ, մի գնա տես է՛: Գնա տես ու յետոյ իմացիր թէ ինչեր կան աշխարքի երեսին:

ՏՊԻԶ

Ինչ ա որ, թատրոնից էլ լսւ ա՞ Ասենք թատրոնն էլ միանդամ եմ գնացել:

ԳՐԱԾԱՐ, ԱՇԽՈՒԺԱՎ:

Թատրոնն ինչ ա սրա առաջ տօ՛: Մարդ էլ թատրոնի փող կտայի, Դուք գնա ցիրկ ու տես. տես թէ ձիանոնց վրայ ինչ բաներ են անում. տես ինչպէս են

թռչոտում, ինչ օյիններ են հանում, մարդ մեռնում ա ծիծաղից. մանաւանդ որ կուզէնները չեն դուրս դալիս ու հանաքներ անում, էլ... էլ չեմ իւ մանում:

ՏՊԻԶ

ԿՈՌԵՑԻՆԻ ԻՆՉ ա:

ԳՐԱԾԱՐ

Տակի մասխարեքն են, ոնց որ քեանդրբազի^{*)}: Եալանչի փահէվանները: Հա, էս էլ ասեմ. էրեկ մէկն էկաւ՝ սկսեց էնպէս պտիտ անել օդի մէջ, որ ֆայտօնի ակները նրա մօտ ոչինչ են. Հենց որ ոտքի վրայ կանգնեց, ձեռաց նրա քամակից մի կուզէն էլ ուրիշ: թաքուն էկաւ. ու էնպէս վլակոթին տըշվեց որ՝ առաջուայ կուզէնի սուր գտակը էստեղից էնտեղ թաւաւ, հա՛. ծիծաղալին էս ա որ՝ գտակի տէր կուզէնը, հրամայում խփողին՝ գտակը վճրժնի իրան տայ. նա գոռում ա „Ճամ մոյ գալավա“ մէկելք թէ „նի ճամ“ գոռայ, գոռգոռաց, զալմաղաւարաւ, ճարը կտրուեց զլուխը էսպէս ծոեց ու աեց. „նու ուշակ յա վազմу մոյ գալավա“ (ըստհանուր բարձր ծիծաղ): Այ, էսպէս բաներ են անում:

ՏՊԻԶ

Էս իրիկուն անպատճառ կ'գնամ, թէ չէ թատրոնը մի բան չի:

^{*)} Կարախաղաց, ջանրազ:

ԳՐԱՇԱԲ

Բայց դրանք ես էրկու ամսուայ մէջ մեր քաղաքից լաւ փող դուրս կ'ատանեն հա՛ ասեղ գցելու տեղ չե ըլում:

ՏՊԻԶ

Բա հէնց թա՞տրոնն ա, որ մինելը ջերիդ են հաշում:

ԳՐԱՇԱԲ

Թատրոնը... թատրոնն ինչ ա. մուֆթա տանեն չեմ էթալ... մոլթի քան ա գայխա: — Սա նրա փողը կ'ըրաւ. նա նրան սպանեց. ես աղջեկը նրա վրայ սիրահարուեց. նա միւսին զրկեց. մինը մէկէլն խարեց, տունը քանդեց... — այ, թատրոնի բանը. ել ինչ կայ: եղ հօ ամեն օր տեսնում ենք, էլ:

ՏՊԻԶ

Հեռու ո՞ւր ես գնում. առաջին օրինակը մեր պարոնները. աղէն չի՞ որ ուզում ա Ստեփանիկին զրկի:

ԳՐԱՇԱԲ

Եհ, աղեն էլ մի մարդ չի: Մինչև նրանից մի քանի մանէթ փող ենք տանում, հոգիներս էստեղ ահանում. օձերը ծնանում են: Բայց պ. Ստեփանիկը, որ ունենայ՝ վերջին կապէկն էլ չի ինսայիլ:

ՏՊԻԶ

Ինչ ես ասում. ապայի սիրաը ճաքում ա մեղ վը բայց թամուգ շուր տեսնելու Ասում ա. ես էլ հագ-

նեմ մահուգ, դու էլ հագնես մահուգ: Բայց Ստեփանիկը, ընդհակառակիլ հոգիներս հանում ա թէ՛ ինչի՞ ես կեղաստ: Մի խօսքով պ. Ստեփանիկը մի ուրիշ մարդ ա:

(Լավում է զրաբց քայլելի ձայն ամենքն էլ խոկոյն խրեանց գործն են կատարում, կամենալով ցոյց տալ, որ շատ մտերմոթեամբ աշխատում են: Ներս է մանում Աղաղատովը):

ՏԵՍԻԼ Բ

ՆՈՅՆԻ, Խորքի սենեակում—տպարանում և ԱՂԱՋԱՏՈՎԸ բեմում:

ԱՂԱՋԱՏՈՎ, մօտենալով խորքի դռան, ասում է տղերքին:

Ստեփանիկն էսօր դեռ չի եկել:

ԳՐԱՇԱԲ

Ո՛չ, դեռ չի եկել:

ԱՂԱՋԱՏՈՎ

Ինչո՞ւ է էպքան ուշանո՞ւմ: Լաւ. բաններիդ կացէք: (Մօդենում է Ստեփանիկի ուշանին և նոյտ մէջ կամենում է գոյնել մակը և էլեկ պատմութը): Զկա՞ն. էս տեղ չեն, երեկի սեղանի արկղումն են. համբերութիւնս չի տանում, որ Ստեփանիկի գալուն սպասեմ: (Ժղոյ): Այ թէ բան կ'լինի հա՛... (Իբր Ստեփանիկի եպեկը): Խեղձ Ստեփանիկ, եթէ իմանաս ինչ փոս եմ փորում քեզ համար... Դու ընկիր հալալութեանդ ետեից, տեսնենք ինչ պէտք է անես. ես գիտեմ որ կվհատուես, զօրութիւնից կ'նկնես, գնատակը ճակա-

տիգ կ'միես... Բայց ի՞նչ արած. քեզ համար ես
չեմ կարող ինձ ստորացնել Յովակիմովի մօս: Ես
կարող եմ նրա մօս՝ միայն ի՞նձ պաշտպանել ի՞մ
հաշիւներիս մէջ... իսկ քեզպէսները՝ ինձ համար —
ո՛չինչ. որովհետեւ քեզպէսները եթէ չլինեն, մեզ-
պէսները չեն կարող ապրիլ. ձեզանով ես աւելի
պարզերս եմ գուրս գալիս, աւելի շուտ կարող եմ
հասնել նպատակներիս: (Միջոց): Է... Սաեւփանիկի հեա
Յովակիմովը կ'վերջացնի՛, բայց, աեսնենք, ե՛ս երբ
պէտք է վեջացնեմ Յովակիմովի հետ... Մինչև հի-
մա ինչ որ արել էի, համարեա, ծածկուած է. շաա
րան թէկ նրա ականջին հասած է, բայց գործը
էնպէս եմ տարել, որ երբէք չի հաւատ ընծայում
իմ դէմ ասածներին. — Էդ էլ հարկաւոր է ինձ...
Բայց շուտով կարող է բանը բացուել և նա ամեն
բան կ'իմանայ, օրովհետեւ թզթախազը իմ տունս
քանդեց... Ուրեմն ինչ պէտք է արած... Հա՛, պէտք
է աշխատել, որ արժանանամ նրան վիեսայանալ.
Էն ժամանակ թուրս համ աջ կ'կարի՛ համ
ձախ: (Մաս է գոլվա միջոց): Եկա՞ն... ոտքի ձայն է
գալիս...

ՏԵՍԻԼ Գ

ՅՈՎԱԿԻՄՈՎ, և ՅՈՎԱԶՈՒՎ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ:

Դու էստեղ ե՞ս:

ԱՂԱԶՈՑՈՎ,

Եատ վիզուեցի՛ չ'գոտայ էստեղ... բայց ոչինչ, նա
հիմու կ'գոյ և կ'տայ: Նրան եմ սպասում:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Գնացիր առնեն:

ԱՂԱԶՈՑՈՎ,

Գնացի և նա խոստացաւ, գալուն պէս տայ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Հա՞ բան չ'հարցրեց:

ԱՂԱԶՈՑՈՎ,

Ետու էլ հարցրեց. բերանում լիզու չ'կա՞յ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Ուրեմն կտա՞յ:

ԱՂԱԶՈՑՈՎ,

Անպատճառ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Իսկ երբ տօմարները ստանաս, կ'կարողանա՞ն յա-
ջողացնել մեր խօսացածը:

ԱՂԱԶՈՑՈՎ,

Ինչ է ասում: Եթէ յաջողացնել չ'կարողանամ,
ինչու եմ բանի մէջ մանում:

ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Ես ասու մ'եմ էնպէս անենք որ՝ և խօսառակենք,

և իրա մասից հեռացնենք, որ գնա ու քաղցած մը-
նայ:

Ա.ՂԱԶԱՏՈՎ.

Եւ նրա տուածը բոլորովին յետ չդարձնենք, և
սիրիր ուղարկենք:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Թող սիրիր գնա մի, տեսնենք էնտե՛ղ ինչպէս կը-
ապրի:

Ա.ՂԱԶԱՏՈՎ.

Դու սպասի՞ր. Էնպէս թուանշանները փոփոխեմ,
էնպէս բաներ անեմ, որ տարեկան իր վրայ 1500,
2000 մանէթ էլ ապառիկ մնայ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Իսկ եթէ բռնուեցինք, այ տղայ:

Ա.ՂԱԶԱՏՈՎ.

Մեզ ինչ: Էն ժամանակ կասենք մասից և ելքը
տօմարը էղպէս չեն պահիլ. Հազար տեղ թուերը
փոփոխած են, կասենք. — Էն ժամանակ իսկոյն դա-
տարան:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Նա էն ժամանակ կ'ասի թէ դու ես արել

Ա.ՂԱԶԱՏՈՎ.

Շատ բան կասի. վկանե՞ն ուր են: Վերջապէս

տօմարը քո ձեռքին լինի և ես քերքերեմ: ո՞վ է
աեսել:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Ուզեղ որ է՛: Քե՛զ տեսնեմ: թէ էս բանը լաւ
գերջացրիր՝ Աննաս քեղ եմ տալու, որովհետեւ ինչ
արի չարի—Ժորժին չկ հաւանում աղջիկա:

Ա.ՂԱԶԱՏՈՎ.

Իսկ ինձ...

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Կարող է չհաւանի՞... զօրով կ'պսակեմ. Էնքան
էլ իրաւունք չունե՞մ: (Սիլոյ): Հա՛, այ տղայ, ես էս
ընչե՞ր եմ լսում քեղ համար:

Ա.ՂԱԶԱՏՈՎ.

Ինչ է որ, աղա:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Էլի դու թըթախաղը սկսել ե՞ս:

Ա.ՂԱԶԱՏՈՎ.

Երբ եմ խաղացել, որ էլի սկսեմ, աղա:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Ինչպէս թէ... ապա ես լսեցի թէ մեր ծխախոտի
խանութի միջի ապրանքը տարուել ես և դրա հա-
մար քո տված պարտամուրհակը շուտով պէտք է
դաստարանի զցեն:

ԱՂԱԶԱՏՈՎ

Աղա ջան, այս օրուայ օլը գլխիս խոռվ լինի, ե-
թէ...

ՅՈՎԱԿԻՄՈՎ, չթողնելով:

Լաւ, լաւ, այդպէս մի՛ ասա. հաւատում եմ

ԱՂԱԶԱՏՈՎ

Ախար մինչև էսօր ե՞րբ ես տեսել ինձանից էդ-
պէս բան, թէ և շատ անգամ էլ լսել ես. դու չը-
զիտե՞ս որ էդ բոլորը թշնամիի բաներ են:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Էդպէս է, էդպէս. ես զիտեմ, որ մինչև անգամ
էդ ասողը քեզ հետ թշնամի էլ է:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ուզում ես ասեմ մինչև անգամ ասողի անունը:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Լաւ, լաւ. զիտեմ որ զիտես:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ես նրա... ես նրա... հըմմ... կարծում ես թէ
ես կ'թողնեմ որ նա փողբաթում աշխատած քսան,
երեսուն հազար մանէթը մարսի՞... Ես Աղազատովը
չընեմ թէ նրա...

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ինչպէս թէ 30,000 մանէթ:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ապա չես լսել:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Չէ:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ապա՞:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Մարտինի համար եմ ասո՞ւմ:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ի հարկէ նրա համար եմ ասում:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Գէ արի, դէ արի... Երեկ չէ միւս օրը ձուից
նոր է դուրս եկել և էդպէս բ՞ան: Գէ, ասա, այսու-
շետե նա էլ ինձ հետ հաւասար ոտ պէտք է մեկնի էլի:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ապա ինչ ես կարծում:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Չէ. էդպէս բան չէ լինի՛:

ԱՂԱԶԱՏՈՎ

Վա՛, ինչով կամենաս, կ'երդուեմ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Լաւ է՛, լաւ. ես քեզ չե՞մ ասել որ հաւատում
եմ քեզ: Դու զիտես որ ես իմ հարազատ եղօրս
էնքան չեմ հաւատում որքան քեզ:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ճնորհակալ եմ աղա: Ապա էլ ինչու եմ սուտ
ասում:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Նս գիտեմ որ սուտ չես ասում, բայց...

ԱՂԱԶՈՑՈՎ

Աղա, Ասո... (Համեսոմ է Երբուն):

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Լաւ է, լաւ: Ինչ ես հոգուզ մեղք անում
ամեն բանի համար, ես քեզ ասել եմ որ Աս-
տուծոյ անունը չեն տալ: Ուրեմն ասում ես Էդ-
պէս, հը... Էդ ես կարող եմ տանել, վազը, միւս
օրը նա էլ ինձ հետ գայ գուման, ձայնաւոր գառ-
նայ. Էն Մարտինը դառնոյ հիմոյ դՄարտին Գերա-
սիմիչ Զէ, ես ատանել չեմ կարող... Էրեկուայ երե-
խան գոյ ինձ հետ...

ԱՂԱԶՈՑՈՎ

Ինչո՞ւ համար ես նեղանում: Նիկիտ Եակուլիչ,
ապա ես ո՞րանել եմ: Մէկ էլ տեսար տղերքիս սրե-
ցի... մի գիշեր մտան մեր Մարտին Գերասիմիչի
տունն ու (Ժաղթառ) մէկ էլ տեսար՝ Մարտին Գերա-
սիմիչը էլի Մարտին դառաւ: Ինչ ես մտածում. քա-
նի գլուխս կըս է դու ուրախ կաց:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, մի փոքր մտածելոց յետոյ:

Հա՞ ուղեղ ես ասո՞մ, հարկաւոր է. ես
իմ հոգին հարկաւոր է: Արի դու Էդպէս էլ Ստե-
փանիկի գլուխն արա ու վերջանայ գնայ:

ԱՂԱԶՈՑՈՎ

Ինչ ես ասում Ես ասում եմ նրան խայտառա՛-
կենք, խայտառա՛կենք, համարումը վե՛ր դցենք...
թէ ոչ տունը մտնելում ու գլուխը մարմիկց բա-
ժանելումն ինչ կայ: Դեռ ուզում ես նրա աղջեկ
պարսնին էլ, երեխային էլ...

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Զէ, չէ՛. յետոյ մեղքի տակից գուրս գալ չել լինիլ:
Դու գիտես, ինչ կուզես արա. բայց Մարտինի
համար ինչ որ ասեցիր հա՛... քեզ հետենք, չը...
ինչ որ էդ բանն էլ գլուխը բերեցիր, իմացած կաց
որ նոյն օրը նշանը բեր ու աղջկաս մատը դիր
չասկացար:

ԱՂԱԶՈՑՈՎ

Ինչ տղայ եմ, որ երեք օրուայ մէջ գլուխ չ'բերեմ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Գեզ տեսնեմ, չը: Ես հիմա գնում եմ գիտեմ,
Ստեփանիկն, էլ ուր որ է կ'գոյ. Ես նրա երեսը
չեմ ուզում տեսնել. Հէնց կարծում եմ թէ էդ տը-
ղան—իմ հոգէհան հրեշտակն է: Մէկ էլ էսօրուա-
նից, Մարտինը, որ ասեցիր... (Բարեկայած գնում է):

ՏԵՍԻԼ Դ

ԱՂԱԶՈՑՈՎ, միայն:

Ես լաւ էր: Իմ վաղուցուայ փափազս ինքն իրան
է գլուխ գալիս Այ քեզ բան: Այ, ինչ կ'նշանակի

ապրելու ձև իմանալը. թէ ոչ Ստեփանիկի պէս ընկընէի մարդկութեան ետեից, ես հիմա, ո՞վ զիսէ վաղուց էի սիրիլում նստած: Ա՛յ, զլուխ պահելու ձեր: (Միջայ): Բայց եթէ, Տէր մի արասցէ, բռնուեցի մինչև նշան դնելս... Էլ Յօվակիմովի ձեռքից չեմ ազատուիլ... բայց ինչո՞ւ չեմ ազատուիլ: Նա իմ դէմ ո՛չինչ չե կարող անել... եթէ բանը էնտեղն ընկընի՝ ձեռաց ծափ պէս կ'թերուեմ (չել) և եթէ տեղն էլ ընկնելու լինի, էսպէս կ'բռնեմ (չել) ու մէկ էլ տեսար... մի ձեռքիս գլուխն է ու միւս ձեռքիս մարմնը... Էլ ինչ կայ... (Տան է գոլես): Հա՛. Ստեփանիկի հետ երբ լինի կ'վերջացնեմ... ձեռքիս մէջը փշեմ և ամեն բան պատրաստ կ'լինի — ոչինչ: Բայց հիմա գնամ Աղարէզին գտնեմ և նոր բաղդով՝ բաղդս փորձեմ... Միրտս վկայում է որ երկու անգամ թուղթը գցեմ թէ ոչ իսկոյն ծխախտի խանութը, յետ կտանեմ և պարտամուրհակը ձեռաց կ'ձղեմ: (Գնալը): Ա՛յ թէ բան կ'լինի հա՛:

ՏԵՍԻԼ Ե

ԳՐԱԾԱՐ, ՏՊԻԶ, ՄՐԱԶԱՐԿՈՒՄ:

ՏՊԻԶ, ՄՐԱԶԱՐԿԻՆ:

Ա՛յ աղայ, լաւ քսի է:

ՄՐԱԶԱՐԿ

ՔՍՈՒՄ եմ, Էլի:

ՏՊԻԶ

Փուշ կենդանի էդպէս կ'քսեն: Քսում ես կարգին քսի, թէ չէ կ'գամ մազերդ կ'պոկտեմ:

ՄՐԱԶԱՐԿ

Ո՞յց չէ, չկ'գամ:

ՏՊԻԶ

Հը, ինչ է. վախենում եմ քեզանից:

ՄՐԱԶԱՐԿ

Չես վախենում: ամս բայց չես էլ կարող:

ՏՊԻԶ

Ո՞վ չե կարող...

(Ընկում է մրազարկի ետեից, որը փախչում է նորանից և տպարանում պատուելուց յետոյ մրազարկը մանում է բեմը և սկսում է այդտեղ պատուելով խավաեր անել, մինոյն ժամանակ, ի հարկէ, ճեաւեցնելով տպիչն: Կրոշարը դորանց վերայ նայելով ծիծաղում է: Տափշը ուղիղ որ չէ կարողանում բռնել մրազարկին):

ԳՐԱԾԱՐ

Իրիկու այ կուզէններն էլ էին էդպէս իրար ետեից վազում: Հէնց իմանաս ցիրկումն եմ: (Փոքը տնյուռմ է և ծովի տուղով գուտում է): Եկան, եկան... տէղներդ: (Իսկըն ամենայն իրանց առշերն են ինուռմ և մէծ աշխատավուրեմբ իրանց գործին են ինոնքում, իործես երբէս ոչշնչու ուղարկում են անշնուրում իրանց գործը):

ԳՐԱՇԱՐ, ծափ սովոր:

Խարեցի... խարեցի: (Տպէլը հիմ ընկնում է գրաշարին եղեկ, իսկ հրազդարիլը դուրիչի եղեկը և հրեն նոյն դեստ ըստնը):

ՏԵՍԻԼ, Զ

ՆՈՅՆՔ և ՍՏԵՓԱՆԻԿ

ՍՏԵՓԱՆԻԿ, ներս է մտնում յուսահատ և բարկացած և կանում է նորանց դիմոն:

Ուրեմն այդպէս էք դուք ձեր գործը կատարում: Համ շատ ապրէք, շատ ապրէք:

ՏՊԻԶ

Ինչ անեմ, քանի անդամ ասեցի ոլաւ քահ⁴ բայց սա շատ էր անքառած տեղեր թողնում շարուածքի վրայ, էնպէս որ տիպը իստակ չեր դուրս գոլիս: Իսկ էլ ուզեցայ բռնել...

ՍՏԵՓԱՆԻԿ, զրաշարին:

Իսկ դու ինչու էիր սորանց հետ վազում:

ԳՐԱՇԱՐ

Իսկ էլ... ես էլ ուզում էի հանդարտացնել սրանց:

ՍՏԵՓԱՆԻԿ

Շատ ապրէք, շատ ապրէք... գնացէք ձեր բանին: (Նոքտ գնում էն և իսկոյն սկսում էն իրեանց գործը: Ապեփանիլը մանելով դոդորան): Իսկ ո՞ւր է միւս տափէլը... ո՞ւր է միւս գրաշարը:

ՏՊԻԶ

Գեւ չեն էկել:

ՍՏԵՓԱՆԻԿ, վիրաւորուած առաջուանից:

Շատ լաւ են արել Դուք էլ էք շատ լաւ անում... շատ ապրէք. (Գոլովէն, առանցին) Դուք էլ էք շատ լաւ անում... Յովակիմովն էլ է շատ լաւ անում. Ազազատովն էլ է շատ լաւ անում. ամենքն էլ շատ լաւ են անում. (Նոքտ և յուսահատ) Բոլորն էլ շատ լաւ են անում... իսկ վատը միայն են եմ անում... Այս, վատը ես եմ անում... (Միջոց): Յովակիմովն ետելից մանգալով էլ հոգնեցայ... որտեղ հարցնում էի, տում էին, նոր այստեղ էր, գնաց... նորանք էլ են շատ լաւ անում... (Միջոց): Վերջապէս նորան գտայ և, նա թունաւոր կերպով ասաց. „Գնա”, գալիս եմ. ես ուզում էի վաղուց քեզ հետ վերջացնել: Այդ խօսքերը ինձ շատ բան հասկացրեցին... (Գոլովէն և Յովակիմովը):

ՏԵՍԻԼ, Է

ՆՈՅՆՔ և ՅՈՎԱԿԻՄՈՎ.

ՅՈՎԱԿԻՄՈՎ, ԹՈՒՆԱՎՈՐ

Հօ... ինչ ես ասում ինչ ես, ուր որ գնում եմ, Ճանապարհո կտրում:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ես ճանապարհ կտրող չեմ, Նիկիտ Եակուլիչ, ես
միայն կամենում եմ իմանալ ձեր վերջնական վճի-
ռը: Ինչ էք ասում:

ՑՈՎԱԿԻՄՈՎ, նոյնակա:

Ինչ պէտք է ասեմ... ինչ որ ասելու էի ասեցի
անօրդ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Բայց դուք ինձ ուրիշ, բոլորովին ուրիշ բան էք
ասել:

ՑՈՎԱԿԻՄՈՎ

Ես քեզ ոչինչ չեմ ասել:

ՍՏԵՓԱՆԻԿ

Նիկիտ Եակուլիչ, դուք ինքներդ երեկ հրապա-
րակում չ'ասացի՞ք թէ 1100ի կտամ. և յետոյ միւս
պատահելիս նոյն ժամում չ'ասացի՞ք թէ գնա, փո-
քը բեր. 1000ով էլ կ'տամ... չ'ասացի՞ք:

ՑՈՎԱԿԻՄՈՎ

Ես... ես ոչինչ չեմ ասել:

ՍՏԵՓԱՆԻԿ

Զարմանալի բան: Դուք ինքներդ չ'առաջարկեցի՞ք
թէ ուշւ կանես ինքդ գնես իմ մասս էլ և երբ ես

ասեցի թէ փող չունեմ չ'խստացա՞ք, որ անօրս կը
համոզէք ինձ օգնելու համար:

ՑՈՎԱԿԻՄՈՎ

Ես... ես ոչինչ չեմ խստացել... միտքս չե գտա-
լիս:

ՍՏԵՓԱՆԻԿ

Այդ ինչ կ'նշանակէ ձեր արածը, Նիկիտ Եակու-
լիչ ինչո՞ւ էք այդպէս տանջում ինձ. ուրեմն վեր-
ցըրէք դուք իմ մասս և բաւականացրեցէք ինձ այն-
քանով, որքան դուք արժան կ'համարէք, և մի-
թողնէք ինձ կորչել... ես լնտանեաց տէր եմ:

ՑՈՎԱԿԻՄՈՎ

Ես... ես ոչինչ չ'պիտեմ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ինչ եմ արել ես ձեզ, Նիկիտ Եակուլիչ, ինչ վա-
տութիւն եմ արել ձեզ... ասացէք... երեսովս տը-
ցէք... զրկեցէք ինձ ամեն բանից՝ մինչև անկամ
և իմ տպարանական մասիցա... բայց...

ՑՈՎԱԿԻՄՈՎ

Ինչ մաս... ինչ բան... դեռ շնորհակալ չե՞ն որ
մինչեւ հիմա ես քեզ տպարանովս պահել եմ:



ՍՏԵՓԱՆԻԿ

ինչպէս թէ դու ես ինձ պահել... ինչպէս թէ
դու քո տպարանովդ ես ինձ պահել... Ես իմ
հասանելի մասովս եմ ինձ պահել, պարոն. գեռ
քո մասդ էլ ես եմ կառավարել, պարոն. Հիմա զու-
այդ ինչե՞ր ես խոսում:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Տօ դէ գնա է... առանց էն էլ գլուխս ցաւում է:

ՍՏԵՓԱՆԻԿ

Դու ինքդ գնա: Այնպէս ցաւի գլուխդ որ եր-
բէք չլաւանայ: Ուրեմն դու ինձ որպէս ընկեր ան-
դամ չես կամենում ճանաչել:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ինչ ընկեր... ինչ բան... դու ով... ե՞ս ով... դու
մի դատարկ խէնթացած տղայ ես... ինչ համեմա-
տութիւն կարող ենք ունենալ քեզ հետ: Իմ հարս-
տութիւնս երկու—երեք հարիւր հազարի է հաս-
նում, իսկ քո գրապանում ու տանդ ով գիտէ երկու—
երեք կոպէկ էլ չկայ: Դու ով, ե՞ս ով... ինչ ըն-
կեր, ինչ բան:

ՍՏԵՓԱՆԻԿ, Կարծես շփոթուած:

Նիկիտ Եակուլիչ...

ՅՈՎԱԿԻՄՈՎ, Նրա խօսքը կորելով և մի քայլ առաջ գալով:
ինչպէս ես համարձակում ինձ Նիկիտ Եակու-
լիչ՝ ասել. ամբողջ քաղաքը ինձ դադայ է ասում

ու ճանաչում ու քեզ ովէս մի Ճիճուն—Նիկիտ Եա-
կուլիչ... ախար ես պատռուեցի մինչեւ էսօր է՛ քո
էդ Նիկիտ Եակուլիչներովդ ու թաշախուստներովդ
դու իմ կեանքս թունաւորեցիր է՛: (Ա-էւ է Էռլիք): Ա-
խար դու ինչացու ես, որ համարձակում ես ինձ
քեզ ընկեր շնիկը... (Ցածրացնելով չայնը և ապահնելը
կը պայցնելով) Մէկ էլ որ էդպէս բառերով ինձ ան-
պատուես, իսկոյն դուքս կանեմ ես քեզ... Դեռ շը-
նորհակալ եղեր, որ ես քեզ հետ արժան եմ հա-
մարում խոսել:

ՍՏԵՓԱՆԻԿ, առած:

Բոյց ես թուղթ ունեմ ընկերական, թուղթ,
հասկացա՞ր: (Հանում է գրպանէց): Տեսնո՞ւմ ես, ոս է
մեզ կապում իրար, սա'...

ՅՈՎԱԿԻՄՈՎ, Իբրև է ձեռքից և խոյն պատռուած:

Այ քեզ... այ քեզ... այ քեզ թուղթ: Հիմա ի-
մացա՞ր: Կարծում ես դա մի մեծ բան էր. եղած
չեղած միևնոյն է ինձ համար... Հիմա հասկացա՞ր:
Ուրեմն ես քեզ խնդրում եմ, որ հեռանաս էստեղից
և թողնես ինձ: (Ինչը գնում է ապարան և նայում է ծա-
ռայողների գործին: Արեփանի սուսած բառնառմ է արքան—
մի քանի ըստէ նոյն բլուլեան մէջ է հնամ և ապա՝ մէ իր-
ազը ուշին գործին առաջ է):

ՍՏԵՓԱՆԻԿ

Նիկիտ Եակուլիչ, ուրեմն այդպիս... Եթէ այդ
էր՝ ինչո՞ւ վաղօւց չէիր անում այն՝ ինչ հիմու արեւ
ցիր... էլ ինչո՞ւ համար էիր Աղազատովին ուղարք
կում մօս ինձնից հաշիւ պահանջում... էլ ինչո՞ւ
համար էիր նորա միջնորդութեամբ ել և մարդ
առ մարները պահանջում... որ քերէիք, քերքերէիք
ու ինձ սեհեես թողնէիք միամիտ հասարակութեան
առաջ, թէ կամաց կամաց երկու դլուխն էլ ձեռները
հաւաքէիք... Ոյս, հասաք ձեր նպատակին...
Ես թողնում եմ, ես գնում եմ, Նիկիտ Եակուլիչ
իսկ գու (ցոյց պալով ուղի Երևան) Նորանից նստանաս
գորա գարձը... ապարանի ամեն մի տառը սուր և
ասեղ գառնան և ցցուեն ամբողջ մարմնիդ մեջ...
Ուրեմն այդպիսո՞վ ես աշխատել այդ ահագին հա-
րստութիւնդ... (չես-չել ուղի Եր Էպիցրունով)
կանչում եմ... կանչում եմ երկնային վրէժինդրու-
թիւնը... (Շատարի ուղի է գնում):

ՏԵՍԻԼ Ը

ԱՊՅԱՔ և ՅՈՎԱԿԻՄՈՎ, առանց ՍՏԵՓԱՆԻԿԻ

ՅՈՎԱԿԻՄՈՎ, գալով բեմ և նորա ետից արհամարանօք:

Գէ կորիր է... ոնքինային վրէժինդրութիւնը:
Երկնայիր քեզպէսների ձայնը երբէք չել լոիլ.. Դու

ինչ ես. մի ցեց—աւելի ոչինչ... Քանի տարի է,
պաս չել պահում... ինչ էք ասում սրան... Եդպէս-
ները մարդ են... (Խոչ է տնում) մեղայ Աստուծոյ,
մեղայ Աստուծոյ, անառակ են, անասուն են... (Ֆջոյ):
Բայց ինչ մի յաջողեցրեցի է... ձեռքս գցելս ու-
թուղթը ձանկելս — մէկ էլաւ: Էս մէկը շատ լաւ
էլաւ: Ել զլուխս չել ցաւալ, թէ չէ պէտք է դա-
տաստան ընկնէր բանը. Էս էլ ինչպէս կ'վերջանար,
ով գիտէր, թէ և Աղազատովը ասում էր ոերկիւղ
չ'կայ... Էս արած բանս՝ եսու իմ հոգին որ Աղազա-
տովն էլ չէր կարող անել... Զէ. եթէ սուտը ես լի-
նէի, ծուռը ես լինէի, էսպէս չէր յաջողիլ. Աստու-
ծոյ մտան էլ սրա մէջը կար. մեռնեմ (Խոչ է հոնում)
ես նրա զօրութեանը: Էս անգամ երեկոյեան եկէ զեցի
գնամ թէ ոչ. մի ջուխտ մեծ, թանգագին մոմ կը-
առնեմ և կ'ուղարկեմ սեղանում վառեն, գեռ տասն
հինգ ծունը էլ աւելի կ'դնեմ: (Գոյլիս է պահէլ և
կ'անգուստ է նորանից մը փոքը հետո—): Հը. ինչ է:

ՏՊԻՉ, վիզք քորելով:

Եթէ կարելի է մի քանի մանէթ փող շնորհեցէք.
շատ հարկաւոր է:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, Նօթերը հաւաքելով:

ինչո՞ւ համար ես ուղումի

ՏՊԻԶ

Տան համար պէտք է բրինձ առնեմ. — մի կապէկ
չունեմ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Եդ աւելի լաւ, որ չունես, իսկ եթէ ունենաս՝ էլ
էսպէս չես գալ աղաշիլ: Գանի որ չունէք, գալիս
էք, մեզ մօտ ծառայում էք, խնդրում էք, վեզնե-
րըդ ծռում էք, մեզ էլ մարդատեղ էք գնում իսկ
եթէ ունենաք մինչև անգամ չէք կամենալ գտակ
վերցնել, զլուխ տալ մեզ... Էդպէս էք է՛, ամենքդ
էլ էդպէս էք... Ինչո՞ւ համար ես էս տեսակ շոր
հագել, ինչո՞ւ մի փոքր հասարակ չես հագնվում ու
նրա աւելացած փողով քո տանդ հարկաւորութիւնը
հոգում: Ախար ամիսը տաս քսան մանէթ փող ես ըս-
տանում և ուզում ես ինձ հետ հաւասար ոտ մեկ-
նե՞ն, ինձ պէս հագնուե՞ս: Այ, որ էդպէս է, հիմա
գնա, նեղութիւն քաշիր, որ իմանաս թէ ես ինչ եմ
տառում: (Բարիկայած): Դէ գնա՛ բանիդ: մինչև հիմա
ով գիտի քսան-երեսուն հատ տպած կ'լինէիր: Ամ-
սավերջին, ինչ որ ստանալու ես կ'ստանաս:

ՏՊԻԶ

Ախար ամիսը...

ՅՈՎԱԿԻՄՈՎ, նրա խօսքը կարելով

ինչ է, հիմա ուզում ես հետո հաւասար խօ-

սա՞ն... Ասում եմ գնա բանիդ, գնա՛ էլի, թէ ոչ...
(բողեշը չելը էակած գնում է): Հիմա (գնուլով նրա եղանակ
դոդրան) գու ես իմ զլիսին Սահփանիկը դառնել: (Նա-
յում է աղած գործերին: Ներս է ճանում Սպեֆանիկը այլ-
գոնուտած):

ՏԵՍԻԼ Թ

ՆՈՅՆՔ և ՍՏԵՓԱՆԻԿ

ՍՏԵՓԱՆԻԿ

Լաւ է որ վերցրեցի այս. (Կայ է բողես աջ գրունը)
ան կ'վճռի ամեն բան: (Գնում է մընչեւ իորքի բռուսը
և իանչում է) Նիկիտ Եսկուլիչ մի երկու րոպէ համե-
ցէք այստէղ. (Յովակիմով գուլիս է) մի երկու խօսք
էլ և դուք ինձանից ազատուած կ'լինէք: (Խորտի բըս-
ները ծոծիում է):

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Հը... ինչ ես ասում. շուտ ասա ու գուրս կո-
րիւ: Ես... քո զլուխը չունեմ:

ՍՏԵՓԱՆԻԿ, ատրճանակը ուղղելով նորա կործքին:

Շարժել չ'յանդգնես... Մի փոքր ձայն և անտեղի
վարմունք—սորտ գնդակը կուրծքիդ մէջ... Կրինում
եմ շարժուես, ձայն հանես թէ ոչ, իսկոյն...

ՅՈՎԱԿԻՄՈՎ, Թոքը կպած և կամաց:

ՀՇ. . . Սպասի՛ր, սպասի՛ր . . .

ՍՏԵՓԱՆԻԿ, նոյնպէս:

Այս բուգէիս մի թուղթ տուր ինձ, որ տպարանը
բոլորովէն ծախեցիր ինձ և դու փողը լիովին ստա-
ցար:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Վա՛

ՍՏԵՓԱՆԻԿ

Շո՛ւտ արա, եթէ ոչ արձակեցի: (Նիշի և առհուշէւ
թ փառը հնամ է ապշած, երեսին նոյելով, բայց Սպեֆանիկը
հերդարանուը ըսբերեցնում է նորան և նո հասկանում է, որ
նորա հետ հանուք չեն անում. հասկանում է նո և որ մը
չնչին սեպամանք երեն էնանից էշընք):

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ուրեմն տուր 1100 մանեթը և բանը վերջացնեմ:

Տո՛ւր:

ՍՏԵՓԱՆԻԿ

1100 կոպէկ չեմ տալիս քեզ. շուտ արա:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Եթէ չես տալ — անկարելք բան է:

ՍՏԵՓԱՆԻԿ

Մի վայրկան ևս . . .

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ա. Վ փորձանկք:

ՍՏԵՓԱՆԻԿ

Շո՛ւտ, շո՛ւտ արա, առանց միջոց կորցնելու:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Իսկ 500 մանեթը, որ պարտ ես:

ՍՏԵՓԱՆԻԿ

Դորա համար կարող ես յիշել թղթիղ մէջ: Երկու
տարի ժամանակ գրիր:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, առանձին:

Ուղե՛ղ, ոյս ինչ լաւ բան միաս ընկաւ: Տպարանի
անունը թղթնեմ, չ'զցեմ թղթի մէջ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Շո՛ւտ, շո՛ւտ . . . (Յովակիմովը վերյանում է սեղանի վրայից
դիմերը լռութ և գրում է: Յետոյ գրածը ինչը սկսում է
իմրդուլ):

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Դիմ սեպհական (ապարանը) ծախեցի իւր բոլոր

պարտագանելով Ստեփանիկ Պօղոսեանցիդ և փողը լեռին սասացայ և այսուհետեւ, բացի 500 մանէթը, որ պարտաւոր է Պօղոսեանցդ տալ ինձ երկու տարուայ ընթացքում, չունեմ չընչ պահանջելիք։ Առ որ ըստորագրեմ իմ իսկական ձեռքով՝ ԸՆՇ, (ցոյց պաշտ.) էս էլ իմ ստորագրութիւնս։ Պրծանք. ուրեմն թողքանի շուտ է հեռանամ։ (Գնալու) Բարով վայելմա։

ՍՏԵՓԱՆԻԿ

Սպասի՛ր. (Գրդանից հանում է մի հասար փոշի գոկելն և պաշտ է Յալակենին) վեր առ. այս էլքո 1100 մանէթը. թէև կարող էի չ'առալ և ոչ մի կոպէկ, բայց ես չեմ կարող ձեզզէս կեղտուտ ճանապարհով սորտնից նորանից կռափել և փող զիզել։ Դէ գնա՞։ շուտ դուրս զնա՞։

ՅՈՎԱԿԻՄՈՎ, վերցնում է. գնալով և առանձին։

Էս լա՞ւ բան էր, կրկին յաջողեց. . պէտք է Աղազառովին գանել։ (Գնաւմ է)։

ՏԵՍԻԼ Փ

ՍՏԵՓԱՆԻԿ, հանգստացած միան։

Հաղեւ վերջացրեցին Հիմա մի փոքր հանգստացայ։ Այսպիսիներին՝ այսպիսով պիտի յաղթել։ (Ծիծուալու)

Հա հա հա. . . ինչպէս թրջուած մուկ դառաւ է. . . Ուրիշ կերպ չէր կարելի. . . (Վերջնում է Յալակենինի լողած ապրագրութիւն)։ Ապա մի տեսնեմ. (Հարդում է բարձր)։ Նես իմ սեփական ծախե. . . ցի իւր բո. . . լոր. . . պարա. . . գա. . . « բայց ինչը ծախեցի. . . չըկայ. . . (Ապրձանակը չետքից վայր է ընէնում, իով ինքը չափազանակ անունը չկայ. . . խարեց. . . կրկին խարեց. . . օգուտ քաղեց իմ վրդով մունքից. . . (Վայր է ընէնում ալբուկ կերպ)։

Ապրագր:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԶԱՐՈՐԻ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԶԱՐՈՐԻ

ԱՅՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՄԷջ ԽԱԴԱՑՈՂՆԵՐ

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՐՈՐԴ

ՅՈՎԱԿԻՄՈՎ

ԱՂԱԶԱՏՈՎ

ԱՂԱԲԵԳ

1
2
3
4 } սրիկաներ

ԳԻՆԵՏԱՆ ԱՇԱԿԵՐԸ

ՖԱԲՐԻԿԱՅԻ ԱՇԱԿԵՐԸ

ՊՐԻՍՏՈՒ

ՊՈԼԻՑԻԱԿԱՆՆԵՐ

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՅՆԵՐՐՈՐԴ

ՅՈՎԱԿԻՄՈՎ

ԺՈՐԺ

ՍՏԵՓԱՆԻԿ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ IV

ՏԵՍԱՐԱՆ V

ԱՅ ՃԵԶ ԲԱՌՆ

Ա Պ Ո Ւ Թ, առանց լուսամուտի գետունափոր սենեակ:

(Վարագոյրը բացւում է. աջ կողմում նստած են Աղազատովը և Աղաբէզը գետնին փռուծ հին գորդի վերայ և թուղթ են խաղում: Զափի կորմումնոյնպէս մի քանի արիկաներ թուղթ են խաղում. բայց հասարակ խարի վերայ նստած: Երկու խումբերի առաջն էլ լուսաւորում են մի մի ճրագուէ վառ մոմեր, որնք ամրացրած են, մոմակաների տեղ, կվափի և հալած ճրագուի մէջ կորած, գինու շիշերի (բօթի) բերաններում: Վերջին խումբը խաղը վերջացնելու վերայ է: Երկու խումբն էլ շուտ շուտ գինի են խմում: Կէս օրուայ ժամի 12-ն է):

ՏԵՍԻԼ. VI

ԱՂԱԶԱՏՈՎ, ԱՂԱԲԵԳ, 1, 2 և 3 ՄԻԿԱՆԵՐ և ԳԻՆԵՏԱՆ ԱՇԱԿԵՐԸ, որը մի քանի անգամ գալիս է և գնում:

Յ

Այ տղայ, գինի բեր: Ես գարտակ բութիլկէն տար:
Շուտա:

II

Շուտ արտ, շուտ:

2

Ինչ էք շուտ շուտը գցել. հաղումէք հաղացէք,
թէ չէ վեր եմքցում զնամ:

3

Ո՞ց չէ, կեթաս... դու դեռ տարածդ վեր զիր,
յետոյ ուր զնում ես զնա:

1

Ասենք թէ դու ես տարուել, մենք ընչե դինի չը-
խմենք:

3, դէպի միս սենեակը:

Այ տղայ, շուտ արա, բեր: Ինչ ես ուշանում:

ԳԻՆԵՑԱՆ ԱՇԱԿԵՐԾ, միս սենեակից:

Բերում եմ, էս սհաթիս: (ՅԵՐԱ-Ն Է ՆՈՐ ՀԵՂԵ-
ԱՅՆ ՊԱՆՈՒՄ Է: ԽՄԱ-Ն ԷՆ Խ ԽՈՂՈՒՄ):

ԱՊԱԲԵԳ

Ինչ ես անում: էն թուղթն ընչե՝ պահեցիր...
ընչե:

ԱՊԱԶՈՑՈՎ

Ինչ ես յիմար յիմար խօսում: ես գող եմ, ինչ
է... իմացիր թէ ինչ ես ասում:

ԱՊԱԲԵԳ

Ես չեմ ասում թէ գող ես. համա թուղթը սըպը-
պացրիր:

ԱՊԱԶՈՑՈՎ

Աղոբէգ, խօսքդ ճանաշեր թէ չէ...

ԱՊԱԲԵԳ

Թէ սուտ եմ ասում... էս ինչ է... չը... էս
ո՞ւմ աշքը մանի: (Ճանամ է Աշաղապահի ծնկան պակեց
մէ քառասուց խողովառութ):

ԱՊԱԶՈՑՈՎ

Հա՛ սրտ համար ես ասում:— Էստեղ է:

ԱՊԱԲԵԳ

Հոռամելէս աղազագա. դրա համար եմ ասում:
գնա՛ց... էտ էլ տարուեցիր. դուքանիդ ապրանքը
թագաղան տարուցիր:

ԱՊԱԶՈՑՈՎ

Բան չ'կայ, զրանով չես վախեցնիլ: Ինչպէս տար-
վեցի, էնպէս էլ կարող եմ տանիլ: Բաժանիր:

ԱՊԱԲԵԳ

Հմի՞ընչե վրայ ես հաշում: Այ տղայ գինի բեր: (Ա-
շակերտը բերում է նոր շեշ. Աշակերտը բաժանում է):

2

Կա՛ց, կա՛ց... էն թուղթը ո՞րտեղից քցեցիք:

1

Ինչ թուղթ... ո՞վ ա գցել. երազումի ե՞ս:

3

Տարուել ա, չգիտի ինչ անի:

2

Կ'տարուեմ: բա ինչ կանեմ: որ բանց կանօնից
դուս բան էք բանում:

1

ԷՇԱՋ... ինչ ես փշում... ինչ թուղթ, ինչ բան:

2

Հմի աչքներդ կոխե՞մ... բա էս ինչ ա:

3

Տօ էտ գու չդրեցիր: զահսայ: Քոռ ի՞:

2

Հը:

3

Չո՞ւ... ինքդ չքցեցիր: Հմի մեղ վերայ ես քցո՞ւմ:

1

ԶԵ՞՞ էլ եդ տարուել ա: (Խաղում էն և խմում):

ԱՂԱԲԵԳԻ

Դէ ասա. Թուղթը բաժանեցի, ամա հլա չասեցիր ինչի վերայ ես խաղում:

ԱՂԱՋՈՏՈՎ

Էս անգամ էլ խանութիւն եմ մէջ դնում. (ՀԵՐՄԱՆԻ
Է ԼԵԱԿԵԼ) խաղա:

ԱՂԱԲԵԳԻ

Ախար էդ խանութ ես ասում, ինչ ես ասում, մենակ քունը չի, է՛:

ԱՂԱՋՈՏՈՎ

Ես քեզ ասում եմ խաղա, խաղա՛. քե՞զ ինչ թէ
մէնակ իմ չի. ես իմ մասս եմ դնում: Արի տեսնենք
ինչ ես գալիս: Թուղթդր զցիր: (Խաղում էն և խմում):

Յ Վերջացնելով խաղը

ՀԸ, էլ տարուեցի՞ւն

1

Հոգին էլ չի դուս գալ:

2

Իմ Փոքին խի ա գուս գալիս. Թէ էս փողատիրոնչ
Փոքին ես ասում, վաղուց ա գուս էկէլ (ԷՊԺԱՆՈՒՄ է
ՊՊՐԱ-ՊԾԸ):

Յ

Նրա հոգին էն վախար դուս էկաւ, երբ մենք
էն քշերը շալակներս տռզայրած նրա տանից դուս
էկանք:

1

Բայց ափսոս որ էս քշերվանը չ'կարացինք Փըր-
սանդը զցել:

2

Ախարէր. Մարախին մի ասիլ, մի օխտը տականի սա-
տանայ ասա:

Յ

Ղորդ էդ ոնց էլաւ, որ ձեր փախչին ու քամակ-
ներիցդ թրիկոց բանձրանալը մին էլաւ:

1

Ա. ախար ոնց էլաւ. Մուկուչին կանգնացրեցինք
քուչի էս բերնումը. կարօին էլ էն ծերումը՝ ղա-
րառուլ քաշեն: Ես ու սա լինգը տուինք՝ ձեռաց քու-
չի դուռը կրնգահան էլաւ: Կամանց վերև ծլկուե-
ցինք:

Յ

Եննա՞ն
1
Եննա էլ էն ա որ՝ մեզ հետ մի քիչ մեղք էին վե-
կալել, որ...

Յ, նորա խօսքը կորելով:

Մեղքը ընչի հմար, տ՛օ, ուտելո՞ւ:

1

Ուտիլս որն ա. ինչս ասում: Էդ թաւուր բաները
քու խելքի բան չեն: Ա. ասեմ. բարձրացանք վերև,
մեր տարած մեղքը քսեցինք, մի մենծ թղթի վրայ,
կպցրինք ակուշկի ներքի շուշիցն ու կամանց, դմբզով
տուեցինք, շուշէն փշրուեց ու ձեն չ'հանեց: Դէ, մեր
տղայ, էլ ո՞ր օրուայ հմար ես. էլ ընչին ես սպա-
սում: ձեռդ կոխի ու չանգալը դուս քցի: Ըտենց էլ
հասկացի վերի չանգալը՝ ու քեզ բաց ակուշկից նեք-
սե քցի:

Յ

իննա՞... սա էլ հետդ է՞ր, թէ մենակ դու մտար:

Զ

զ՛չ... ես որ չեմ սա լնչի՞ ա պէտք:

1

Կտոր — կտոր՝ (Յ - սլիքային): Դու չես իմանում, որ էդպէս տեղը մենակի բան չի՞ Գէվսին էլ բալկոնումը կանացրինք՝ որ աչքերը ըսրս պահի, անկաջներն էլքասնը ըսրս:

Յ

Ադա էդ ինչ մազալու բան ա: Իննա՞:

1

Եննա ես ու սա մտանք մեկել օթախը: Այմա բայց, ախըր, դէ մեղ Մարտինի օթախն էր պէտք: Դռանը մօտեցանք — փակ չէր, ետ արած էր ինչ կանես որ, հենց իմանաս քամակից մի բան դէմ ընկած էր:

Յ

Իննա՞... եննա՞

I

Մին էլ որ հուպ տուեցի... բեղափիլ... ինչ ես կարծում:

Յ

Ինչ, ինչ էլաւ. — Մարտինը զարթնեցի:

I

Բանն էլ հենց դրանումն ա է: Մի բան շըլպա- պաց գետնին, մի արախսկ տրուխսկ բարձրացաւ, մի զընդոց ու ջարդուփշուր ընելու ձէն վեր էլաւ, որ...

մեռած մարդ ըլնէր՝ վեր կ'թռչէր տեղից: Ալբէսալը Մարտինը զարթնեց ու ուկօլը մին... էրկու՝ մեր եննուցը:

Յ

Բա գո՞ք:

I

Մենք... էլ ինչ ֆախիր ոնց կ'փախչես... էլ ո՞վ նարպիվանի մտիկ կտայ. մեզ շպատեցինք բալկնից քուչէն:

Յ

Լաւ էր որ բանձր չէր, թէ չէ ոտ ու գլուխներս խրգուխուշուր կլէր, հլա ով գիտի տեղն ու տեղը մը- նայինք:

Յ

Եննա՞... եննա՞

I

Էլ ինչ եննա՞: Նոր ընկեր, հարեւան, տանտէր... ձէնու-ձունից վերկացան... ամա բայց ուշ էր Մենք որտեղ էինք հա՞:

Յ

Խսդյն գնացինք ընսակը գիտե՛ս, էլլի:

Յ

Խօսք կայ: Ամա լաւ էք պրծել: Ընչի՞ համար էիք գնացել նրա տունը, գողութէնի:

Յ

Թէ կ'յաջ դեր, մենք գիտէինք թէ ինչ կանէինք:

3

ինչ ա, բան ա արել: Նա լաւ տղայ ա էրեռմ:

1

Լաւ ա, լաւ չի, ինչ արած, (յոյց պալով) որ Ա-
ղազատովն ասեց:

3

Հա՛մ թէ որ ասել ա, ըտուր խօսք չունեմ: Ես էլ
էսօր առաւօտենց մէկի ջէրը... գիտէք էլի... եռե-
սուն օխտ մանէթ փող կտր:

1

Գէ որ էդպէ՛ս ա, (յոյց պալով): Այս տղայ, զի՞նի
բեր, շուտ արա, շուտ, զի՞նի... շուտ հա, շուտ: Ինչ
էլոր է՛: Քեզ չեմ ասո՞ւմ:

ԱՇԽԱԵՐԸ, ներս վագերով շիշով:

Բերում եմ, բերում, էլի: Բուք ու բօրանը հօ ձեզ
չտարաւ: Ես էլ էլաւ հինգ բութիլ:

1. խիելով նորա զիսին:

Զէնդ... (Կա գնում է քո կենացը: Աստուած միշտ
քեզ ձեռքից էդպէս թեթև պահի: Ուրախ կաց, ը-
տենց արհեստ օչով չունի:

ՉԵ, 1-ին:

Այ թեթև ձեռք... քանի աչքս բաց եմ արել
քեռ հալա էդպէս ձեռք չեմ անել: Քու կենացը
(Կա գնում են Յարիկոյի կանոյը):

3

Ինչ էք ասում: մէկէլ օրը չէ՞ր որ էն ասի մեհ-
ձաւորի սհաթն ու ոսկէ զնջելը օրը ցերեկով թըրո-
ցըրի: Աննա որ տարանք խժուցինք հա՛: Մի բան
աչքովս չնկնի, որ լնկաւ էլ ձեռքիցս չի պլծնիլ
արևէին կացէք.— ձեզ յայտնի ա էլի: Շնորհակալ
եմ Որտեղ գնաք Աստուած բաններդ աջողի: (Խճա-
է: Աժուամ էն նորէն և կտմաց յայտնի խօսում են և խճա-
մ):

ԱՊԱԲԷԳ

Տեսա՞ր, ես քեզ ասում եմ մի հաղա տե՛ս, էլի
տարուեցիր:— Դուքանդ էլ գնաց:

ԱՊԱՑԱՏՈՎ,

Ես տեսակ բաղզը անիծուի հա՛:
ԱՊԱԲԷԳ

Հերիք ա, վեկենանք:

ԱՊԱՑԱՏՈՎ, կատաղած:

Ինչ ես խօսում, մինչեւ վերջին թելս պէտք է գլ-
նամ: Նստիր, նստիր թէ ոչ...

ԱՊԱԲԷԳ

Համեցէք, պատրաստ եմ: Հմի՞ ինչդ ես մէջ զը-
նում, ասա տենենք:

ԱՊԱՑԱՏՈՎ,

Հիմայ... հիմայ... Ես զիւղում ունիցած տունս, որ
արժի ամենաքիչը երկու հաղար մանէթ: զէ, բա-
ժանիր, շուտ արա:

ԱՂԱԲԵԴ
Կի եղ ես բաժանեմ:

ԱՂԱԶԱՏՈՎ

Հա, հա, բաժանիր... երբ որ ես եմ բաժանում,
միշտ տարվում եմ:

ԱՂԱԲԵԴ

Աչքիս վրայ: Քու ազեզ խաթէր հմար: (Բաժանում
է շաբ արտգ):

ՏԵՍԻԼ Բ

ՆՈՅՆՔ և ՖԱԲՐԻԿԱՑԻ ԱՇԱԿԵՐԸ

ՖԱԲՐԻԿԱՑԻ ԱՇԱԿԵՐԸ, Աղազատովին:

Աղա, մի քանի մանեթ փող տուր: Ամիսը վաղուց
աթամամե մի կապէկ չեմ ստացէ:

ԱՂԱԶԱՏՈՎ, չնայելով նորան:

Սպասիր, սպասիր. այ, ձեզ համար եմ խաղում:
հէնց տարայ թէ չէ, իսկոյն փողներդ կ'տամ:

ՖԱԲՐԻԿԱՑԻ ԱՇԱԿԵՐԸ

Ախար...

ԱՂԱԶԱՏՈՎ, դառնալով որիկաներին:

Տօ դուրս արեք է՛: Ինչո՞ւ էք էսպէսներին ներս
թողնում: (Սրիները բարը են ոնում քաբիկայի ոշո-
հերտին, իո՞ւ Աշբեգը և Աշտարակը ոչում են խոշը):

ՏԵՍԻԼ Գ

ՆՈՅՆՔ, ԱՌԱՑ ՖԱԲՐԻԿԱՑԻ ԱՇԱԿԵՐԸ

I, ածելով բաժակ:

Խմենք խմենք. էս էլ մեր բարեգործական իսրի
կենացը:

2 և 3, նոյնպէս և ծիծաղելով:

Խմենք, խմենք. էտ շատ լաւ ասեցիր: (Բաժանէ ները
չընէայնում էն):

I

Ընչի՞ էք ծիծաղում: սուտ եմ ասո՞ւմի Բա Ասո-
ված կ'վերցնի որ մէկն էնքան ունենայ, փողի հա-
մար տեղ չ'գտնի, մէկելը ցամաք հացի զին էլ չը-
ունենայ: Բա մենք ապրելու հմար չենք ստեղծու՞մք:
Տենո՞ւմ էք՝ գառը զիլի հմար ա: Գիլի ատամները
գառի օսկոռները փշելու հմար ա սրուած: - Էնպէս
չի՞:

2 և 3

Հալըաթ որ:

I

Դրա հմար էլ մենք էլ մեր գիտեցածն ենք ա-
նում, որ ապրենք, գլխներս պահենք: Են ջուալներով
ոսկի զիզըներին էլ հասկացնենք թէ դուք քեասի-

ՏԵՍԻԼ Դ

ՆՈՅՆԻ և 4 ՄՐԿԱՑ

4

Տղեք, որ ասումի ես էլ կարամ ջեր կորի՞—չէ-
իք հաւատո՞ւմ.—տեսէք ինչ եմ արել:

1, 2 և 3

Ինչ ա որ՝ ինչ ես արել:

4

Այ ասեմ. գնացի մեյդանը—ղանթարի տակը.—
ջերիս մնխելու կապէկ չկար:

1, 2 և 3

Հը, ինչ արեցիր, դու էն ասա:

4

Տեսնեմ էն Նիկօլի ինչ ա:

3

Ինչ պտուղի ես ռաստ էկել: Էն հարուստի հը-
մար չես ասո՞ւմ:

4

Հա, նա: Տեսնեմ ընդէ ման էր գալիս: Ուրթուկի
ետեի ջերը ուռած տոզած էր,—զնզզնդում էլ էր:
Ավաշճայ մօտացայ ու մլրասս հանեցի ու... մըկ-
րաս հանելուս ու՝ սերթուկի ջերը ձեռքս ընկնելը
մին էլաւ... ախմախը ըսկի զլսի չնկաւ: Հրէս, այ...
(Գրադանի լովել), էլ չասէք թէ ձեռքիցս բան չէ
գալի—բաշարմազ եմ:

բի արինն էք ծծում. Աստօծ էլ մեղ ստեղծել ա-
ձեր աչքը հանելու: Էս բարեգործութիւն չի բա-
ինչ քար ու քացախ ա:

2

Բաս որ ըտենց ա, հեղջերին ընչե ենք սաթաշ-
միշ ըլլում:

3

ԷՇԵՐ, բանը շատ չեն երկարացնի. կեցցէնք
մենք: (Խմբամ էն):

Տղեք, ածելով բաժակը:

Տղեք, մի կենաց էլ ես ասեմ:

1

Համեցէք:

2

Էս էլ խմենք... էս էլ... էս էլ խմենք մեր...
ըըը... գիտէր ընչե հմար... էս էլ խմենք (Հրայ չէ
գուշ, շուր շուր լուսէն իուշ է պալիս):

3

Հոգիներս հանեցիր քու ոէս էլ, էս էլովը.— ա-
սա ու պլծի էլի:

3

Կացէք է՛, վա՛... էս էլ խմենք (Խմբամ իուշ պալու)
էս էլ... (Վաղելուն նէրս է Տղամամ 4-որինա):

3

Քանց ջերն իր կարում, հազիր ձեռքով հանեիր
էլի:

1 և 2

Դէ, դէ, մի տեսնենք: Առաջին դատումի մերն ա:
(Միւս սէնեաչ): Այ տղայ, դինի: (4-սրբիան հանում է
գրպանից գողացածը և անում է բանալ, ասեցաւ ուկի
ա եա էրծաթ: Իսէ մեսները ուշարաւլեամբ նայում էն:
Բայց ինչ ծիծալ, երբ ամենում պէսնում էն, որ խորրոքած
ասէլների և աղոնիների մանր կարբուր էն: Երեսով էլ 4-ի գը լ-
լին լոփելով, մը մը բահիացայ պալով, ծիծալում էն և ա-
ռում) Ը՛, զմութորուա:

ԱՊԱԲԵԳ, տղերքին:

Ինչ ա, ինչ խաբար ա:

ԱՊԱԶԱՏՈՎ, Աղարեղին:

Տօ արի է... Տղերք են հանաք են անում: Գու քո
թուղթու արի: (Խաղում էն):

2, 4 սրիկայի վերայ ծիծաղալով

Ջէր ա կարել, ջէր. Փողը հալիդ:

3

Էն էլ ո՞ւմ—Նիկոլի:

4, կոտրուած:

Ես ինչ էի իմանում է:

3

Տեսա՞ր որ քու րանը չի: Եղակն կծիծաղան վը-
րէդ համ:

ՏԵՍԻԼ Ե

ՆԹԵՆՔ, և ՅՈՎԱԿԻՄՈՎ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, աշակերտին ասելով զէափ միս մենեակը:

Ախար նոր մեր Փարբիկի աշակերտն ասեց, որ էս-
տեղ է: (Տէսնելով Աշողատովին և առանցին): Այ որ-
տեղ է սա թուղթ խաղում:

ԱՊԱԲԵԳ:

Տեսա՞ր, էլի տարուեցիր... Տեսնում ես՝ էսօր էլ
քեզ չի գալի:

ԱՊԱԶԱՏՈՎ, Խմոր է գինի և չէ նայում Յովակիմովին:

Բաժանիր. մեկ էլ բաժանիր... Ֆարբիկէս եմ մեջ
գնում:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, զարմացած, առանձին:

Ինչպէս. Փարբիկէն... բանը հասել է Փարբի-
կնո՞ւ:

ԱՊԱԲԵԳ:

Այ տղայ, մի՛ գժուիլ, խելքդ գլուխդ հաւաքի:

1-ը 3-ին:

Աբա մի սրա ջէրերը ծանդը ու թեթև արա:
(3-սրբիան հօպենում է Յովակիմովի եղինյոց՝ ծածուի՝ և նո-
յում է նորա գրպանները: Անսնելով որ նորա աջ գրպանում բան
է երեսում, իսկոյն մըրուը հանում է և է իմրում գըր-
դունը, որը յափշտակուած Աշողատովին զարմունքով, ոչ ինչ չէ
նիստում: Այս այսպէս գործ լում է իսէ Աշողատովին և Աշո-
ղատովի խոսուցաւելինը իւր իորդով շարունակութամբ է):

ԱՂԱԶԱՏՈՎ

Ես քեզ ասում եմ Փաբրիկէս եմ մէջ դնում
էլ ինչ ես իրասներ տալիս:

ԱՂԱԲԻԳ

Այ տղայ, ախար տաքացի ես, չե՞ս հասկանում
քու արածը: Արի հիմ թողանք, թէ ուզում ես՝ մի
էրկու սհաթից—բաշ ուստա—էլի գանք:

ԱՂԱԶԱՏՈՎ

Խաղում ես խաղա, թէ ոչ գիւլէն ճակատիդ...
ես քեզ ասում եմ Փաբրիկէս եմ մէջ դնում

ՅՈՎԱԿԻՄՈՎ, յառաջ գալով

Էդ ո՞մ Փաբրիկէն ես մէջ դնում, Աղազատով:
(Աշողառովը և Աշողէգը պէսնելով՝ նորո՞ն՝ ստոռո՞մ են և
հողովո՞մ):

Յ-Ե, դրանը կտրելոց յետոյ

Ցղի՞րք, գնանք: Թուղթ փող ա էրկում և շատու
գնանք... (Սրինենը յուժուակուոծ այսդինի տուրից մէջ
մէջ բառը են գնամ):

ՏԵՍԻԼ Զ

ՆՈՅՆՔ, առանց ՍՐԻԿԱՆԵՐԻ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ինչ ես շշմել, Աղազատով: ասուտեսնեմ: Էդ ո՞մ
Փաբրիկէն ես մէջ դնում:

ԱՂԱԶԱՏՈՎ, մոլորուած:

Ես... ես... միք հաւատալ... էդ թշնամու խօս-
քեր...

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ինչ ես խոսում, ինչ թշնամի... ուրեմն էդպէ՞ն
ես վարուել իմ լաւութեանց փոխարէն:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ես... ես...

ՅՈՎԱԿԻՄՈՎ, օգուտ քաղելով նորա դրութինից:

Զայնդ կարիր... հիմայ տե՛ս թէ ես քո գլուխը
ինչ կանեմ:

ԱՂԱԶԱՏՈՎ, ուշքի գալով:

Ինչ... դու ո՞վ ես:

ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Քո աչքդ հանողն եմ: Ո՞մ Փաբրիկէն ես մէջ
դնում Ամեն բան տարուել ես ու հիմայ Փաբրի-
կէն...

ԱՂԱԶԱՏՈՎ, սղաբէզին աչքով անելով:

ԱՂԱԲԻԳ...

ՅՈՎԱԿԻՄՈՎ, իր ամասողի գրանը գրաից տնտղելով:
Վա՛... էստեղ աւազակներ են... ջէ... բըս... (յէս-էլ
խոխոմ է գրանը, շըս-է ու կատարուշի փեշը և պէսնում
է փեշի պահից ի-ը հինգ հատը): Այ քեզ բա՞ն... (Աշո-
ղառովը): Փողու... փողերու... 1100 մանեթու: Ես
ձեզանից կ'պահանջեմ... ջէբս կտրեցին:

ԱՂԱԶԱՏՈՎ, Աղարէզին առանձին:

Ել սրան դուրս թողնել չե կարելի: Տղերքը իրանց
բանը տեսել են: Տուր ինձ խանչաղդ, ուկօլվերս ձեն
կ'հանի: (Վերջնում է Աշոբէգից իրանչուց և ընդումում է
Յովովենուի եպեկց, որը հաղիւ հարողանում է իրան դուրս
գցել):

ՏԵՍԻԼ Է

ԱՂԱԶԱՏՈՎ, և ԱՂԱԲԵԳ

ԱՂԱԲԵԳ

Աղազատով, սրանից լաւ հոտ չե գալիս: Փախ-
ընք:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ինչ ես ասում, նա իմ զարքը տեսաւ, կ'վախենայ
և ոչինչ չե կարող անել. Նստիր խաղանք... Յաբրի-
կէն եմ մէջ դնում:

ԱՂԱԲԵԳ

Ինչ ես խօսում: Դուզ կեթայ պօլեցէն. Հրէս
չե: Գլխներիս ճարն անենք: Ախար ես քեզ չեի ա-
սո՞ւմ: աչքերդ կարմրել առ չես հասկանում ինչ
ես պնում: (Կամենում է գնալ):

ԱՂԱԶԱՏՈՎ

Ո՞ւր ես գնում: Ինչ ես խօսում: Ելած — չելածա
տարար... Նստիր խաղանք:

ԱՂԱԲԵԳ

Այ տղայ, գժուել ե՞ս: Հասկանում ես արածդ թէ չե:

ԱՂԱԶԱՏՈՎ

Ես քեզ ասում եմ, որ նա իմ դէմ ոչինչ չե կա-
րող անել նա ինձ լաւ է ճանաչում: Նստիր թէ չէ
էս օրուայ լշուը չես տեսնիլ:

ԱՂԱԲԵԳ, նրան մղելով:

Տօ դէ զլսից հեռացիր է: Ես քեզ համար—
խօմ զլուխս տանուլ չեմ տայ: (Դռոր է լուսում):

ԱՂԱԶԱՏՈՎ, նորա յետից:

Ես քո հոգին կ'հանեմ: Ո՞ւր ես փախչում: (Համե-
նում է յետեկց գնալ բոյց Աշոբէգը որդողապատ յեփ գո-
րով շոր պինդ էղչում են իրար դուռն մէջ):

ԱՂԱԲԵԳ, ներս գալով:

Տեսա՞ր, տունս քանդեցիր: Պօլեցէն դուռը կտրել
ա: Ո՞ւր փախչե՞նք:

ԱՂԱԶԱՏՈՎ

Պօլեցէն: Էղպէս բան չե լինիլ...

ԱՂԱԲԵԳ, ջղային:

Ուր փախչե՞նք:

ՏԵՍԻԼ Ը

Նոթա, և Պօլեթեսկանսեր և Յովովակիւրով

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Այ, սրանք են:

ՊՐԻՍՏԱԻ

Բռնեցէք սրանց: Բռնեցէք զինետան տիրոջն էլ,
աշակերտին էլ և զինետունը փէչատելու պատրաս-
տութիւն աեսէք: (Աշոպատովլին դռնում էն):

ԱՂԱԶԱՏՈՎ, բռնուած և քեմի խորքում շուր գալով:

Ցո՛վակիմով, քեզ Ճանապարհներ ցոյց տուողը, իւ
լա համար մի՛շտ Ճանապարհ կ'գանի: Դու քեզա-
նից զգոյշ կաց:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, հանդիսականաց:

Տեմնում էք ինչ նեռի ձեռք ընկանք:

Ա արտադոց:

ՏԵՍԱՐԱՆ VI

ԱՐԺԱՆԻ ՎԱՐՉ ԵՒ ՁՐԿԱՆՅԻ ԶՈՅ

Տեսարանը ներկայացնում է Յովա-
կիմովի պարտիզե խորքը, ինչպէս եր-
կրորդ տեսարանի մէջ:

ՏԵՍԻԼ Ա.
ՅՈՎԱԿԻՄՈՎ, և ԺՈՐԾ

ԺՈՐԾ

Այո, ես այդ բանը այսօր առաւօտը լսեցի:
ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Լա՛ փեսացու ես, երկու օր է անցել և դու
նոր ես տեղեկանում:

ԺՈՐԾ

Ասում էք ո՞չքան փող է եղել ձեր ձեռքին:
ՅՈՎԱԿԻՄՈՎ.

Ութ հազար մանէթ: Բոլորն էլ հարիւրանոցներ:
ԺՈՐԾ, զարմացած:

Ինչ էք ասում: Ապա ինչպէս իմացան, որ այդ-

քան փող ունէք ձեր գրապանում։ և ինչպէս կտրեցին ձեր գրապանը, որ չիմացաք։
ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ո՞վ է հասկանում։ մեր ջէք կարողները Մօսկովի ժուլիկներից էլ անց կացան։
ԺՈՐԾ, հետաքրքրութեամբ։
Աղազատովը կարեց։

ՅՈՎԱԿԻՄԹԳՎ.
Զէ՛, միւսներ... թէպէտ քննիչին, ասել եմ որ նա կարեց։

ԺՈՐԾ
Այդպէս էլ հարկաւոր էր։ Ովքե՞ր էին, չիմացաք։

ՅՈՎԱԿԻՄՈՎ
Ո՞վ էր նրանց վրայ ուշք դարձնում։ Հէնց մոռայթէ ոչ, որ Փարբիկի անունը լսեցի... որ ոտս էլ կարէին չէի լմանալ։

ԺՈՐԾ
Այ բա՛ն. Օ՛օ՛... ես այդ գործը պիտի պաշտպանեմ. անպատճառ կ'պաշտպանեմ, և եթէ ևս նուրան սիրիր չուղարկել տամ' կ'աէմնէք։ Եթէ կատորք քայլութիւն չունէք ձեր գրապանում փող պահել։

ՅՈՎԱԿԻՄՈՎ
Քե՛զ աեմնենք։
ԺՈՐԾ
Այդ փողերը ո՞րտեղից էին ձեզ. դուք կարծեմ, առվորութիւն չունէք ձեր գրապանում փող պահել։

ՅՈՎԱԿԻՄՈՎ
Հա՛, բայց... խանութիցս վելցրեցի որ տուն բերեմ։

ԺՈՐԾ
Բայց դուք տանը փող չէք պահում. այն էլ այդպիսի մէծ գումար։

ՅՈՎԱԿԻՄՈՎ
Քեզանից ինչ պահեմ. դու էլ իմ փեսայացուս ես, իմ որդիս ես. 8000 չէր. ջերիս էլած-չելածը 1100 մանէթ էր. Մօսկով էի ուզում ուղարկել։ Ես գիտութեամբ եմ էդպէս ասել քննիչին, հասկանում ես։

ԺՈՐԾ
Ոխ, ի հարկէ... և այդպէս էլ պիտի ասէիք. բայց մի բան էլ հարցնեմ. որովհետեւ մի մարդ որ պաշտպանի այդպիսի մի գժուար գործ, պիտի...
ՅՈՎԱԿԻՄՈՎ, անհամբերութեամբ։

Հա, ինչ ես հարցանում։ ասա, ասեմ։
ԺՈՐԾ
... Պիտի ամեն բան էլ իմանայ. Օ՛օ՛... Ես նըրա հոգին կ'հանեմ։

ՅՈՎԱԿԻՄՈՎ
Ասու տեսնեմ, ինչ ես ուզում իմանաս։
ԺՈՐԾ
Դուք որ գնացիք այն զինետունը՝ ինչո՞ւ համար գնացիք։

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Այ տղայ, բաս չես հասկանո՞ւմ. երբ որ Ստեփանիկը ատրճանակը գէմ արեց սրտիս և ստիպեց, որ թուղթ տամիքան՝ թէ տպարանի երկու դլուխն էլ ծախեցի իրան և փողը լիովին ստացայ. իսկոյն մի բան միտքս լնկաւ. էղ բանն էլ էն էր որ՝ երբ բարկացած է լինում շատ անգամ չի հասկանում իրարածը, մինչեւ անգամը և տեսածը. հէնց դա էր պատճառը որ՝ թուղթը գրեցի, բայց տպարանի անունը մէջը չգտեցի, թէև նրա մօտ կարդացի ինչպէս որ հարկաւորն էր. սրանից յետոյ նա թուղթն առաւ և ինձ բաց թողեց. Ես էլ տպարանից իսկոյն վազեցին էն փշացած Աղազատովին դժնելու... հասկանո՞ւմ ես:

ԺՈՐԺ

Այո, այո, շարունակեցէք:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ես կողմ, էն կողմ լնկայ, մարդիկ ուզարկեցի ետեկից չ'գտայ. միւս օրը մեր Փաբրիկի աշտկերտը պատահեց, հարցրեցի, ասեց նէս ինչ տեղն է՛ ես էլ իսկոյն վազեցի գինետունը. գինետան աշակերտը չէր թողնում ինձ, բայց զօրով մոտայ: Յետոյ...

ԺՈՐԺ

Լա՛ւ, լա՛ւ, հիմայ հասկացայ. և դուք գնացիք Աղազատովի մօտ, որ նորան իմաց անէիք և խորհուրդ հարցնէիք այդ ձեր նոր թուղթը ջըելու մասին:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ոպա, ապա. թէ չէ ինչ ցաւս էր մանէի գինետուն: Զարը բարուն հակառակ էն փողը ջերեցս էլլա չ'հանեցի, ո՛չ խանութում, ո՛չ էլ տանը:

ԺՈՐԺ

Դուք պիտի ի՞նձ դիմած լինէիք... բայց ոչինչ. այդ թուղթն էլ կ'ջրեմ: Ստեփանիկը իմ գէմ ոչինչ չէ կարող անել: Ես նորան... ես... Ուրեմն, ինչպէս առաջ պատմեցիք, ձեր լնկերութեան պայմանը խլեցիք նորանից և ձղեցիք:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ոպա կ'թողնե՞մ:

ԺՈՐԺ

Օօօ... ԵՅ կատորրոջնայ работы... Նորանք երկուսն էլ ձեզ ոչինչ չեն կարող անել: Ես այդ երկու գործն էլ կ'պաշտպանեմ: Միամիտ կացէք: Ես... (Տան է գալիս շատ շատ և մասնաւ է):

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ի հարկէ ոչինչ չեն կարող անելո բայց Աղազատովի արարմունքը ինձ սպանեց: Ես ոչ մի ժամանակ չեմ կարող մոռանալ: Եւ դիտե՞ն. եթէ մի փոնակ չեմ կարող մոռանալ: Եւ դիտե՞ն. եթէ մի փոնակ մնայի... վերջացած էր ամեն բան. իրաքը էլլա մնայի... վերջացած էր ամեն բան. իրաքը աշքով արեցին, փնտինթացին, խանչալը Աղաբէգի ձեռից վեր առաւ ու... ես ինձ հազիւ հազ դուրս գցեցի: Մի քիչ էլ ուշանայի, ինձ կտոր կտոր կը անէին:

ФИРМЫ

Այ, այ, այ... զէ՛, անպատճառ հարկաւոր է սիրիք
ուղարկել տալ. ԵՅ կատօրրօջինայ работы. (Ման է
գուշի չեաւելը չափ ու չեւ անելով օդի մէջ, ե՞ր տափառի
տառը խօսում է): Տեսէք, ո՞րպիսի փաստերով
որան կ'բռնեմ Ես կասեմ մեծապատիւ և անաշառ
գատաւոր, և յետոյ կ'դառնամ հանդիսականներին,
կասեմ... և յարգելի հանդիսականներ... Եթէ այս
գործը վելցնենք... և քննենք տէրունական... անա-
շառ սկզբունքներով... և... իւրիգիքական խորամիտ
և արդար... կանոններով, կասեմ... կ'բացուի մեր
առաջ... այն անհանգչելի վառ... երեակայութեան
գաղափարները, կասեմ. (այսաեղ անպատճառ ինձ կը-
ծափահարեն),... և ամենիս կ'բացատրուի գործնական...
իրականութիւնները Աղազատովի... (Միջոյ): Աղա-
զատովը, կասեմ, օգուտ քաղելով Նիկիտ Եսկուլիչ...
քաղցր... առանձնական համակրութիւնները... և
Ստեփանիկը...

ՅՈՎԱԿԻՄՈՎ, բնողմիջելով ճառը:

Աղազատովին և Ստեփանիկի գործերը միանդամից
պէտք է պաշտպանեն:

ФОРМ

Ալս չէ... ի հարկէ, ի հարկէ... երկուան էլ մի-
ասին... բայց չէ. հիմայ կերթամ և դորա համար
կմտածեմ: Այս, տեսնո՞ւմ էք, դեռ այստեղ այսպէս
եմ ասում պաշտպանողական ճառսու իսկ դատաստա-

Stuhl F

ՅՈՎԱԿԻՄՈՎ, միայն:

Խելքս սրանից բան չկ կտրում, բայց ո՞վ գիտի,
երեկ մի հունար ունի: (Միջայ. Տառ է Գողթի):
Ախշ խշ... ես ինչպէս տարուել էր էդ աւազա-
կին է՛... (Միջայ): Աշխարքը գոռում էր թէ Աղա-
զատովը է՛ս է անում, է՛ն է անում: չէի հաւա-
տում է՛լի, քոռացել էի է՛լի... (Ճակատին Խելքը):
Ախմախ, ախմախ... ախար ո՞ւր ես առաջ քաշում
զլանց է՛... ախար ինչի՞ ես թողնում որ շոնչ քա-
շեն գլանք է՛... էդ զանազան Աղազատովներն ու
Ստեփանիկներն է՛: Դրանք լաւութին հասկացողներ
են... զէ՛. էս է՛լ ինձ համար լաւ փորձ էր. սրբա-
նից յետոյ տեսէք. ում վրայ որ իրաւունք ունենամ,
ամենքին էլ պէտք է մաշեմ, հոգինելը շուշի մէջ

պէտք է բռնեմ, արիւն արտասո՞ւք պէտք է լացացընեմ, մրջինի պէ՛ս (յոյ առշրջել չեւ) պէտք է կըխճորեմ ու տրորեմ, քանի ինձանում ոյժ ու զօրութիւն կայ. թէ չէ... Ըհը (Առենալով) Սաեփանի՞ղը... պէտք է զգուշացած սրանից: (Կամենալով հետանով):

ՏԵՍԻԼ Գ

ՍՏԵՓԱՆԻԿ, ներս է մտնում դռնատ, բայց խեղճ:

Բարեւ ձեզ, Նիկիտ Եակուլիչ: (Շբոտում է նորապաղը բանել իւ արգելել նորո գնողը): Սպասեցէք, միշտապէք խնդրեմ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, շփոթուած:

Հ՞ը, էլ ինչ ես եկել էստեղ.. էլ ինչ չարութիւն է մոքումդ ծագել:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ես եկել եմ վերջին անգամ ևս խնդրել ձեզանից:

ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Ի՞նչ.. էլ ինչ ես խնդրում

ՍՏԵՓԱՆԻԿ

Ի՞նչ պիտի խնդրեմ Զեղյայտնի է շատ լաւ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Հ՞ը:

ՍՏԵՓԱՆԻԿ

Հիմա ձեզ պարզ յայտնի է, Նիկիտ Եակուլիչ, թէ ինչպէս է վարուել ձեր զէմ Աղազատովը, իսկ ես...

ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Հա՛, աղէս, իրարից պակաս չէք:
ՍՏԵՓԱՆԻԿ

Եւ դուք ասում էք այդ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Հա՛. կասեմ և միշտ կասեմ Բայց Աղազատովը ձեռքիցս էլ չի պրծնիլ:

ՍՏԵՓԱՆԻԿ, արհամարհական:

Նա՛:

ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Հա՛. նաև

ՍՏԵՓԱՆԻԿ

Կպրծնի՛, կպրծնի՛, Նիկիտ Եակուլիչ Բայց ես...
ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Կպրծնի՛, ինչպէս

ՍՏԵՓԱՆԻԿ

Գուք ասել էք նորա համար թէ նա է ձեր զըստանը կտրել և 8000 մանէթ գողացել:

ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Հա՛. հէնց էղպէս էլ է:

ՍՏԵՓԱՆԻԿ

Եւ կամեցել է ձեզ սպանել

ՅՈՎԱԿԻՄՈՎ,

Հա՛, հա՛:

ՍՏԵՓԱՆԻԿ

Իսկ քննելուց յետոյ, առաջնորդ ոչ նորա և ոչ միւսների մօտ և ոչ էլ զինետան մէջ չեն գտել և

ոչ մի կոպէկ և շատ ուղեղ փաստերով նա կարող է
ազատուել. նա մանաւանդ հարրած են եղել:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

ԱՂԱՍՊԵԿԻ

ՍՏԵՓԱՆԻԿ

Այս. բայց թողնենք այս խօսակցութիւնը՝ խօ-
սենք մեր գործի համար:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

ՄԵՐ ԳՈՐԾԸ Ո՞՛Ն Է... ԷԼ Ի՞նչ ԳՈՐԾ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Տպարանական:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

ԷԼ Ի՞նչ կայ տպարանական. զօրով էլ ծախել կը
լինի:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ուրեմն հաստատ չէք կամենում ծախել:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

ՉԵՄ ՈՒՂՈՒՄ Է՛Լ, չեմ ուղում:

ՍՏԵՓԱՆԻԿ

ԻՄ մասս գոնէ չէք կամենում տալ ի՞նձ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ի՞նչ մաս, ի՞նչ բան... ի՞նչ ես գլխիցդ դուրս տա-
լիս:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ուրեմն դուք ի՞նձ բոլորովին զրկում էք:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ախար ի՞նչիցդ եմ զրկում. ի՞նչ որ ունես, էնէ ու-
նես. իսկ ի՞նչ որ չունես, էլ ի՞նչ զրկանք:

ՍՏԵՓԱՆԻԿ

Ուրեմն դուք ի՞նձ չէք կամենում ձանաչել, որպէս
իրաւացի տէր տպարանական մասի:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ի՞նչ տէր, ի՞նչ բան... ո՞ւր է քո թուղթով:

ՍՏԵՓԱՆԻԿ, ԽԵՂՃ, բայց թունաւոր:

Ուր է իմ թուղթու... դու խօմ լաւ զիտես ուր
է... ի՞նչ ես կամենում դորանով ասել նիկիտ եա-
կուլից ի՞նչ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Այ տղայ, ի՞նչ ես երեխայ-երեխայ խոսում: Դու
մոռանո՞ւմ ես, որ ատրճանակը դէմ արեցիր սրտիս,
մոռանում ե՞ս: Տեսնում ես, ես էնքան բարի եմ, որ
բանը դատարանի չեմ զցում... տեսնում ես, դու
իմ տանս, իմ պարտէկիս մէջն ես... թէկ ես իրա-
ւոնք ունեմ քեզ տեղն ու տեղդ պարկեցնեմ, բայց
տեսնո՞ւմ ես, որ ես ոչինչ բանի տեղ չեմ դնում քո
արարմունքներդ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Այս, բանի տեղ չես դնում, որովհետեւ 1100
մանէթն էլ, տպարանի ընկերական թուղթն էլ՝ ԽԵ-
ԼԵցիր ի՞նձանից:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

ինչ 1100 մանէթ... ինչ թուղթ... ինչ ես ասում:

ՍՏԵՓԱՆԻԿ, դարմացած:

ինչպէս... ուրեմն 1100 մանէթ ստանալիք էլ ես ուրանում:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Տէր ողորմած Աստուած հաւ: Այ տղայ, երեխայ ես... ինչ 1100 մանէթ: Նահախ շառ է:

ՍՏԵՓԱՆԻԿ

Հաւ: ուրեմն զորանից էլ ես զրկում ինձ... ուրեմն կամենում ես որ իմ ունեցած չունեցածս, վերջապէս իմ և իմ կնօջ վերջին շապիկներն էլ ծախե՞ն:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ինչո՞ւ համար... ո՞վ է ասում... ինչ ես ասում:

ՍՏԵՓԱՆԻԿ, խնդրելով, վերջին յուսահատութեան մէջ:

Նիկիտ, Եակուլիս... խղճա ինձ վերայ, գու էլ որդւոց տէր ես... հասկացիր իմ զրութիւնս... զիտիս որ մեզ մի կտոր հայից անգամ զրկում ես... մի մանիլ իմ ընտանեաց (կցիտո-ը) իմ միակ որդուս արիւնի տակ... ինչո՞ւ ես զիկում այդ ահազին կանձերդ, ինչո՞ւ... ո՞ւմ համար... Միթէ՞ այդ հարստութիւնդ հաւաքել ես իմ պէմների արիւնից... Միթէ՞ մեզպէսների ամեն մի կաթիլ արտասուքը ա-

ւելացնում է քո քսակը ոսկիներով... Դու լոռնմ ես... Միթէ քո խղճանքը չէ ասնձումքեզ... Տուր ինձ գոնէ իմ տուած 1100 մանէթը, որ գոնէ այդ պարտքից թեթևանամ... և ապա գտոն օրս, լուլով անցկացնեմ և նոր աշխատանքով իմ տունս կառավարեմ... թոյլ մի տալ մեռնել իմ անմեղ ընտանիքը... Ես եմ արել քեզ—ինձ միայն զբկիր, ինձ... ինձ մահացրու... բայց ինչո՞ւ ես իմ ընտանեաց (լացով) իմ թոթովուն երեխայիս վերջին նիւթը կտրում... (Միջոց): Ասա՞ է, ասա՞... մի երկու խօսք ասա և ես հանգստանամ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Ախար ինչ ասեմ:

ՍՏԵՓԱՆԻԿ

Իմ տպարանական մասս ինձ վերադարձնելո՞ւ ես թէ ոչ Նիկիտ Եակուլիչ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

Այ տղայ, խենթացել ես, թէ ինչ է... ախար...

ՍՏԵՓԱՆԻԿ

Գոնէ իմ տուած 1100 մանէթը տալու ես, թէ ոչ:

ՅՈՎԱԿԻՄՈՎ, խաչ հանելով:

Տէր ողորմած Աստուած հաւ... Այ տղայ ինչ 1100 մանէթ:



ՍՏԵՓԱՆԻԿԻ, կատաղած:

բնշ 1100 մասնէ՞թ... բնշ 1100 մասնէ՞թ...

ՅՈՎԱԿԻՄՈՎ

ԱՏԵ ՓԱՆԻԿԻ, առաջն առնելով, նոյնպէս:

Ինչ 1100 մանէթ, ասում են:

ՅՈՎԱԿԻՄՈՎ

ξωρί, ήντη η περιοχή

ԱՏԵՓԱՆԻԿ, Նոյնպէս,

Օ՛հ, արդէն բաւական է... (Հանում է Գրտանից առ ըշտանակը (լեւը վէրը) և երբ այդ նշանում է Յաղաքի մակը և ազգական ոգովութիւնը՝ կանչելով պատճռում է Սահմանի առաջեց. Վերջինը արքական է Գնդառից նորս ետեկից և Յաղաքի մակը, աջ է-շիմի ետքում, վայր է ընդնում, որ և, իհարչ է, չելիում հանդիսականություն):

ՏԵՍԱԿԱՆ

ԱՏԵՓԱՆԻԿ, Կառաղած:

Ահա՝ քեզ արժանի վարձ... և ես ազնիւ գործ դժուճեցի. այդպիսիները պիտի ոչնչանան, անյետանան, անկունդն իջնեն... Սոյսա արիւնով ազատեցի ես շատ մարդոց արթները, որ սա ծծում էր, Տրէ

ծում էր և չեր կշանում... (Ուղի գալով և սպառ-
իոժ): Այս ինչ արեցի ես... այս ինչ արեցի ես...
(Սահմալի և յուսահար): Դարձայ, դարձայ մարդա-
սպան... (Ապրձանակը վայր է ընխուս յետից): Դառը
ճակատագիրը հետեւեց ինձ ամեն քայլափոխումն...
(Միջոց. վերին յուսահարանիւմ): Մնաք բարեաւ, դուք
իմ երիտասարդական յօյսեր... մնաք բարեաւ, իմ
քաղցր երևակայութիւններ... մնաս բարեաւ, և
դու, իմ հոգեկան անդորրութիւնն... որովհետեւ իմ
խորտակուած կեանքս բնութեան կարճատե ալիք-
ներում այլ ևս հանդիսաւ ունենալու չէ .. Դնա՛, գնա՛
ոձրագործ, յանձնիր քեզ արդ արագատութեանը:
(Դժուարութեամբ և պատճենակ գնա՞մ է):

Վարդապետ:


469



Մեղանից անկախ և միանդամայն յարգելի պատճառություն մէջ զգացաբար ներս են մասել բազմաթիւ սխալներ, որոնք թէպէտ չեն փոխում իմաստը, բայց մեծ և աններելի զեղծմանք են ուղղագրական կանոնների դէմ։ Խնդրելով այդ մասին ընթերցողաց քաղցր ներողամասութիւնը, պարագ ենք համարում մատնացոյց անել նորանցից մի քանիսի վերայ:

ԱԽՈՂՆ	ՈՒՂԻՔ
1 եր 5 առող . զից պատկիրով	զից տեսաբանով.
19 - 3 - . բայց	բայց
25 - 20 - . եղբայրս	եղբայր
42 - 18 - . ՏԵՍՈՒՆ. Զ.	ՏԵՍՈՒՆ. ՁՔ
99 - 16 - . թըթախաղը :	թզթախաղը
103 - 10 - . չենմենք	անենմենք
125 - 6 - . տարուցիր	տարուցիր
127 16 - . մեղը կին տարել	մեղը կինք տարել
131 - 23 - . Նս զիւզում	նմ զիւզում
134 - 21 - . Յ	Յ
135 - 22 - . հանելուս	հանելու.

Այսուհետեւ կանոնադրութեան մասին պատճենը առաջանաւ է այս օրու վեցական ամսագրութեան մեջ:



913

18371

2013

